

ISSN 1829-2003

# ՎԱՐԴԶԿ




ՀԱՅԿԱԿԱՆ ՏԿՐԱԾՐՄԱՑՈՒԹՅՈՒՆԻ ՌԱՍՏԻՄԱԿԱՆԻՐՈՐԴ ՊԻԽՆԱԳՐԱԿԱՆ  
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK  
DUTY OF SOUL

№ 14

2020



Րաֆֆի Թողրոցյան  
ԻՆՉ ԵՆ ԹԱՎԵՍՈՒՄ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԴԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒԾԱԳՅԱՆՆԵՐԻ  
ԹՈՒՐՅԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ



Եզ 1

Սամվել Կյվագյան  
ՓԻՐՈՒՄԱՅԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ  
ԲԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ



Եզ 10

Սամվել Կյարաղյան  
«ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՂԱՔ ԱՆԻ»  
ԳՐՅԻ ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Եզ 18

Արեն Թամրազյան  
ՀՈՒԾԵՐ



Եզ 24

Րաֆֆի Թողրոցյան  
ԽԱԶԵՆ-ՇՈՐԲԱՏԼԻԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ  
ԱՐԱԲԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ




Եզ 36

Ջերոմ Ֆին. Թարվելյան  
ՀԱՅԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԻՆԱՐԱՐԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ



Եզ 41

Սամվել Կյարաղյան  
ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՍԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ



Եզ 53

Սամվել Կյարաղյան  
ՍՏՈՒՅԴ ԹՎԱԳՐՎԱԾ ԱՄԵՆԱՅԻՆ  
ԽԱԶԵԱՐԾ՝ 866 թ.



Եզ 60

Րաֆֆի Թողրոցյան  
ԴԱՆՈՒՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԹԱՊԱՎՈՐԻԹՅԱՆ ՆԱԴԱՏԱԿՎԱԾ ՍԵՐ ՖԻԼԻՊԸ



Եզ 61



14 2020

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
EDITORIAL BOARD

ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
EMMA ABRAHAMIAN

ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ  
RAFFI KORTOSHIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
HASMIK HOVHANNISSIAN

ԴԱՄԱԿԱՐԳՈՎԱՅԻՆ ՔԵՎԱԿՈՐՈՇՈՒՄ  
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ  
ԼԻՎԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՇՅԱՆ

Designers  
ARMEN GEVORGIAN  
LIANA  
HOVHANNISIAN-KORTOSHIAN

ԵՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՏՈՒՄ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN  
ARCHITECTURE FOUNDATION  
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03Ա089223  
Given 13.10.2010

ՀԱՅԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ  
ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ

Responsible for this issue  
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24/4

Baghramian 24/4, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

E-mail: [raayer@sci.am](mailto:raayer@sci.am), [raatransfer@yahoo.com](mailto:raatransfer@yahoo.com)

Facebook: ՔԲՈՒ Քայատան RAA Armenia

Phone: 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture

# Ի՞ՆՉ ԵՆ ԹԱՔՑՆՈՒՄ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԸ

## Բաֆֆի Քորթոշյան

### Այլիզբերտ «Վարդպա»-ի № 4 և 5-րդ

۹۴

Անի Առաքելոց եկեղեցու մոտ 2010 թ. գտնելով  
ված էին հետևյալ երկու ցուցանակները (լուս.՝ Սամ-  
վել Կարապետյանի, ցուցանակներ ԺԳ-1 և ԺԳ-2).

### Բնագիր (ԺՂ-1). բուրքերեն.

*Arakelots Kilisesi (Kervansaray).*

1031 yılında inşa edilen kilise 1064 yılında Selçuk Türklerince ilave ile kervansaray haline getirilmiştir.

### Բնագիր (ԺԳ-1). անզերեն.

## *The church of Arakelots Carevensarai.*

*It was built in 1031 as patriarche Seljuks turnet into caravansarai by adding.*

Թարգմ. (Ժ-Գ-1). Առաքելոց եկեղեցի (հջևանատուն) Կառուցվել է 1031 թ.: 1064 թ. եկեղեցուն կցվում է նորյան, և այն վերածվում է հջևանատան:

Բնագիր (ԺԳ-2). բուրքերեն.

*Kervansaray. Havariler Kilisesi, Aziz Arakletes Kilisesi.*

1031 yılında kilise olarak inşa edilen yapı Selçuklu Türkleri tarafından eklenen taç kapı, kubbe gibi ekler



Ցուցանակ ԺԳ-1

ile yeniden elden geçirilmek suretiyle Kervansaray haline getirilmiştir. Yapıının mimari özellikleri ve süslemeleri ağırlıklı olarak Selçuklu geleneğini yansımaktadır.

### Բնագիր (ԺԳ-2). անգլերեն.

*Carvansaray. The church of Apostles. The church of St. Arakletes.*

The monument which was built as a church in 1031 was changed to caravansarai with the addings of the portal and dome by Seljukid Turks. The architectural and ornamental characteristics of this monument mostly reflects the tradition of Seljuks.

Թարգմ. (ԺԳ-2). Իջևանատուն. Սոսքելոց եկեղեցի

Կառուցվել է 1031 թ. որպես Եկեղեցի: Ավելի ոչ շելջուկ բուրքերի կողմից ավելացվել են շքամուտքը, զմբերը և այլ կցակառույցներ, և այն վերածվել է իշխանատան: Ծարտարապետությանը և զարդարվեստի արտացորմ է սելջուկյան ավանդությները:

Ծանրը, Եկեղեցու կառուցման ստույգ քվականը հայտնի չէ: Կառուցվել է Ժ-ԺԱ դարերում<sup>1</sup>, ոչ ուշ,



Ցուցանակ ԺԳ-2

<sup>1</sup> **Լեօնինի Կ.**, Անի քաղաքի աւերակեմբը, «Լումայ», 1909, № 2, էջ 32 (բնօրինակը տև Անդրեյ Կ., Հավանական քաղաքների պատմություն, 1905, № 34, ս. 369): Տես նաև **Օքրիելի Յ.**, Անիի աւերակեմբը, «Արարտ», 1911, Է, էջ 572 (բնօրինակը տև Օքրիելի Ի., Հավանական քաղաքների պատմություն, 1905, № 34, ս. 369): **Կարապետյան Ս.**, Անի-ՌԾ, Երևան, 2011, էջ 112:



Լուսանկարներ № 1-2 (հեղ.՝ Ս. Կարապետյան, 2011 թ.)

քան 1031 թ.<sup>2</sup>, իսկ որմերին առկա 1058<sup>3</sup>, 1180<sup>4</sup> թվականների նվիրատվական վիճագրերը հուշում են, որ Եկեղեցին շարունակաբար ծառայել է նպատակին: Ինչ վերաբերում է ցուցանակներում նշված այն տեսակետին, թե նրան կցված շրաբարային (ստալակտիտավոր) շրամուտքով և զմբեթով շինությունը<sup>5</sup> կառուցվել է սեղուկ թուրքերի կողմից՝ Եկեղեցին վերածելով իջևանատան, ապա դա իրականությանը չի համապատասխանում: Ցուցանակներում նշվածն իրականում գավիր<sup>6</sup> է և կառուցվել է Զաքարյանների օրոր (1199-1236 թթ.)<sup>7</sup> ԺԳ դարի սկզբներին<sup>8</sup>: Որմերին առկա հայերեն արձանա-

<sup>2</sup> Վերոնշյալի համար իհմք է ծառայում այն, որ Եկեղեցու նվիրատվական առաջին արձանագրությունը պատկանում է 1031 թ. (Զաքարյան Ա., Շամապարհորդություն ի Մեծ Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1853, էջ 10: Տե՛ս Ասրդուան Ն., Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայու, Վենետիկ, 1864, էջ 130: Ալիշան Ղ., Ծիրակ, Վենետիկ, 1881, էջ 60: Համառու տեղագրություն հնութեանց մեջին Ծիրակայ և մայրաքաղաքին Անոյ, աշխատավիրություն Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացոյ, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 43: Լինչ Հ., Հայաստան. ուղղությունն և ուսումնակրություններ, բարգմ. Լ. Լարենցի, հ. Ա. Կ. Պոլիս, 1913, էջ 354: Քասմաշեան Կ., Հայերեն արձանագրություն Անոյ, Բագմայրի և Մարմաշինո, Պարիս, 1931, արձ. 10: Դիվան հայ վիճագրության, պարակ I (այսուհետ՝ ԴՀՎ, համապատասխան էջերով), Երևան, 1966, էջ 12:

<sup>3</sup> ԴՀՎ, էջ 13:

<sup>4</sup> Աշվ. աշխ., էջ 12:

<sup>5</sup> Տե՛ս լուսանկարներ № 1-2:

<sup>6</sup> Լեօնիել Կ., նշվ. հոդվ., «Լուսայ», 1909, № 2, էջ 32 (բնօրինակը՝ Լեոնիել Կ., նշվ. հոդվ., էջ 369): Տե՛ս նաև Օրբելի Յ., նշվ. հոդվ., «Արքան», 1911, № 7, էջ 572 (բնօր.՝ Օրծելի Ա., նշվ. հոդվ.): Թօրամանեան Թ., Ամի բաղար, թշ՝ ամրոց, «Ազգագրական հանդիս», 1912, № 2, գիրք XXIII, էջ 21:

<sup>7</sup> 1199 թ. հայ-վրաալան միացյալ գործեր վերջնականացնելու գրավում են Ամին, որը լուսնում է Զաքարյան հայ իշխանների կազմածքը (Հարությունյան Վ., Ամի բաղար, Երևան, 1964, էջ 123-124: Տե՛ս նաև Հայկական սովորական հանրագիտարան (այսուհետ՝ ՀԱՀ, համապատասխան հասորով և էջերով), հ. 1, Երևան, 1974, էջ 407-408: Հայ ժողովորի պատմություն (այսուհետ՝ ՀՃՊ, համապատասխան հասորով և էջերով), հ. 3, Երևան, 1976, էջ 525-528, 534): 1236 թ., երբ մոնղոլները նվաճում են բաղար, ճանաչում են Զաքարյանների ժառանգական իշխանական իրավունքը (Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 291-292: Տե՛ս նաև ՀՃՊ, հ. 4, Երևան, 1972, էջ 18):

<sup>8</sup> Լեօնիել Կ., նշվ. հոդվ., էջ 32 (բնօրինակը՝ Լեոնիել Կ., նշվ. հոդվ., էջ 369): Տե՛ս նաև Թօրամանեան Թ., նշվ. հոդվ., էջ 21: Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 112:



գրությունների թվականները (1212<sup>9</sup>, 1216<sup>10</sup>, 1217<sup>11</sup>, 1220<sup>12</sup>, 1227<sup>13</sup>, 1239<sup>14</sup>, 1251<sup>15</sup>, 1269<sup>16</sup>, 1276<sup>17</sup>, 1277<sup>18</sup>, 1280<sup>19</sup>, 1289<sup>20</sup>, 1301<sup>21</sup>, 1320<sup>22</sup>, 1348<sup>23</sup> թթ.) ասվածի հաստատումն են:

Հայտնի է, որ շրաբարային շրամուտքով և նոյնավիսի լուծում ունեցող երդիկավոր զավիթները Հայաստանում լայն տարածում ունեին ԺԳ դարում (ինչպես՝ Նորագանքի<sup>24</sup>, Գանձասարի<sup>25</sup>, Արատե-

<sup>9</sup> ԴՀՎ, էջ 25:

<sup>10</sup> ԴՀՎ, էջ 14: Տե՛ս նաև Մարենոսեան Կ., Ամիի եպիսկոպոսական արքոր, «Բազմավկա», 1996, էջ 261:

<sup>11</sup> Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 133-134: Տե՛ս նաև Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 63-64: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 47: Քասմաշեան Կ., արձ. 49: ԴՀՎ, էջ 16:

<sup>12</sup> ԴՀՎ, էջ 17: Տե՛ս նաև Մարենոսեան Կ., նշվ. հոդվ., էջ 259:

<sup>13</sup> ԴՀՎ, էջ 18:

<sup>14</sup> ԴՀՎ, էջ 17:

<sup>15</sup> ԴՀՎ, էջ 15:

<sup>16</sup> Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 133: Տե՛ս նաև Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 62: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 45: Կոստանյան Կ., Վահական տարեգիր, Ս. Գևորգուրդ, 1913, էջ 106: Քասմաշեան Կ., արձ. 68: ԴՀՎ, էջ 24:

<sup>17</sup> Քասմաշեան Կ., արձ. 72: Տե՛ս նաև ԴՀՎ, էջ 22:

<sup>18</sup> Քասմաշեան Կ., արձ. 107: Տե՛ս նաև ԴՀՎ, էջ 15, 26:

<sup>19</sup> Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 133: Տե՛ս նաև Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 62: Քասմաշեան Կ., արձ. 69: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 45: ԴՀՎ, էջ 23:

<sup>20</sup> Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 133: Տե՛ս նաև Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 62: Քասմաշեան Կ., արձ. 66: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 46: ԴՀՎ, էջ 22:

<sup>21</sup> Զաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 9: Տե՛ս նաև Brosset M., Ruines d'Ani, capitale de l'Arménie sous les rois Bagratides, aux X<sup>e</sup> et XI<sup>e</sup> s., Histoire et description, St.-Pétersbourg, 1860, I<sup>e</sup> partie, p. 52. Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 131: Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 62: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 45: Քասմաշեան Կ., արձ. 81: ԴՀՎ, էջ 28:

<sup>22</sup> Զաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 10-11: Տե՛ս նաև Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 131-132: Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 62-63: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 43: Կոստանյան Կ., նշվ. աշխ., էջ 160: Քասմաշեան Կ., արձ. 87: ԴՀՎ, էջ 27:

<sup>23</sup> Զաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 12: Տե՛ս նաև Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 132: Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 63: Սերիխոնիկ Գերգետանց Ծիրակացի, էջ 46: Լինչ Հ., նշվ. աշխ., էջ 355: Քասմաշեան Կ., արձ. 93: ԴՀՎ, էջ 29:

<sup>24</sup> Տե՛ս լուսանկար № 3: Կառուցվել է 1261 թ. (ՀԱՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 378):

<sup>25</sup> Տե՛ս լուսանկար № 4: Կառուցվել է ԺԳ դարի 40-50-ական թթ. (ՀԱՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 687):



Լուսամկարներ (հեղ.՝ Ս. Կարապետյան) № 3 (2007 թ.) և № 4 (2011 թ.)

սի<sup>26</sup> և Հռովնոսի<sup>27</sup> վաճքերի գավիթների գմբեթների երդիկները, իսկ Ներուցի վաճքի զավրում՝ շրամուտքը<sup>28</sup>): Այսպիսի զարդարվեստն ունի արարապարսկական արմատներ<sup>29</sup>, որի ազդեցությունը, ի թիվս այլոց, առկա է նաև հայկական ճարտարապետության մեջ: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ բուրքերենով կրատարակված «Սեղուկյան շրջանի իջևանատներն Անատոլիայում» գրքում ոչ մի խոսք չկա այս հուշարձանի իջևանատուն լինելու մասին, որտեղ սեղուկյան ժամանակաշրջանի իջևանատները թվագրվում են ԺԳ-ԺԴ դարերով<sup>30</sup>, իսկ շրաբարային շրամուտքով սեղուկյան ամենահին իջևանատունը՝ 1215-1219 թվականներուն<sup>31</sup>, որն ավելի նոր է, քան եկեղեցու զավրի նվիրատվական ամենահին արձանագրությունը:

Վերոնշյալից հետևում է, որ Առաքելոց վաճքին նաև իջևանատան գործառույթ վերագրելը չունի զի-

26 Տես լուսամկար № 5: Կառուցվել է 1265 թ. (ՀԱՀ, հ. 1, էջ 690):

27 Տես լուսամկար № 6: Կառուցվել է 1277 թ.:

28 Տես լուսամկար № 7:

29 Ըստ ոռու ճարտարապետ Կ. Լեոնտևի՝ շրաբարային զարդարվեստն ունի արևելյան արմատներ, որից ազդեցի է նաև հայկական ճարտարապետությունը, իսկ Անիի Սլաքելոց եկեղեցու զավիթը համարվում է դրա լավագույն օրինակներից (Լեոնտև Կ., նշվ. հոդվ., էջ 369). Հմմտ. Curl J., A Dictionary of Architecture and Landscape Architecture, Oxford, 2006, p. 512.

30 Acun H., Anadolu Selçuklu dönemi kervansarayları, Ankara, 2007, sayfa: 15.

31 Նշվ. աշխ., էջ 420:

Լուսամկարներ № 5 (հեղ.՝ անհայտ), № 6 (հեղ.՝ Ս. Կարապետյան, 2008 թ.) և № 7 (հեղ.՝ Ռ. Թորթոշյան, 2009 թ.)

տական որևէ հիմնավորում և ամրողովին անհերե-  
ռություն է<sup>32</sup>:

### ՃՂ

Օլրիի բերդում 2008 թ. գետեղված էր հետևյալ  
ցուցանակը (լուս.՝ ՍամՎել Կարապետյանի, ցուցա-  
նակ ՃՂ):

Բնագիր. բուքերես. Oltu Kalesi.

Oltu'nun simgesi durumundaki kalenin ne zaman  
yapıldığı hakkında kesin bir bilgi yoktur. Millatan  
önceki bin yıl içerisinde; yörede hakimiyet kuran Urar-  
tular tarafından yapıldığı tahmin edilmektedir. Kale;  
Ceneviz kolonilerince, Roma ve Bizans dönemleri ile  
Ortaçağ boyunca faal olarak kullanılmıştır.

Kale, eski şehir çevreleyen geniş surların meydana  
getirdiği dış kale ile, bunun içerisinde ve dik duvarlar-  
dan oluşan iç kale'den meydana gelmiş ve bu haliyle  
günümüze ulaşmış, İç Kale; Oltu Çayı'nın doğusunda  
yükseLEN burç ve surlardan meydana gelen yapı ile  
dikkat çekmektedir.

11 nci yüzyılda, yöre hakimiyetinin Selçuklulara  
geçmesinden sonra İç Kale'nin doğusunda yaptırılan  
Selçuklu Hamamı, bu dönemin en önemli kalıntıdır.

16 nci yüzyıl ortalarında Osmanlılar'ın hakimiyeti-  
ne geçen Oltu kalesinde bu gün çeşitli dönemlere ait  
onarım ve tahlkimat izleri bulunmaktadır.

Բնագիր. անգլերեն. Oltu Castle.

*There is no exact information about the building period of the castle which is the symbol of Oltu. It is estimated that the Castle was built by Urartus, governing the region during 1000 years BC. The castle was used by Ceneve colonies, Roman and Byzantine periods and the Middle Ages.*

*The castle is formed of an Outer Castle that surrounds the old city with wide city walls. The Inner Castle with steep-walls is inside the Outer Castle and survived as is till today. The laner castle is noticeable with the rising tower and walls on the east-side of the Oltu River.*

*The Seljukian Bath, the most important ruin of that period, was built on the east side of the Inner Castle by Seljuks after they took over the region in the eleventh century.*

*Today there are some traces of renovations and fortifications made in different periods at Oltu Castle which was taken over by Ottomans in the middle of the sixteenth century.*



Օլրիի միջնաբերդը (լուս.՝ Ժ.-Կ. և Ծ. Դուկիեների, 2013 թ.)



### Ցուցանակ ՃՂ

Թարգմ. Օլրուի բերդը:

Քաղաքի խորհրդանշիչ դարձած բերդի կառուց-  
ման ժամանակի մասին ստույգ տեղեկություններ  
չկան: Ենթադրաբար կառուցվել է ուրարտական  
ժամանակաշրջանում, որոնք այս տարածքին տի-  
րում են մ.թ.ա. վերջին հազարամյակում: Բերդը  
կենտրոնական հաստկապես կիլոպայան, հողմտական  
և բյուզանդական ժամանակաշրջաններում, ինչ-  
պես նաև միջնադարում: Բաղկացած է հինգ քաղաքը  
շրջապատող արտաքին պարսպից և նրա ներսում  
ուղղահայց պատերով միջնաբերդից, իսկ վեր-  
ջինս՝ պարսպապատից և Օլրու գետի արևելքում  
բարձրացող աշտարակից:

ՃՂ դարում շրջանն անցնում է սեղուկներին, և  
միջնաբերդի արևելքում կառուցվում է սեղուկյան

<sup>32</sup> Այս անտուրյունը հրատարակվել է նաև Կարսի նահանգի գրասահման վարչության կողմնից (Kars Valiliği İl Turizm Müdürlüğü, Kars, Ankara, sayfa: 13; Historic city of Ani, Ankara, 2015, p. 96):

բաղնիք, որն այդ ժամանակաշրջանի ամենակարևոր վկան է: ԺԴ դարի կեսերին անցնում է օսմանցիների տիրապետության ներքը:

Ներկայում տեսանելի են բերդում կատարված տարրեր ժամանակաշրջանների նորոգությունների հետքերը:

Ծանոթ Յուղանակում անտեսվել են բերդի պատմության՝ հայության հետ կապված կարևոր հաճգրքանները՝ ընթերցողից բացցնելով հետևյալը.

Ոբաղն (այժմ՝ Օլիք)<sup>33</sup> Մեծ Հայրի Տայր Աս-  
հանզի համանուն զավադի կենտրոնն էր<sup>34</sup>: Մ.թ.ա.  
189-մ.թ. 1 թթ. գտնվում էր Արտաշեսյան<sup>35</sup>, իսկ մ.թ.  
66-428 թթ.՝ Արշակունյաց հայկական թագավորու-  
թյունների իշխանության ներքո<sup>36</sup>:

428 թ. Հայաստանի արևելյան մասը (մինչև 591 թ. նաև Տայքը)<sup>37</sup> անցնում է Սասանյան Իրանի գեղիշխանության տակ<sup>38</sup>, սակայն երկրամասը կառավարվում էր հայ Օսխարաքաների կողմից<sup>39</sup>:

639 թ. իշխան Թեոդորոս Ուշտումին, օգտվելով Հայաստանի պարսկական և բյուզանդական հատվածներում տիրող քաղաքական անկայուն վիճակից, Միավորում է Երկիրը և հաստառում հայկական ինքնուրույն իշխանապետություն<sup>40</sup>: 652 թ. պայմանագիր է կնքում Ասորիքի և Վերին Միջագետքի կուսակալ Մուավհայի հետ, որով ճանաչում է արարական խալիֆայության ձևական գերիշխանությունը և ապահովում Հայաստանի ինքնուրույնությունը<sup>41</sup>: Հայաստանի կախումը խալիֆայությունից տարեկան լոկ 500 ոսկեդրամ հարկի վճարումն էր, իսկ հայոց իշխանին ենթակա էին Մեծ Հայքի իիմնական նահանգները, այդ քում՝ նաև Տայքը: Դրույթունը շարունակվում է մինչև Է դարի վերջը<sup>42</sup>:

Թ դարում քուլացած խալիֆը թագ է ուղարկում հայոց իշխանաց իշխան Աշոտին, որին էլ Գևորգ կաթողիկոսը 884-885 թթ. հանդիսավոր ձևով քաղաքում է հայ իշխանների ներկայությամբ։ Հայոց նոր թագավորին ճանաչում է նաև Բյուլղարիան։

Բագրատունիների իշխանությունը տարածվում էր Երկրի մեծագույն մասի վրա<sup>43</sup>: Նրա մի հատվածում ժարի կետերին ատեղծվում է Տայքի կյուրապաղատությունը<sup>44</sup>, որը գոյատևում է մինչև 1000 թ., երբ տարածքն անցնում է Վասիլ Բ կայսրին<sup>45</sup>:

Ինչ վերաբերում է ցուցանակում տեղ գտած այն մտքին, թե միջնարերդում կառուցված բաղնիքը սելցուկյան ժամանակաշրջանի վկան է, ապա նոյն

33 Հայկական աղբյուրներում հիշվում է նաև Ոխտիք, Ոդրիս, Ուլիսիս, Օխտիք, իսկ Վրացականում Օթրիք տարբերակներով (Տիգեզքական պատմության Ստեղծանուն Վարդապատշին Տարօնեցյան). Փարիզ, 1859, էջ 176, 270: Պատմության Արիւտականի Լասախի Երևան, 1963, էջ 24-25: Յակով Կարճեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ

19: **ԽԵԺԾՏԱՅԻ Ա.**, Աշխարհագործին չորից մասանց աշխարի, հ. Ա, Վենետիկի, 1806, էջ 126: **ԱՄԽԱՅԻ Ն.**, Տեղակի Հայոց մնեաց, Վենետիկ, 1855, էջ 39: **ԿՐԱՅԻ**, Կարսից-Օլիք, «Արձագանն», 1894, № 42, 10 ապրիլի, էջ 1: **ՀԱՐՑՄԱՅԻ Հ.**, Հին Հայոց տեղոյն ամուսները, Վիեննա, 1907, էջ 245: **ՏՔՐՊՈՂԱԿԱԲ Պ.**, Տեղագրական հետազոտություններ Հայստանի մէկ քանի քաղաքներու և քերդերու մասին, Վիեննա, 1951, էջ 66: **ՅԱԼԻԽԱՆՅԱՆԻ Մ.**, Հայաստանի քերդերը, Վենետիկ, 1970, էջ 609: Հայաստանի և հարավից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 2001, էջ 462):

<sup>34</sup> Գիրք աշխարհական և առասպելականութեանց, որ է Աղոթա-  
գիրք, յԱմբէօւսամ, 1668, էջ 29, 32: Տե՛ս նաև Սրբոյ հօրն մե-  
րոյ Սովորի Խորենացոյն Մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 610:

35 ՀԱՅ, h. Երևան, 1976, էջ 140: Ըստ Ստրաբոնի՝ Հայաստանն ընդարձակվել է Արտաշես արքայի օրոք, որը միավորել է հայալեզու բնակչություն ունեցող զավաները: Նա նաև նշել է Հայաստանի քաղաքներության սահմանները, որի կազմում էր Տայքի նահանգը (The Geography of Strabo, vol. 2, book 11, chap. 4, London, 1856, p. 267, 269):

36 ՀԱՅ, էջ 107-108: Տայրը դեռևս Գ դարից Մամիկոնյան հայ իշխանական տոհմի ժառանգական կավածքը էր: Գ-Դ դր. հայոց սպարապետի զիմավորած արքունիք բանակը ստվարաբար տեղափոխվում էր Տայրում (ՀԺՊ, հ. 2, Եթևան, 1984, էջ 141: Տես նաև **Edwards R.**, Medieval Architecture in the Oltu-Penek Valley: a Preliminary Report on the Marchland of Northeast Turkey // DOP. 39, 1985, p. 16):

37 ΛΦΠ, h. 2, ΕΩ 264:

38 Եշտ. աշխ., էջ 125:

39 Նշվ. աշխ., էջ 165: 428-646 թթ. Հայաստանի արևելյան մասը, որպես առանձնահասող վարչական միավոր, ենթակա էր Սասանյան Իրանի գերիշխանությանը: Այս կիսանկախ վիճակը պահելու համար հայերը հաճախակի դիմում էին ապստամբություններից: Ապավիտելով Տայքի անառիկ բնությանը՝ այստեղ էր ապաստանում պարտիկների դեմ ապստամբող հայկական ուժերի մեծ մասը, որոնք, օրինակ,

Ավարայրի ճակատամարտից (451 թ.) հետո պարսկական պատժիշ ջրկատների դեմ կազմակերպված դիմադրություն էին ցույց տալիս Հայաստանի բյուզանդական մասին սահմանակից շրջաններում՝ Տայքում, Պարփառյան լեռների և Խաղսդիրի խիստ անտառներում։ Վարդան Սամիկոնյանի երրոր՝ Հմայակի մոտ՝ Տայքում, ապաստան էին գտել ապրատամբների հիմնական ուժերը (ՀՇՊ, հ. 2, էջ 165-171, 176, 180, 188); 482-484 թթ. ապստամբության ժամանակ Դվինում կազմված հայկական կառավարության սպարապետ է Աշանակյուն Վահան Մամիկոնյանը։ Ապստամբ նախարարներն իրենց ընտանիքներն ու զանձները նախօրոք տեղափոխել էին Տայք, որը պետք է դառնար նրանց հենակետը (Աշվաշուն, էջ 198-199):

40 ΛΔΩ, h. 2, τρ 305-306:

41 Եշվ. աշխ., էջ 311:

42 Եշտածք

43 ՀԺՊ, հ. 3, էջ 23-24: Հմմտ. Սանեկաննու Տարօնիցի, էջ 144:

44 Տայրի իշխանությունը գրեթեցել է Դավիթ Կյուրապաղատ Բագրատունու (966-1000) օրոք (ՀԺՊ, հ. 3, էջ 108: Հճմտ. **Ստեփանոս Տարօնիցի**, էջ 175, 244, 258, 261): Ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարօնեցին նրան կոչում է «Արտապաղատն Հայոց Դավիթ» (նշվ. աշխ., էջ 257) և նեծարանիք խոսքեր ասաւ նրա մասին. «...Ես այր հեզ ու հանդարա առանկ քան զամենայն բազաւորս որ ժամանակին յայս: Ե՛ եղել նա պատճառ խաղաղորդեան եւ շինութեան ամենայն արևելեաց, մանաւանդ Հայոց և Վրաց. զի գրոյն պատերազման յամենայն շորջանակի կողմանց դադարեցոյց նա՝ յարդող եղեալ ամենայն շորջանակի ազգաց. եւ ամենայն բազաւորք կամաւ հնազանդեցան նմա» (նշվ. աշխ., էջ 267):

45 Արիստոկրատ Լաստիվերցի, էջ 22-23: Տես նաև Ստեփան-նու Տարօնիցի, էջ 267-270: ՀԺՊ, հ. 3, էջ 137:



Լուս. № 8, բերդամիջի եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

դատողությամբ տեղում գտնվող երրեմնի եկեղեցու մնացորդները կարելի է համարել հայկական քրիստոնեական ժամանակաշրջանի վկայություն, որը փաստորեն անտեսանելի է ազգամոլորժյամբ կուրացած «զիտճականների» համար (ի դեպ, քաղաքում եղել է հայկական և երկու եկեղեցի՝ Սր. Հովհաննես և Սր. Գրիգոր<sup>46</sup>):

Միջնաբերդի վեցխորան<sup>47</sup> եկեղեցին կառուցվել է Ժ-Ժ-Ա դարերում ավելի հիմն՝ հավանաբար Է դարին<sup>48</sup> վերաբերող հայկական մեկ այլ եկեղեցու տեղում: Դա է փաստում արտաքին կլոր պատվանդանի քարաշարում գետեղված հայերեն արձանագրությամբ արևային ժամացույցը<sup>49</sup>, որը պատկանում էր տեղի նախնական եկեղեցուն և վերաօգտագործվել է այստեղ<sup>50</sup>: Կոչվել է Սր. Աստվածածին և



Լուսանկարներ № 9 (լուս.՝ Ռ. Եղվարդսի, 1983 թ.), № 10 (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

ի թիվս Օլրիի այլ եկեղեցիների՝ հիշվում է որպես գրչօջախ դեռևս 1473<sup>51</sup> և 1474 թթ.<sup>52</sup>:

Այն առաջին անգամ նկարագրում է գերմանացի գիտնական Կարլ Կոխը 1843 թ.<sup>53</sup>: 1888 թ. ավելի քանի մեջ տակալին տեսնում է հայկական՝ Տիրամոր եկեղեցին, մի տեսակ կմախքի վերածուած, այսինքն՝ սրբատաշ քարերից թէ արտաքստ և թէ ներքուստ բաւականին մերկացած ու անշքացած ....: Բնիկները պատմեցին, որ նախ քան ուսւ-տաճ-

<sup>46</sup> Կրպէտ, նշվ. հոդվ., էջ 1: Տես նաև «Ալիք», 8 յուլիս, 1906, № 59, էջ 2: տայսօնշացօց յժ.՝ «օրէյշուացօյշո» յշեացքօյցօն յուղա-ուղութեան քանակութիւն 1907 թվականի մայիսի 20-ին, 1938, 49. ՀԱՊ. ֆ. 57, գ. 3, գ. 54, թ. 91; ֆ. 56, գ. 1, գ. 7765, թ. 63: «Մակար», 1886, № 32, 20 մարտ, էջ 1:

<sup>47</sup> Բերидզե Վ., Место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры, Тбилиси, 1981, с. 189.

<sup>48</sup> Կազարյան Ա., Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции, том II, Москва, 2012, с. 465.

<sup>49</sup> Գտնվում է եկեղեցու մուտքից ձախ (տես լուսանկարներ 8-10): Կարլ Կոխը 1843 թ. եկեղեցու պատկերին նշանել է նախնական կառույցին պատկանող այլ քարեր ևս. «Երբեմն ինձ թվում է, թէ պատկերաբանակ այս քարերը, ինչպես հաճախ է ինուս Արևելքում, ազուրված են և ավելի հիմն են, քան պատերը, քանի որ ավելի շատ են քայրայիլ» (Karl Heinrich Koch, Wanderungen im Oriente, während der Jahre 1843 und 1844, Band 2: Reise im Pontischen Gebirge und türkischen Armenien, Weimar, 1846, s. 252).

<sup>50</sup> Հայագիր արևային ժամացույցից շատ դեռևս 1983 թ. պահպանվում էր Ներսես Գ-Շինոյ կարողիկոսի (641-661 թթ.) անվան հիշատակությամբ հունարեն արձանագրություն (Edwards R., նշվ. հոդվ., էջ 21-23: Տես նաև Կազարյան Ա., նշվ. աշխ., էջ 464), որը 2008 թ. արդեն գոյություն չուներ: Սակայն Ո. Էղվարդսի լուսանկարից երևում է, որ արևային ժամացույցն ավելի վաղ է կերտվել, քան հունարեն արձանագրությունը, քանի որ վերջինն փորագրվել է ժամացույցի կիսաբոլորակ շրջագրությունում ներփակ հատվածը քերելուց հետո:

<sup>51</sup> Տերում ստեղծված Ավետարանի հիշատակարանում նշվել է. «...ի գաւառին Գուգարա, ի դրեակս Ուխտիք կոչեցեալ, լոն հովանեա սուրբ Աստուածածնու և սուրբ Կարապետիս և սուրբ Սիննիս» (Հայերեն ծեռագրերի ժեղարի հիշատակարաններ հ. Գ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 456): Է. Թաղախչվիլին 1907 թ. եկեղեցու պատերին նկատել է որմնանկարների հետքեր, ինչպես նաև խորանում տեսել աղերս-աղաշանիք պատկերը, որտեղ նկարի ձախ կողմում լավ երևում էր Տիրամայրը. Եկեղեցու մեջինի տեղափոխված սուրբ Աղամայրի քարի արձանագրության հիման վրա նա եկեղեցին անվանել է Սր. Գևորգ (տայսօնշացօց յժ.՝ նշվ. աշխ., էջ 48-49): Է. Թաղախչվիլուց օգտվելով նոյն կերպ է կրչել նաև Տ. Սարգսյանը (Սարգսյան Տ., Խորագոյն Հայր, Երևան, 1978, էջ 136):

<sup>52</sup> 1474 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում էլ գրչության վայրի մասին նշվել է. «...ի գաւառին Գուգարա, ի դրեակս Ուխտիք կոչեցեալ, լոն հովանեա սուրբ Աստուածածնու և սուրբ Կարապետիս և այլ սուրբ Նշանացս....» (Հայերեն ծեռագրերի ժեղարի հիշատակարաններ, հ. Բ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 362):

<sup>53</sup> Karl Heinrich Koch, նշվ. աշխ., էջ 252:

<sup>54</sup> Вейденбаум Е., Путеводитель по Кавказу, Тифлис, 1888, с. 384.

կական պատերազմը և յետոյ, այստեղ, Աստուածամօր եկեղեցու մէջ Աստուածածնի վերափոխման տօնին, հանդիսաւոր կերպով պատարագ էր մատուցանում և հայերի սեփականութիւն էր»<sup>55</sup>:

### ԺԵ

Անիի Մենուչեի մզկիր անվանված շենքի մոտ 2010 թ. գտնելված էր հետևյալ ցուցանակը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, ցուցանակ ԺԵ):

Բնագիր. բորբերեն.

Ebul Manucehr Camii.

Anadoluda inşa edilen ilk türk camii.

Թարգմ. Արու Մանուչեիրի մզկիր: Անատոլիայում կառուցված առաջին բորբական մզկիրը:

Բնագիր. անգերեն.

The Mosque of Ebul Menucehr.

Was the first mosque which built in Anatolia in 1072 by Seljuk Turks.



Մենուչեի «մզկիրը» (լուս.՝ Զ. Սարգսյանի, 2008 թ.)

քրիստոնեական լրվագները, ինչպես նաև մինարեի՝ ավելի ուշ ժամանակի կցակառույց լինելը:

Ստորև ներկայացնում ենք տարրեր ժամանակակիրությունների, ճարտարապետների, ճանապարհորդների և պարզապես այցելուների գրավոր հիշատակությունները:

Ուստի գրող Անդրեյ Մուրավյովը ենթադրում է, որ «մզկիրը» չի կառուցել Անին նվաճած էմիր Մանուչեն, քանի որ վերջինս արդեն իսկ Մայր տաճարը վերածել էր մահմեդական աղոթատեղիի<sup>56</sup>:

Գերմանացի երկրաբան Հերման Արիխը, որն Անի է այցելել 1844-1845 թթ., գրում է. «Մեկ շենք մը կայ ետքեն մզկիր դարձած. ասոր զիսաւոր պատին վրայ, ...հայերէն արձանագրութիւն մը կայ մեծամեծ տառերով, անոր տակն ալ քիւֆի տառերով ուրիշ աւելի կարծ արձանագրութիւն մը»<sup>57</sup>:

Ըստ հայր Ներսես Սարգսյանի՝ «Զհանգամանաց սորա չունին որոշակի ինչ ասել յեկեղեցւոյ արդեօք ի մզկիր փոխեալ, եթէ իհմնարկեալ իբրու մզկիր. քացի եկեղեցւոյ ձև չերսի ի նմա, ...սակայն և զիսաւոր վայր մզկիրի միհրապն չիք ի նմա, զի որմն հարաւոյ միայար անշեղ ամբառնայ ծայր ի ծայր. նմին իրի թուի ինձ նախ յայլ պէտս սահմանեալ շինուածդ, և ապա առ թարարօք կամ Պարս-



Թարգմ. Արու Մանուչեիրի մզկիր: 1072 թ. սեղուկ բորբերի կողմից Անատոլիայում կառուցված առաջին մզկիրը:

Ծանոթ Այստեղ պետք է նշել, որ 1072 թ. ոչ թե կառուցվել, այլ նվաճողների կողմից արդեն իսկ գոյություն ունեցող աշխարհիկ նշանակության շենքը վերածվել է մզկիրի: ճարտարապետական առանձնահատկությունները մեզ բույլ են տալիս եզրակացնել, որ այն ի սկզբանե ունեցել է այլ գործառույթ: Նոյնապիսի համոզմունք են հայտնել տարրեր ժամանակակիրի այցելուները. ոնանք շենքը համարել են կարողիկուսանիստ, ոմանք ել՝ զավիք, պալատ կամ աշխարհիկ մեկ այլ շինություն, ընդ որում, շեշտվել են միհրաբի բացակայությունը, առկա

<sup>55</sup> Կրպէտ, նշվ. հոդվ., էջ 2: 1907 թ. Է. Թաղախվիլին գրում է. «Սրբատաշ քարերը որոշ չափով գողացվել են» (Թագօ՛Շշօ՛ք քժօ յժ., նշվ. աշխ., էջ 47):

<sup>56</sup> Մուրավյեվ Ա., Հայաստան, 1848, համար 2, էջ 280 (բնագրում՝ «Должно полагать однако, что ее соорудил не первый обладатель Ани, Эмир Мануче, потому что он обратил главный собор в храмину своей веры...»).

<sup>57</sup> Ասիր Հ., ճանապարհորդութիւն յԱնի, «Մասեաց Աղաւանի և Ծիածան Հայաստաննայց», 1864, № 9, էջ 281:

կօք ի մզկիթ փոխեալ է, յաւելեալ նմին միհնարէ և արձանագիր զորոց զկնի»<sup>58</sup>:

Հովհան Տեր-Աբրահամյանի վկայության համաձայն՝ «Սինարէին շինութիւնը հասարակ լինելով ունանք այնպէս կկարծէն, թէ այս մզկիթը եկեղեցի կամ ուրիշ հասարակաց շենք եղած է»<sup>59</sup>:

Ըստ պատմաբան Եղիշե ավագ քահանա Գե-  
դամյանցի (Հայկունի)՝ «...նոյն իսկ այդ մինարէդը  
ինքը ապացոյ է, որ այդ շինութեան ուրիշ ոչ մի ա-  
նուն չէ կարելի տալ, բացի պալատից...»<sup>60</sup>: Հիմնա-  
կան շենքի «...ձեղունի խճազարդերի և ներկաչէն  
զարդերի մէջ կան զանազան ձևերով խաչեր, մա-  
նաւանդ հարաւային կողմի վերջին մասը (ձեղունի)  
կազմում են ամբողջապէս վեց կարմիր և վեց դեղին  
խաչեր, ...նոյն հարաւային կողմում պատկից սիւնին  
մէջ կայ մի փորածոյ պատկեր, քառակուսի շրջա-  
նակի մէջ զետեղեցրած: Պատկերը այժմ  
աւրշտկած է, սակայն ուշի ուշով նորան զննողը իս-  
կոյն կը համոզուի, որ դա Աստուածածնի պատկերն  
է, թէև շատ խամրացած և փշացած, ...այդ շինու-  
թեան մզկիթ չլինելը ապացուցանում է նաև խալ-  
մական ծէսի միհրապի բացակայութեամբ»<sup>61</sup>:

Սանկավարձ Գրիգորիս Երզնկյանն էլ գրում է. «Մայր Եկեղեցուց դէպի հարաւ արևմուտք, գտնվում է 100 քայլի վերայ հիանալի շինութիւն կարմիր քարից, որին ես «կարողիկոսարան» եմ անուանում...: Սորան մզկիթ չէ կարելի անուանել, թէ կան արարիկ տառերով արձանագրութիւններ, որովհետև շինութեան մէջ առաստաղում կան և սևագոյն քարերից խաչեր. իսկ հարաւային պատի սեան մէջ տեղն կայ մէկ շրջանակած փորուածք, որ նկատելի է Աստուածածնայ պատկերն, թէ և բաւականին ոչնչացրած...: Կարողիկոսարանի հիւսիս արևմտեան անկիւնում կայ 8 անկիւնանի ան-խախտ մնացած աշտարակ...<sup>62</sup>: Այս շինութիւնը իր շէնքով՝ թէ ճարտարապետական կողմից և թէ քարերի կողմից, միանգամայն զատկում է կարողիկոսարանից, այնպէս որ սոքա միաժամանակեայ ծնունդ չեն»<sup>63</sup>:

Ե. Մարկովն ու Ե. Կովալևսկին ենթադրում են, որ այս կառույցը պատկանել է Սարգիս կարողիկոսին, և բուրքերը հետո են Վերածել մզկիթի, որի պատճառով էլ նրան կից կառուցել են Մինարե<sup>64</sup>:

<sup>58</sup> Արքունակ Ն., հշվ. աշխ., էջ 136-137:

59 **Տեղ-Արքահանուն Յ.**, Տեղագործին Ամի քաղաքին, «Մասնաց Աղասին և Ծիածան Հայաստանեայց», 1862, № 24,էջ 283:

60 Գեղարվեան Յ., Այսալցխայից մինչև Անի, «Փորձ», 1880, № 6-7, յունիս-յուլիս, էջ 83:

61 Աշվ. հոդվ., էջ 85-86:

62 Նկատի ունի մինարեն:  
 63 **Եղանակ 4.**, ճանապարհորդութիւն Ղարսից մինչեւ Անի,  
 «Արձականություն», 1887, № 14, էջ 217:

«գրադար», 1887, № 14, էջ 217.

64 Ковалевский Е., Марков Е., На горах Арагатских, Москва, 1889, с. 236-237 (բնագրով “Это бывшее помещение патриарха Саркиса, обращенное затем турками в мечеть, для чего и пристроен к дому высокий минарет”).

Տեր Սելիքիսեղիկ Գևորգյանցը նշում է. «Լուսատրչի եկեղեցուց դեպի հարաւ արևմտառք, Ալսութեանի ձորագլխին գտնում է մի գեղեցիկ շինութիւն, որին ասում են նզկիր: Մրան կից, հիսախ արևելեան անկիւնում մինարեթի նոր շինութիւնը ցոյց է տալիս, որ այն շինութիւնը յետոյ են նզկիր դարձրել: Ումանք կարծում են, որ սա կարողիկուսարան է եղել, ունանք էլ թէ ժամատուն է և այլն, բայց դրականապէս կարելի է ասել, որ քրիստոնէական հաստատութիւն է այդ, որովհետև արևմտեան կողմում պատի ներսի երեսին եղծուած խաչի տեղեր են երևում, խաչանիշ քանդակներ երեսում են նաև արևմտեան կամարի վերայ և դրա համար հաւանական է, որ այդ շինութիւնը ժամատուն եղած լինի: Մանաւանդ որ մինարեթը և այդ շինութիւնը միմեանցից տարրերում են. առաջին ոչ ժամանակի գործ է վասն որոյ ճարտարապետութեամբ և տարրերում է: Մինարեթը շինուած է սև և կարմիր քարերով, ունի արտաքին կողմից քուֆի տառերով արձանագրութիւն, գրուած Մանուչի հրամանով 1072 թուին, սրանից երեսում է, որ Ծետատեանց Մանուչեն այս շինութիւնը նզկիր է դարձրել»<sup>65</sup>:

Ըստ ռուս ճարտարապետ Կ. Լենինիկ՝ «Անի ճարտարապետական աշխարհիկ շենքերից լաւ պահպանուել են քագաւորների պալատը և այսպէս անուանուած կաթողիկոսարանը, այսպէս անուանուած նրա համար ենք ասում, որովհետև դեռ լաւ չի որոշուած դրա նշանակութիւնը...։ Ամբողջ շինութիւնն իսկապէս կազմուած է մեկ դահլիճից և ախների վերայ կամարակապ քաղերով ծածկած մի ներքնայարկից։ Յետագայ ժամանակներում այս դահլիճն կից շինուած է աշտարակն իրեւ մինարե։ Աշտարակի վրայի արարական արձանագրութիւնը և շենքի բնոյքը մի քանի հետախոյզների ենթադրել էին տալիս այս շինութիւնը վերագրել մէջիդի, բայց հաւանականն այն է, որ նկարագրած շենքը սկզբներում նշանակուած է եղել որևէ ատենական տեղի համար, որը կարելի է եղրակացնել դրա պատերից մէկի վերայի պրօֆ։ Մատի կարդացած արձանագրութիւններից։ Այդ արձանագրութիւններն անեցիների համար կամ որոշում են զանազան արտօնութիւններ, կամ հաստատութիւններ, յամենայն դէպս այդ շինութիւնը յետին ժամանակներում է յարմարեցրած մէջիդի։ Բայց շատ դժուար է ապացուցանել, թէ այդ շինութիւնը կաթողիկոսարան չէ եղել, ինչպէս փորձել են մի քանի արքայի ընդհակառակն, աւելի շուտ պալատի գեղատեսիլ տեղադրութիւնն (ողջ Անին աչքի առաջն է) ու շինութեան բնոյքը պիտի բերէին այն մտքին, որ այս շինութիւնն յատկացուած է եղել իրեւ բնակարան մի այնպիսի նշանաւոր անձի համար՝ ինչպէս կաթողիկոսն է»<sup>66</sup>։

<sup>65</sup> Մայրիստոնի Գեղրգեանց Ծրակացի, էջ 51-52:

66 **Լեօնիկալ Կ.**, նշվ. հոդվ., էջ 38 (բնօրինակը՝ Լեոնտьев К., նշվ. հոդվ., էջ 373):

Ըստ հնագետ Հովհանքի Օրբելու՝ «Այս շինութիւնը մզկիր է դարձրել Մանուչէ Էմիրը, նորոգելով և փոքր ինչ էլ փոփոխելով, իսկ առաջ նա ծառայել է մեզ անյայտ նպատակի, հաւաճօրէն կապ ունէր մօտիկ եղած քաղաքային, Աշոտի համարուած, պարսպի և Ախուրեանի կամուրջի հետ, որ մէկն էր այն երկու կամուրջներից, որոնց հետքերը քաղաքի սահմանում դէռ մնում են»<sup>67</sup>:

Ավարտելով հոդվածաշարը՝ կարող ենք նշել, որ Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանում գտնվող պատմական հուշարձաններին կից գետեղված քազմաքիվ ցուցանակների (մենք ներկայացրինք նրանցից միայն 15-ը) զգալի մասը փաստորեն ոչ թե անաշառ տեղեկատվու-

թյամբ օգնում է, ինչպես ընդունված է ամբողջ աշխարհում, այլ քաղաքական նկատառումներով նենագափոխված տեղեկություններ փոխանցելով՝ խարում է գրոսաշրջկիկներին և այցելուներին:

Ակնհայտ է նաև, որ հայկական հուշարձանների համատարած ոչնչացումը<sup>68</sup>, դրան զուգահեռ պատմական խեղաքուրումներով լույս ընծայվող բուրքական բազմալեզու հրատարակությունները և վերջապես վանդալական գործողություններից որոշ չափով փրկված հայկական հուշարձանների մոտ տեղադրված սեփական ժողովրդին, ինչպես նաև երկիր այցելող հյուրին մոլորեցնող ցուցանակները ևս ծառայում են Հայոց Հայրենիքի յուրացման ընթացիկ քաղաքականությանը:

<sup>67</sup> **Օրբելի Յ.**, նշվ. հոդվ., էջ 571-572 (բնօրինակը՝ **Օրծելի Ի.**, նշվ. հոդվ.): Ըստ հոդվածի քարզմանից առք. Հովհակ Մովսիսյանի՝ «...այս շենքը, որ աւանդաբար կարողիկոսարան է կոչում, եկեղեցու գալիք է. կամարների վերայ նկատել ենք խաչերի հետքեր. առաստաղի գունաւոր քարերը շարուած են այնպէս, որ խաչ են ձևացնում: Հաւաճօրեն մզկիր արևելան կողմը գտնուած ձորի գառիվայրի դերքուկը մզկիր դարձած զալիքին կից եկեղեցու փոլուածքն է» (նշվ. հոդվ., էջ 572):

<sup>68</sup> ՀՃՈՒ հիմնադրամ՝ խնդիրն արծարծած ուսումնասիրություններից մեկում նշվել է. «1940-ական թթ.-ից ի վեր բուրքական իրարահաջորդ իշխանությունները նպատակամղված իրականացրել են իրենց խոր գոյությամբ պատմական իրականությունը մատնող հայկական նյութական մշակույթի քազմահազար հուշարձանների համատարած ոչնչացման անհետացման վանդալական քաղաքականություն, որի հիմնական նպատակն էր երկրի երեսից մեկնարկման վերացնել ոչ միայն հայ ազգի պատմության և մշակույթի, այլև համաշխարհային քաղաքակրթության համար անզնահատելի արժեք ներկայացնող տարարնույթ և անհաշիվ հուշարձաններ: Հատկանշական է, որ ոչնչացված հուշարձանների շարքում առաջին տեղում են քրիստոնեական մշակույթի շերտ հանարվող գերեզմանոցները՝ բյուրավոր խաչքարերով, տապանաբրերով, տապանատերով, և հատկապես պաշտամունքային կառույցները՝ վանքերը, եկեղեցիներն ու մասունական կամուրջների և բերդերի, աղբյուրների և բնակելի կամ հասարակական կառույցների դեպքում մեծ նասակի բավարարություն կայացնելու հայերեն արձանագրությունները ոչնչացնելով, քանի որ այս կերպ հնարավոր և բույլատելի էին դրանց շահագրդումն ու յուրացումը» (**Կարապետյան Ս.**, Եղիշով Եղիշովի հետո, Երևան, 2015, էջ 11):

## ՓԻՐՈՒՍԱԾԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սամվել Այվազյան

Գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղից մոտ 2 կմ հյուսիսարևմուտք՝ Փիրումաշեն կոչվող տեղամասում։ Պատմական անվանումը դժբախտարար մեզ չի հասել, որի փոխարեն էլ պայմանականորեն հիշվում է Փիրումաշենի եկեղեցի տարրերակով։

Ինչ վերաբերում է համանուն տեղամասին, ապա համաձայն տեղի ավանդագրույցների՝ այն հնում գյուղ է եղել, որն էլ ամայացել է բյուրքական ցեղերի ոտնագույրունների հետևանքով<sup>1</sup>։

Ըստ Նիկողայոս Ղահրաման-Ջևսոյանի գրի առաջ ավանդության՝ միջյանց կից գտնվող Սարուշեն, Սարգսաշեն և Փիրումաշեն գյուղերը հիմնադրվել են ԺԴ դարի վերջերին Ատրպատականից տեղափոխված երեք եղբայրների կողմից։ «...հայ եղբայրներից մէկը, որ իր անունը (Սարու-պարսկերէն՝ դեղին գոյն ունեցող) տալիս է գիտին (միւս երկու եղբայրները, Սարգսին ու Փերին, շինել են Սարգսաշեն և Փիրումաշեն գիտերով)»<sup>2</sup>։

Հայտնի է, որ գյուղի հիմնադրումից մոտ 2 դար հետո էլ կառուցվել է եկեղեցին, ըստ Նիկողայոս Ղահրաման-Ջևսոյանի, հայոց Ռ.Գ. (1554) բավականին<sup>3</sup>։ Այժմ, սակայն, որմերին նշված թվականը պարունակող որևէ արձանագրություն առկա չէ, որն էլ կասկածի տեղին է տալիս։

Խորհրդային շրջանում Փիրումաշեն գյուղատեղին վերածվել է կարի ֆերմայի, իսկ եկեղեցին՝ գոր-



Փիրումաշենի եկեղեցին հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1990-ական թթ.)

ծածկել որպես պահեստ։ Արևմտյան ճակատին կից, որպես արտադրամաս, կառուցվել է կիսածածկ (հավես), որի գերանները տեղադրվել են եկեղեցու ճակատին բացված անցքերի մեջ։ Նոյն ժամանակահատվածում եկեղեցու կիսաբանդ պատերը վերանորոգվել են 50 սմ հաստությամբ, իսկ տանիքը ծածկվել է ազրոշիֆերով։

Արցախյան գյումարտից հետո ֆերմայի շենքերը, բացի եկեղեցոց, ծառայել են որպես անասնագոմեր։ 1990-ական թվականներին ներսը և շրջակայրը մարդվել են կոտտավված հողից ու աղբից, սակայն մինչև նորոգություններն այն գտնվում եր կիսաբանդ վիճակում և փլուզման եզրին էր։

Չինարարական հստակ արձանագրության բացակայության պայմաններում տեղում կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները տալիս են լրացուցիչ տեղեկություններ եկեղեցու կառուցման ժամանակի և ճարտարապետական հրինվածքի մասին։

Եվ այսպես՝ եկեղեցու պատերի մեջ տեղադրված են միանման հորինվածքով բազմաթիվ խաչքարեր, որից 9-ը՝ արձանագիր։

Դրանցից երկուսը գտնվում են շքամուտքի հյուսիսային և հարավային կողմերում։

1. *Ար. Խաչ/ս (ր)արէ/աս / Խաչ/...կ/իմ*<sup>4</sup>։

2. *Խաչ/ս / ...իմ*։

Երկուսը՝ խորանի հարավային խորշում։

3. *Խաչ/ս / Էլային(՞)*։

4. *Խաչ/ս / Հումին*։

1 Սարուշենիների բանափոր պատմությունների համաձայն՝ «XVI դարում Ղարաբաղ մտած թուրքական ասպատակիչները Փիրումաշենի բնակչներին հավաքում, լցնում են եկեղեցին և այրում (**Սկրտչյան Ը.**, Լ.Ղ պատմաճարատարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 184)։ Նշվածը հաստատում մեկ այլ տեղեկություն էլ 1924 թ. մեզ է փոխանցել Սարուշենի լյուղապետը։ 1970-73 թթ. եկեղեցուն հարող տարածքում (արձանյան կողմում) ֆերմա կառուցելիս բռնընդունվ փորելու ժամանակ հայտնաբերվել են իրար վրա լցրած նարդիկային խառը ուլորմեր, որին ականատեսն էր նա։




2 **Արցախեցի**, Սարուշեն գիտը, «Արաք», 1893, գիրը Ա, էջ 44։ Ըստ Մ. Բարխտստարյանցի՝ սարուշենցիները բնիկներ էին (**Քարխուտարեան Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 101)։

3 **Արցախեցի**, նշվ. հոդվ., էջ 45։ Ի հետևություն վերոնշյալի՝ եկեղեցու որմին ամրացված ցուցանակը, որտեղ նշված են ԺԲ-ԺԳ դարերը, իրականությանը չի համապատասխանում։ Այն հավանաբար այդպես է գրի նշատի ունենալով Շահեն Մլրտչյանի հետևյալ միտքը։ «Վերջին տարիներս այստեղ հայտնաբերվել են ևս մի քանի, ավելի հին շինությունների, VII-XIII դարերի բաղիկներու հիմքերը» (**Սկրտչյան Ը.**, Լ.Ղ աշխ., էջ 184)։ Հարկ է նշել նաև, որ եկեղեցին անգամ չափագրել է հուշարձանագետն Ա. Կարապետյանը 1980-ական թթ. (ուն նշվ. աշխ., էջ 185)։

4 Ընթերցումը՝ Բ. Քորբոշյանի։



Խաչքար շքամուտքի հյուսիսային կողմում (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1990-ական թթ., գրչ.՝ Ռ. Զորբոշյանի, 2020 թ.)



Խաչքարեր խորանի հարավային խորշում (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ., գրչ.՝ Ս. Դամիելյանի, 2020 թ.)

Չորսը՝ խորանի հյուսիսային խորշում.

5. Խ/ան/ումիմ<sup>5</sup>:

6. Խաչս / ...ու...ա...իմ:

7. ...իմ:

8. ...քիմ:

<sup>5</sup> Ընթերցումը՝ Ռ. Զորբոշյանի:

Խաչքարեր խորանի հյուսիսային խորշում (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ., գրչ.՝ Ս. Դամիելյանի, 2020 թ.)

Իսկ վերջինը, որը միակ քվակիր խաչքարն է, նույնպես տեղադրված է խորանի հյուսիսային խորշի մեջ.

#### 9. Թվ(իմ) /Ու/Դ (1615 թ.):

Մյուս խաչքարերը, անկասկած, ևս ստեղծվել են նոյն ժամանակահատվածում միզուցե նոյն վարպետի ձեռքով, քանի որ նման են ոչ միայն հորինվածքով, այլև զարդաձևերով և փորագրման տեխնիկայով:

Հատկանշական է, որ խաչքարերը, որոնք ի սկզբանե ստեղծվել են այլ նշանակության համար (հիմնականում՝ որպես գերեզմանական հուշարձան), եկեղեցու պատերի մեջ ավելի ուշ տեղադրվել

ԵԱ Երկրորդական կիրառմամբ (Առյջնիսկ որոշ խաչքարեր տաշվել են՝ գործածվելով որպես շինանյոթ):

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ խաչքարերը եկեղեցու պատերի մեջ են հայտնվել բացառապես շենքի կառուցման ժամանակ: Հետևաբար եկեղեցին կարող էր կառուցվել միայն խաչքարերի ստեղծումից հետո՝ ԺԷ դարում:

Այնուամենայնիվ, Ենթադրում ենք նաև, որ նշված ժամանակաշրջանում Եկեղեցին ոչ թե հիմնադրվել է, այլ հնի տեղում հիմնովին վերակառուցվել: Սակայն այդ դեպքում էլ իին Եկեղեցին պահպանված պետք է լիներ առավելագույնը մինչև 1 մարտի քրիստությանը, քանի որ այդ մակարդակից սկսած տեղադրվել են ԺԷ դարի խաչքարերը:

Հարկ է նշել նաև, որ Եկեղեցու պատերին ազուցված ավելի փառ շրջանի խաչքարերն ու տապանաքարերն հուչում են՝ տարածքում եղել է ավելի փառ ժամանակներին պատկանող գերեզմաններ:

Ինչև, Փիրումաշենի եկեղեցու կառուցման ժամանակի և ճարտարապետական հորինվածքի պարզաբանման համար եթե համեմատական վերլուծությունները կատարենք Արցախի տարածքի ԺԶ-ԺԷ դր. այլ հուշարձանների հետ, ապա կգտնենք բազմաթիվ զուգահեռներ:

Այսպես՝ Փիլումաշենի եկեղեցին հորինվածքը միանալ բազիկի է։ Ունի երկրեք ծածկ, մեկ զոյգ որմնանույթ, իսկ խորանին կից՝ երկու ավանդատուն։

Նման հատակագծային հորիզոնաձըռք հայտնի են ԺԶ-ԺԷ դր. կառուցված Արցախի Հանրապետության Հայրուրի շրջանի Մեծ Թաղեր գյուղի Մարտունու (1603 թ.)<sup>6</sup>, Տող գյուղի Անապատը<sup>7</sup>, Ասկերանի շրջանի Հարավ գյուղի Բնվուրիսանի վանքի<sup>8</sup>, Քաշարայի (Զանգելան) շրջանի Բերբնի գյուղի Եկեղեցիները<sup>9</sup>, Հյուսիսային Արցախի Խանլարի շրջանի Սլրգիկ գյուղի Քարհանի վանքի Եկեղեցին<sup>10</sup>, Մարտունաշեն գյուղի Սիօնիվանքը<sup>11</sup> և այլն:

Հայ ճարտարապետության ուշ միջնադարի եկեղեցական կառույցների հիմնավոր ուսումնասիրություններ, վերլուծություններ և գիտական աշխատություններ, ցավոք, դեռևս շատ քիչ են: Կարծում ենք՝ դրանց անհրաժեշտությունն այժմ զգալի է: Մասնավորապես պետք է հստակ դասակարգել հուշարձանները ըստ ճարտարապետական (ծավալատարածական), հատակագծային (տիպեր և ենթատիպեր) հորինվածքների, ուսումնասիրել արտաքին և ներքին հարդարանքն ու զարդարվեստը, հետազոտել ու բացահայտել կառուցողական հնարքներն ու տեխնիկան:



Խաչքար Խորանի հյուսիսային խորշի մեջ, 1615 թ. (լուս.՝ Ս. Ավագյանի, 2010 թ., առ.՝ Ս. Դամիելուանի, 2020 թ.)



**Եկեղեցու պատերին ագուցված ժամանակը կազմում է 2010 թ.**

Սեր խնդրի ղեապում դասակարգումը կատարում  
ենք հետևյալ ձևով. Փիրումաշենի եկեղեցին մտնում  
է բազիլիկների խմբի մեջ և դասվում միանավերի  
շարքին, առանձնացվում և կարգվում է մեկ զույգ  
որմնամույր ունեցողների ենթատիպում: Այս ենթա-  
տիպի մեջ կարելի է առանձնացնել ավանդատնե-  
րով և առանց ավանդատների եկեղեցիները, ինչպես  
նաև նրանք, որոնք կտարբերվեն մույրերի և կա-  
ռուցվածքային այլ տարրերի առանձնահատկու-  
թյուններով, որոնք եական նշանակություն կունե-  
նան ծավալային հորինվածքի փոփոխությունների  
հարցում: Փիրումաշենն իր ենթատիպի մեջ դասվում  
է այն խմբում, որն ունի երկու ավանդատուն և հզոր,  
խոր տեղադրված որմնամույրեր՝ 120-130 սմ: Դրանց շնորհիվ երկայնական պատերին կից առա-  
ջացել են մույրերից դեպի արևելք և արևմուտք  
ձգվող չորս (երկուար` հարավային և երկուար` հյուսի-  
սային պատերին կից) խոր (100 սմ) որմնակամար-  
ներ: Եկեղեցու աղոթքարանի գլանաձև թաղը, որ

6-8 Σωτηρία και πόλεμοι με την **Ալբանիա** Ը., մշկ. աշխ., էջ 95, 102, 186:

9 Հաստակագիծը տես՝ **Կարպավայսան Ս.**, Հայ մշակույթի հուշաբանները Խորհրդային Արբեքանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999,էջ 208:

10-11 Հատակագծերը տես՝ Կարապետան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 387, 401:



Փիրումաշենի Եկեղեցու շքամուտքը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)

հենված է որմնամույթերն իրար կապող կամարին, իր հիմնամասում նստած է վերը նշված որմնակամարների վրա: Հորինվածքային նման առանձնահատկություններ ունեն վերոնշվածներից Բերքնիի Եկեղեցին և Սիրզիկի Քարհանի վանքը:

Փիրումաշենի Եկեղեցու շքամուտքի համեմատական վերուժությունները ցույց են տալիս, որ այն բնորոշ է ԺԷ-ԺԹ դարերին:

Այսպես՝ մուտքի հատակագծային լուծումը՝ բացվածքի հաստության մեջ տեղադրված ելուստներով, խիստ բնորոշ է նշված ժամանակաշրջանին: Նման շքամուտքեր ունեն Զարհանի վանքի, Բերքնիի Եկեղեցիները, Հյուսիսային Արցախի Դաշկեսանի շրջանի Մածնաբերդի վանքի Եկեղեցին (ավելի վաղ կառույցը շքամուտքի հետ միասին վերանորոգվել է նշված ժամանակաշրջանում)<sup>12</sup>, Բանանց գյուղի Գրիգոր Լուսավորիչ (ԺԹ դար)<sup>13</sup>, Շամխորի շրջանի Զարդավանու գյուղի Սր. Աստվածածին (1872 թ.)<sup>14</sup>, Խանճարի շրջանի Ուլկանապատ գյուղի Սր. Հակոբ Եկեղեցիները<sup>15</sup> և այլն:

Մուտքի ճակատային լուծումը նույնպես ուշ ժամանակաշրջանին է բնորոշ. շրջանակը բավական պացիկ համաշափությամբ վեր է ձգվում բոլոնելով մուտքի բացվածքը ներքեւում: Նման լուծումներ՝ անվախ կառույցի ճարտարապետական հորինվածքից, ունեն Հաղորդի շրջանի Հին Թաղասեռ գյուղատեղիի, Քաշարաղի շրջանի Դակ գյուղի Սր. Մինաս և Սերիկ գյուղի Սր. Աստվածածին, Դյուսիսային Արցախի Շամխորի շրջանի Զարդավանու գյուղի Սր. Աստվածածին և Խանճարի շրջանի Ուլկանապատ գյուղի Սր. Հակոբ Եկեղեցիների շքամուտքերը (լուս.՝ Ս. Կարապետյանի)



Արցախի Դաղորութի շրջանի Դիմ Թաղասեռ գյուղատեղիի, Քաշարաղի շրջանի Դակ գյուղի Սր. Մինաս և Սերիկ գյուղի Սր. Աստվածածին, Դյուսիսային Արցախի Շամխորի շրջանի Զարդավանու գյուղի Սր. Աստվածածին և Խանճարի շրջանի Ուլկանապատ գյուղի Սր. Հակոբ Եկեղեցիների շքամուտքերը (լուս.՝ Ս. Կարապետյանի)

12-15 Հատակագծերը տես՝ Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 159, 249, 415, 517:



Խորանի հյուսիսային խորշը պսակող բարավորը և արևելյան պատուհանի պսակի քարը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)

Մինաս, Մերիկի Սր. Աստվածածին, Հյուսիսային Արցախի Զարդախուր գյուղի Սր. Աստվածածին և Օսկանապատի Սր. Հակոբ Եկեղեցիները:

Եկեղեցու առանձին մանրամասների ճարտարապետական մշակումները նոյնապես բնորոշ են Ժ-ԺԷ դարերին: Այսպէս՝ խորանի հյուսիսային խորշը պսակող բարավորն ունի եռակամար հորինվածք, իսկ կրկնակամար է արևելյան պատուհանի պսակի քարը: Բարավորների նմանատիպ հորինվածքները բնորոշ են ոչ շրջանի կառույցներին:

Փիրումաշենի Եկեղեցու հորինվածքը՝ մեկ զույգ որմնամույրով և կամարի վրա հենված զանաձև քաղաքացի, որ նստում է երկայնական պատերին կից խոր տեղադրված որմնակամարների վրա, քաջ ծանր էր այդ ժամանակի շինարարներին և կիրառվել է ոչ միայն այս ենթատիպի, այլ նաև երկու զույգ և երկու կամարների վրա հենված հորինվածքը ունեցող քարվաճառի Երիցուշեն<sup>16</sup> և Եղջի զյուղերի՝ ԺԷ դարում կառուցված<sup>17</sup> Եկեղեցիներում:

Կառուցվածքային տեսանկյունից Փիրումաշենի Եկեղեցին ունի մեկ առանձնահատկություն. քանի որ ճարտարապետական հորինվածքի լուծումները որմնակամարներից վեր առաջացնում են մեծ ծավալներ, այդ մասերում՝ կրաքսոնե միջուկի (լիցքի) մեջ, թողնված են դատարկ տարածություններ ամրող Եկեղեցու երկայնքով: Դա արվել է տվյալ հատվածներում ծանրությունը թերևացնելու նպատակով<sup>18</sup>:

Տեղում կատարված հետազոտությունները և համեմատական այս վերլուծությունները ցույց են տալիս, որ Փիրումաշենի Եկեղեցին, իրոք, կառուցվել է Ժ-ԺԷ դարերում:

2010 թվականին Արցախի Հանրապետության կառավարությանն առընթեր զրոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վար-



Փիրումաշենի Եկեղեցու մերքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1990-ական թթ.) և արևմուտք (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)

չուրյան պատվերով մեր կողմից կատարվեց Եկեղեցու վերականգնման նախագիծ:

Տեղում պահպանված ճյութերն ու տեսական վերլուծությունները հնարավորություն տվեցին կիսաքանդ և ի դարում որոշ հատվածներում վերափոխված Եկեղեցին վերականգնել ամբողջությամբ և նախնական տեսքով (վերականգնման շինարարական աշխատանքներն ավարտվել են 2014 թ.): Մասնավորապես, պահպանված պատերի միջուկներից պարզվել է, որ Եկեղեցին հարավից պատուհաններ չի ունեցել, ուստի կարելի էր հարավային ու հյուսիսային պատերն ամբողջությամբ բարձրացնել: Անհրաժեշտ էր արևելյան ճակատում վերականգնել կիսաքանդ երկու պատուհանները, իսկ երրորդ՝ հարավային ավանդատան պատուհանը՝ հյուսիսայինի նմանօրինակմամբ: Նույն մերքով վերականգնվել է նաև արևմտյան պատուհանը, որի ներքեւ մասը պահպանվել էր, իսկ խորանի պատուհանի հայտնաբերված պսակի քարի նմանությամբ վերականգնվել են մյուս պսակները:

Վերանորոգման աշխատանքների ժամանակ քանդվել և հեռացվել են ի դարում մանրաշափ քարերով վերաշարված պատերը, ապա հին պատերին համահունչ քարերով և շարվածքով բարձրացնել մինչև քիվի մակարդակը:

Կառույցի ճակտոնի թեքությունը ստացվել է՝ հաշվի առնելով կառուցողական առանձնահատկու-

16-17 Հատվածքները տես Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ալյոթքանին բռնակցված շրջաններում, էջ 42, 48: Նաև նոյնի՝ Մոսավականք, Երևան, 2019, էջ 369, 380:

18 Կառուցվածքային նման լուծումների ուսումնախրություններ մյուս հուշարձաններում դժվար է իրականացնել, քանի որ դրս համար պես է հասուն «զննդաժներ» անցկացնել տանիքներում: Այստեղ դա հնարավոր է եղել տեսնել, քանի որ քաղաքերուց հետո տանիքին հարավային մասում քացվել էր դատարկ տարածությունների մի մասը:




Փիրումաշենի Եկեղեցին հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1990-ական թթ.), արևմուտքից, հարավ-արևմուտքից և հարավից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2010 թ.)



Փիրումաշենի Եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից մինչև վերանորոգումը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1990-ական թթ.) և վերանորոգումից հետո (լուս.՝ Ս. Այվազյանի, 2014 թ.)


թյունները և ճարտարապետական համաշափությունները, իսկ տանիքը ծածկվել է կղմինդրով՝ հիմք ընդունելով այն, որ ոչ միջնադարում Արցախի տա-

րածաշրջանում կղմինդրը եկեղեցիների տաճիքածածկի ամենատարածված շինանյութերից էր<sup>19</sup>:



Եկեղեցու չափագրությունները (հեղ.՝ Ս. Այվազյան, 2010 թ.)

19 Նիկողայոս Ղահրաման-Քսխոյանի հաղորդմամբ հարևան Սարուշն գյուղի բոլոր տները և ոմնեցել են կղմինդրածածկ տաճիքներ (Արցախի, Սարուշն գյուղ, «Արարս», 1893, գիր Ա, էջ 45): Կարելի է ենթադրել, որ ինչպես Սարուշնի, այնպես էլ հարևան Փիրումաշենի բնակելի տները և Եկեղեցն ոմնեցել են կղմինդրեն ծածկ:



Եկեղեցու վերականգնած նախագիծը (հեղ.՝ Ս. Այվազյան, 2010 թ.)

## «ՊԱՏՍԱԿԱՆ ՔԱՂԱՔ ԱՆԻ» ԳՐքԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Սամվել Կարապետյան

**O. Belli, Ş. Öztürk,** Historic city of Ani, Ankara, 2015.

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի պատմությունն ու նյութական մշակույթի հարուստ ժառանգությունն արդեն շուրջ երկու դար գրադարձնում են ոչ միայն մշակույթի և պատմության զանազան ոլորտների բազում հետազոտողներին, այլև արվեստասեր հասարակության լայն զանգվածներին: Հնավայրը դարձել է նաև համաշխարհային ճանաչում ստացած գրուաշրջության աշխայից կենտրոններից մեկը:


Բազմազգ գրուաշրջիկների՝ տարեցտարի դեպի Անի ուղղվող և ավելի ու ավելի ստվարացող խմբերին քաղաքի պատմությանն ու ճարտարապետական հուշարձաններին ծանոթացնելու համար ինքնին հասկանալի է, որ անհրաժեշտ է ունենալ այդ նպատակին ծառայող զանազան հրատարակություններ, որին էլ, ինչպես երևում է գոնե վերջին տարիներին, ձեռնամուխ է եղել Թուրքիայի Հանրապետության մշակույթի և գրուաշրջության նախարարությունը: Պետական կառույց, որի նախաձեռնությամբ էլ լույս է տեսել ստորև գրախոսվող գիրքը:

Հենց սկզբից նշենք՝ շոշափած նյութի խորությունն ու մատուցման ձևը հուշում են, որ խնդրուառկա գիրքը հասցեագրված է ոչ թե մասնագետներին, այլ դրանով հետաքրքրվող ավելի լայն զանգվածներին, իսկ անզլերեն հրատարակությունն էլ՝ հիմնականում օտարազգիներին:

Իհարկե, ցանկացած հրատարակություն, որը ներկայացնում է մայրաքաղաք Անին, ինքնին դրական երևույթ է, սակայն դա միմիայն այն դեպքում, եթե արձարձված նյութը մատուցվում է գիտական անշառությամբ ու բարեխսդությամբ՝ գերծ մնալով հորինումներից և միտումներից:

Ցավում ենք, սակայն, պայ. Օքքայ Բելլի և Շահարեբին Էղոքյուրքի համահեղինակությամբ ստեղծված խնդրուառկա գրքի շարադրանքը ոչ միայն գերծ չէ: մատնանշված անցանկալի երևույթներից, այլև հիմնված է հենց միայն դրանց վրա և առավելագույնը սուսկ ճշմարտանման տեղեկություններով, ըստ ամենայնի, նպատակ ունի բյուրիմացության մեջ գցել անտեղյակ ընթերցողին:

Եվ այսպես, Անիի պատմությունն ու նյութական մշակույթի հուշարձանները ներկայացնող սույն գիրքը բաղկացած է հետևյալ բաժիններից կամ են՝ բավերնազրերից:



Ներածություն

Անի. աշխարհագրություն

Տարածաշրջանի համառոտ պատմություն

Անին և Սետաքսի պատմական ճանապարհը

Անին պատմաբանների, աշխարհագրագետների, դիվանագետների և ճանապարհորդների աշբերով

Հնագիտական պեղումներն ու ուսումնասիրությունները պատմական հնավայրում

Անիի պաշտպանիչ պարիսպներն ու դարպանները

Քաղաքի վերածնունդն օսմանյան սուլթան Արդուլ Սեղինի կառավարման տարիներին

Անիի ամրոցը (ուրարտական ամրոց)

Կույսի ամրոց

Սելջուկյան պալատ

Առաքելոց եկեղեցի (իջևանատուն)

Ատրուշան

Մայր տաճար (Ֆերիեն մզկիթ)

Հոռոմոսի եկեղեցի (Սր. Հովհաննես եկեղեցի)

Սր. Գրիգոր Աբովյանի եկեղեցի (Պահլավունու եկեղեցի)

Կույս Հովհաննեսի վանք (Բեխենցավանք/Կուտանաց վանք)

Գագիկ արքայի Սր. Գրիգոր եկեղեցի

Սր. Ամենափրկիչ եկեղեցի (Խալաքար/Ջեշել եկեղեցի)

Վրացական եկեղեցի

Տիգրան Հոնենցի եկեղեցի (Սր. Գրիգոր/Լուսավորիչ/Ծիրիի/Մունաքար եկեղեցի)

Արուլ Սանուչել մզկիթ (Մեծ մզկիթ)

Արուլ Մուհամեդի մզկիթ (Փլուզված մինարե/Բոզմինարելի մզկիթ)

Անիի պատմական քաղաքային կյանքն ու կացարանները

Հասարակական մեծ բաղնիք

Հասարակական փորք բաղնիք

Շուկայի փողոցն ու առևտրային կյանքը

Վիմափորներ և աղավնատներ

Մետաքսի ճանապարհի կամուրջը

Ստորև ներկայացնում ենք գրքում տեղ գտած առավել էական 33 սխալները, միտունները, կեղծ ծիրներն ու աղավաղունները:

1. Արդեն առաջին խև նախադասության մեջ (էջ 6) Արևմտյան Հայաստանի փոխարեն տեսնում ենք Արևելյան Անատոլիա տեղանկան կիրառումը, որը հորինվել է միայն հայերի ցեղասպանությունից հետո և փոխարինել դարեր շարունակ հենց օսմանյան վավերագրերում և քարտեզներում բազմից հիշատակված Էրմանիստան (Հայաստան) տեղանվաճը: Այլ խոսքով Հայաստան չասելու համար շրջանառվել է Արևելյան Անատոլիա շինձու տեղանունը, որին հետևողականորեն հանդիպում ենք գրքի բազմաթիվ էջերում:

2. Ուրարտական սեպագրերում Անիի հետ նոյնացվող Իշտելուա բնակավայրի հիշատակությունից հետո (սա ևս վիճելի է, որովհետև կա նաև Անիա տեղանունը, որը նոյնացնան համար առավել հավանական է) հեղինակները միանգամից խոսում են 1064 թ. սեղուկ Ալի-Արաւանի կողմից Անիի գրավման մասին, որով փաստացի լուրջան են մատնում այդ քականին նախորդած քաղաքի՝ արդեն խև բազմադարյան, էլ առավել նրա՝ նայաքաղաք եղած շրջանի (961-1045 թթ.) պատմությունը: Ընդ որում, խոսելով Անիի և Կարսի գրավման մասին (էջ 6) ոչ մի խոսք չկա, թե դրանք ո՞ր երկրի և ի՞նչ ազգաբնակչություն ունեցող քաղաքներ էին (Բագրատունյաց քաղաքորության որոշ մանրանամաներ, այնուամենայնիվ, կա գրքի 26-27-րդ էջերում):

3. Մատնանշելով Անիի ճարտարապետական հուշարձանների «ապշեցնող հորինվածքները»՝ չի նշկում ի վերջո ի՞նչ ազգի ստեղծագործություններ են դրանք:

Ծրջանցելով էականը՝ եզրափակվում է «կարծես արևելյան և արևմտյան արվեստի յուրահատուկ համադրություն լինելին» ձևակերպմանը (էջ 7):

4. Ըստ գրքի հեղինակների՝ Անիի բոլոր կառույցները (բացառությամբ, իհարկե, եկեղեցների) ավանդվել են սեղուկյան տիրապետության շրջանից: «Ճարտարապետական նշանակալից նմուշները, ինչպիսիք են մզկիթները, իշլամատները, դամբարասնները, պալատները, համալիրները, շուկաները, բաղնիքները, շատրվանները և կամուրջները, կառուցված լինելով սեղուկների կողմից Անիի գրավումից անմիջապես հետո, մեծ կարևորություն ունեն, քանի որ Անատոլիայում բոլքական ճարտարապետության առաջին նմուշներն են» (էջ 7):

5. Լուրիքան մատնելով Անիի ծաղկման հայկական ժամանակաշրջանը՝ արժեորել են նրա անկումային՝ սեղուկյան և օսմանյան ժամանակաշրջանները. «Պատկանում է նախապատմական ժամանակահատվածին, ինչ ու միջին դարերին, ինչպես նաև սեղուկյան և օսմանյան քաղաքակրթությանը» (էջ 7):

6. Աշխարհագրական դիրքի առումով փոխանակակ գրելու՝ Անին գտնվում էր ինչպես ընդհանրապես Հայկական բարձրավանդակի, այնպես էլ Բագրատունյաց թագավորության գլեթե կենտրոնում, նշել են. «Գտնվում է ճիշտ այն հատվածում, որտեղ հատվում են Արևելյան Անատոլիան, Հյուսիսարևմտյան Իրանն ու Հարավային Կովկասը» (էջ 10):

7. Խոսելով Անիի հնագիտական շերտերի և նրանցում հայտնաբերված գտածոների մասին՝ դրանք վերագրվել են ոչ թե Հայկական բարձրավանդակի բնիկներին, այսինքն՝ հայ ազգը կազմակորած հայկական ցեղերին, այլ «Կովկասի խուրիներին». «Ներքին ամրոցում հայտնաբերված խեցերների կտորների մնացորդները վկայում են, որ Անիում բնակիչներ են հաստատվել դեռևս ուշ պղնձե դարում: Ակսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից՝ Կովկասի խուրիները գերիշխում էին ողջ Արևելյան Անատոլիայում: Խուրրիները, որոնց կցական լեզուն պատկանում է ասիական լեզվաբնակիքին, առաջիններն էին, ովքեր տարածաշրջանում ստեղծեցին այսպես կոչված «մշակութային միասնություն»: Այն հիմնականում դրսուրփում էր խուրրիական ավանդական ճարտարապետական կլոր հորինվածք ունեցող տեսքի առկայությամբ: Փայլուն, լավ տաշված և միագույն կերամիկայի փորք մասշտաբներով արտադրությունը ևս խոսում էր նշված միասնության մասին:»

Անին և նրան հարող տարածքները մ.թ.ա. 2-րդ հազարամյակում դառնում են ավելի խիտ բնակեցված: Դամբարաններից հայտնաբերված միագույն և բազմագույն խեցեների կտորները, որոնք պատկանում են նշված ժամանակահատվածին, Արաքսի հովտում երբեք հայտնաբերված լավագույն նմուշներն են: Դրանք, ինչպես նաև փայլուն միա-

գույն կերամիկան, ցուցադրված են Կարսի թանգարանում» (էջ 14):

8. Գրքի 18-19-րդ էջերում նշվում է, որ ըստ հեղինակների ուսումնասիրությունների՝ Անիում հայտնաբերվել է մ.թ.ա. 8-րդ դարի երկրորդ կեսին վերաբերող հզոր պարսպահատված: Ինարկե, հաշվի առնելով տեղանքի պաշտպանական հարմարությունները՝ միանգամայն սպասելի էր, որ Անին ամրոցի նշանակություն ունենար նաև նշյալ ժամանակաշրջանում, սակայն սրանց բխեցրած հետևորդուն է. «Հզոր պարսպի ավերակները, որոնք ամրոցի ճարտարապետական հիմն մնացորդների մի մասն են, ապացուցում են, որ ամրոցը չի պատկանում միջնադարյան Կամսարականների արքայատոհմին, այլ այն կառուցվել է մ.թ.ա. 8-րդ դարի երկրորդ կեսին՝ Ուրարտական թագավորության ժամանակաշրջանում»: Այլ խոսքով՝ Անին չէր կարող Կամսարականներին պատկանած լինել, քանի որ նրանցից մոտ 1,5 հազարամյակ առաջ հիմնել են ուրարտացիները (թերևս մնում է միայն հիմնալ հեղինակների տրամարանությամբ և եզրակացության անհերթերությամբ):

9. Ապա հեղինակները նշել են, որ ուրարտական պետության անկումից հետո Անին ընկնում է ճախ՝ «կովկասյան սկյուրների» (28 տարի), ապա՝ «մեղինաների, պարսկական և սասանյան» իրարահաջորդ տիրապետությունների տակ: Որպես հաջորդ հանգրվան՝ նշել են նաև նակեղոնական գերիշխանության մասին՝ այս դեպքում արդեն մեծահոգաբար առաջին անգամ հիշելով Հայաստանի անունը և առանց Երվանդունիների հայկական թագավորության (մ.թ.ա. 570-207 թթ.) տիրապետության շրջանի մասին մի խոսք ասելու՝ իրարահաջորդ տասը տիրակալներից հիշատակել են միայն վերջինին և նրան վերագրել պարսկական ծագում. «Մ.թ.ա. 319 թվականից հետո տարածաշրջանն անցավ պարսկական ծագմամբ Երվանդի տիրապետության տակ» (էջ 20):

10. Արտաշեսյան հարստության ներկայացուցիչներին (մ.թ.ա. 189-մ.թ. 1 թթ.) սանձարձակորեն համարել են իրը ոչ բնիկներ՝ հիշատակման արժանի շիամարելով ոչ հարստության, ոչ էլ նույնիսկ աշխարհակալ Տիգրան Բ-ի անունը. «Մ.թ.ա. 140 թվականից հետո Արտելյան Անատոլիայի տարածաշրջանում բախումներ սկսվեցին պարեների և Հռոմեական կայսրության միջև: Մ.թ.ա. 2-րդ դարից մինչև մ.թ. 53 թվականը տարածաշրջանը դեկավորում էին ոչ բնիկ կառավարիչները» (էջ 20):

11. Նշելով Իրանում Պարքեական հարստության անկման և Սասանյանների՝ իշխանության գալու մասին՝ հեղինակներն ակնհայտորեն դարձյալ միտումնավոր լրում են մ.թ. 52/65-428 թթ. հայոց թագավորության գոյության մասին և դրա փոխարեն ստեղծվ նշում, որ Այրարատյան նահանգն այդ շրջանում մոտ 200 տարի իրը մնացել էր Սասա-

յան տիրապետության ներքո. «226 թվականին Պարքեական կայսրությունն անկում ապրեց, և Իրանում գերիշխող դիրք հաստատեց Սասանյան կայսրությունը: Կարսի շրջանը՝ Արարատի մարզ անվամբ, մոտ 200 տարի շարունակ մնաց Սասանյանների տիրապետության տակ» (էջ 20):

12. Կամսարական իշխանական տոհմի և Տրդատ Գ-արքայի մասին հեղինակներն այնպիս են նյութը ներկայացրել, որ անտեղյակ մեկը ոչ մի կերպ չի կարող զիմի ընկնել, թե խոսքը հայ իշխանական տոհմի և հայոց արքայի մասին է. «Կամսարականների տիրապետությունը հին քաղաքում հաստատվեց, երբ Տրդատ Գ-ն, որը 301 թ. քրիստոնեություն ընդունեց, Արփաշայի և Կագիզմանի շրջակայքի տարածքը շնորհեց իր ազգականին՝ Արշավիր Կամսարականին: Վերջինիս հետ թագավորը հանդիպել էր դեպի Իրան արշավանքի ժամանակ, և միասին մկրտվել էին սր. Գրիգոր Լուսավորչի կողմից 311 թվականին» (էջ 20):

13. Պատմական իրականության հետ որևէ առնչություն չունի «Կամսարականների արքայատոհմը Բագարանը (Քիլիթթաշը) դարձրեց Անիի մայրաքաղաքը. նրանք գերադասեցին տեղափորվել ներքին ամրոցի ներսում» (էջ 20) ձևակերպումը, քանի որ Կամսարականներն արքայատոհմ չեն, և 9-րդ դարի վերջին Բագարատունիներն էին Բագարանը մայրաքաղաք հոչակել:

14. Խոսելով 4-րդ դարի պարսկա-բյուզանդական հակամարտության հետևանքների մասին հեղինակները նշում են, որ «Էրզրումը, Երզնկան, Թուճելին, Էլազիզը, Դիարբեքիրը, Մարդինը և դրանց շրջակայքն անցան բյուզանդացիների տիրապետության տակ, իսկ Արևելքի առավել մեծ և պտղաբեր հատվածը, ինչպես նաև Կարսի շրջանը բնակչությունը Սասանյաններին» (էջ 20)՝ առանց ընթերցողին պարզ դարձնելու, թե այդ ո՞ր երկիրն էր, որ փաստացի մասնատվեց հիշյալ երկու տիրությունների միջև:

15. Հայաստան երկրի անունը չի պարզում նաև նախորդ պարբերության շարունակությունը, որտեղ նշված է. «Այսպիսով, տարածաշրջանում ավարտվեց Արշակունիների տիրապետությունը, և այդ ժամանակից ի վեր այն կառավարվեց սասանյան մարզպանների կամ բյուզանդական հրամանատարների կողմից» (էջ 24):

16. Խոսելով Մամիկոնյան, Կամսարական և Բագրատունի իշխանական տոհմների՝ պարսիկների, ապա նաև արաբների դեմ մղված պայքարի մասին՝ հեղինակները ոչ մի տեղ չեն նշել՝ այս իշխանական տները վերջապես ի՞նչ ազգի ներկայացուցիչներ էին և ո՞ր երկրի ու ազգի ազատության համար էին կովում ու նահատակվում (էջ 24-25):

17. Գրքի 39-56-րդ էջերը հեղինակները նվիրել են զանազան պատմիչների, աշխարհագրագետների, դիվանագետների, ճանապարհորդների՝ Անիի

մասին բողած հիշատակությունների՝ ըստ ժամանակագրության առանձին քաղվածքների ներկայացմանը: Սակայն այս շարքը 5-րդ դարի հայ պատմիչներ Ղազար Փարպեցուց և Եղիշեից սկսելու փոխարեն, որոնք առաջինն են հիշատակում Անին, սկսել են 10-րդ դարի արար աշխարհագրագետ Իրն Հառկալից, որն ընդհանրապես որեւէ հիշատակություն չունի Անին մասին. «Բավական ուշագրավ է Իրն Հառկալի՝ 10-րդ դարի աշխարհագրագետի աշխարհահոչակ գիրքը՝ «10-րդ դարի խլանական աշխարհագրությունը», որը պատմում է Կովկասի, Արևելյան Անատոլիայի, Իրանի և Միջագետքի առևտրային աշխույժ քաղաքների մասին, սակայն որոշ պատճառներով հեղինակը հնարավորություն չի ունեցել այցելել Անի կամ իր գրքում տեղեկություններ չի գետելել նրա մասին: Իրն Հառկալի՝ 10-րդ դարի երկրորդ կեսին գրված գրքում Անին մասին տեղեկության բացակայությունն ակնհայտորեն մեծ բացրողում է գիտության պատմության մեջ» (Եջ 40): Մեկը հարցնող լինի, եթե այս արար հեղինակն ընդհանրապես Անին չի հիշատակում, ապա խնդրու տեսանկյունից սրա էլ ի՞նչն է «Բավական ուշագրավ»:

Բաժնում ներկայացված մյուս պատմիչների շարքում էլ ակնհայտորեն նախապատվությունը տրված է արար, բուրք կամ օտարազգի հեղինակներին (Իրն-ուլ-Ասիր, Կայի Բուրքանեղիլի Արունասր, Յակուտ ալ Համավի, Վիլիեմ դե Ռուրուր, Անստորական քահանաներ Սավմա և Սարկու, Գրեգորի Արուլ Ֆարակ, Համբուլլահ ալ Սուստեֆի Դազինի, Ռուլ Գոնսալես դե Կլավիխու, Էվլիյա Զելերի, Գամելի Կարրեի, սրբ Ռուբեր Կեր Փորքեր, Ռուլլիամ Ջոն Համիլթոն և Լորդ Կինրոս), իսկ հայ պատմիչներից՝ միայն Կիրակոս Գանձակեցուն, բայց, օրինակ, մոռացության է մատնված Անիի մասին ամենից շատ վկայություններ բողած և ծնունդով էլ անեցի պատմիչ Սանվել Անեցին:

18. Հպանցիկ մի քանի կառույցներ հիշելուց հետո հեղինակները նշել են, որ ևս մի քանի եկեղեցիներ էլ գտնվում են ուստական կողմում. «ճանապարհով դեպի ներքև կան նաև ավերված կամուրջ, միանավ մի քանի եկեղեցիներ, որոնք ուստական կողմում են» (Եջ 55): Հետաքրքիր է՝ ի՞նչ ուստական կողմի մասին են նշել հեղինակները, եթե այն վերացել է 1917 թ.-ից, իսկ 1991 թ.-ից անցյալի «ոռուսական կողմը» Հայաստանի Հանրապետությունն է, որի մասին փաստորեն տեղյակ չեն:

19. Հայկական ճարտարապետություն շատելու համար հեղինակներն անվերջ շրջանառում են «Արևելյան ճարտարապետություն» ձևակերպում՝ առավելագույնը նշելով՝ իրը «Հայաստանը կարծես արևելյան և արևմտյան ճարտարապետության կատալոգատոր լինի» (Եջ 56):

20. Անիական ճարտարապետությունն ամեն կերպ ոչ թե զուտ հայկական, այլ ինչ-որ տարածա-

շրջանային լրովքած երևոյթ ներկայացնելու միտունով հեղինակները նշել են, որ իրը Մատի «պեղումները բացահայտեցին նաև իրանական, վրացական, բյուզանդական, բուրքական և արարական մշակույթների փոխադարձ ներգործության մասին, որոնք իրենց անդրադարձն են գտել Անիի մշակութային շինուարձուներում: Բացի այդ՝ Անին միայն հայկական ճարտարապետության ազդեցությանը չէ, որ ենթարկվել է քաղաքն ավելի շուտ վրացական, բուրք-իսլամական, իրանական և բյուզանդական քաղաքակրթությունների մշակութային յուրատեսակ խճանկար էր» (Եջ 63, 66):

21. Հայտնարերված միջնադարյան բաղնիքներն առանց որևէ հիմքի համարվել են սելջուկյան. «Ավերակներում սելջուկյան մեկական մեծ և փոքր բաղնիք է հայտնաբերվել. դրանց մասին մանրամասն տեղեկությունները իրապարակվել են» (Եջ 68):

22. Գրի հեղինակները մի դեպքում Անիի Սր. Փրկիչ եկեղեցու՝ կիսով չափ քանդվելը վերագրում են 1988 թ. երկրաշարժին (Եջ 69). ի դեպ, երկրաշարժի տարեթիվը սխալմամբ նշել են 1989, այն կրկնվում է նաև 92-րդ և 128-րդ էջերում: Բացի այդ՝ կոչել են Երևանի երկրաշարժ, մինչդեռ այն հայտնի է եպիկենտրոնի՝ Սպիտակի անվամբ), իսկ մեկ այլ դեպքում նշել են, որ եկեղեցին փլուզվել է 1957 թ. փորորկից (Եջ 128): Մինչդեռ իրականում եկեղեցին փլուզվել է հիմնաշարի հատվածում թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ երեսապատի քարերի հափշտակման և կառույցը սուսկ կրաշաղախ միջուկի հույսին բողնելու պատճառով: Ի դեպ, այդ նույն ձևով 2007 թ. փլուզվեց Մինահ տաճարի հարավային ճակատը, իսկ մյուս ճակատները ևս միևնույն վտանգի առջև են կանգնած:

23. Գրականության մեջ Պարտնի կամ Պահկավունյաց անվամբ հայտնի իշխանական ապարանքը գրի հեղինակներն առանց այլայլության վերագրել են սելջուկներին («Սելջուկյան պալատի պեղումների ժամանակ գլխավոր դարպասի ներսում հայտնաբերվել են պարսպին պատկանող հախճասալիկներ, որոնք շատ կարևոր տեղեկություններ են հաղորդում Անատոլիայում սելջուկյան ժամանակահատվածի ճարտարապետական լուծումների մասին: Կասկածից վեր է, որ դրանք շատ գեղեցիկ ձևով կցված են եղել պալատի պատերին» (Եջ 70): Այստեղ հարկ է նկատել, որ խճասալիկային կցումներով զարդարանդակ շքամուտքերը 13-րդ դարի առաջին տասնամյակների՝ առավել հատկանշական լուծումներից են, որոնք հանդիպում են Մշկավանքի, Հառիճի, Սաղմոսավանքի, Բարձրաքաջի, Մակարավանքի, Նոր Վարագավանքի և բազմաթիվ այլ հոգևոր կենտրոնների եկեղեցիներում կամ գավիթներում (ի դեպ, չի բացառվում, որ այս պատճենը ևս կառույցած լինի հենց ամեցի ճարտարապետ Գագանը, որը 1237 թ. նույնախսի

լուծումներով կերտել էր Նոր Վարագավանքի շքամուտքը. կամ հայ ճարտարապետների նույն դպրոցի ներկայացուցիչներից մեկ ուրիշը): Նաև հենց Անիում գտնվող և թերևս նույն ճարտարապետի կողմից կառուցված Սարգսի ապարանքից հայտնարերված նմանատիպ զարդարանդակներում առկա են նաև հայերեն արձանագրությամբ նմուշներ, որոնք դարձյալ վկայում են ապարանքի՝ հայաշեն լինելու մասին: Այս ամենից զատ՝ պարզից պարզ է, որ 13-րդ դարի առաջին տասնամյակներում (մի ժամանակաշրջան, երբ սելջուկյան ներկայությունն ու առավել ևս նրանց շինարարական գործունեությունն աննշանաբար էին) նոր ու շքեղ Եկեղեցիներ հիմնադրած հայ իշխանական տոհմերի ներկայացուցիչները բնականաբար կառուցել են նաև իրենց ապարանքները:

Պարոնի պալատի մասին, որպես սելջուկյան ապարանք, խոսվում է նաև գրքի 92-94-րդ էջերում հատուկ այս հուշարձանին նվիրված բաժնում:

24. Պարիսպներում առկա բոլոր դարպասները (դրեները) իրենց բուն՝ պատմական կամ մասնագիտական գրականության մեջ վաղուց ամբարված անուններով (Խօսձորի, Կարուց, Ավագ, Նոր Դվն կամ Շախմատաշար, Գայլաձորի, Առյուծի, Բեյնեց, Սանդաշար, Բագրատ Արքայունու կամ Սարգիս Ծիլենցի, Հին Դվնու կամ Երևանի, Միջնաբերդի ստորոտի և Ծաղկոցաձորի) կոչելու փոխարեն ներկայացվել են նորերս հորինված բուրքերեն ինչ-որ տարբերակներով. «Առավել հաճախակի օգտագործվող դրեներն են Արսանիի, Կարսի, Սարնիչի դարպասները: Արսանիի դարպասի մոտակա աշտարակի վրա սուլթան Ալփ-Արսլանի կողմից քաղաքի նվաճման մասին պատմող արձանագրությունն է: Դեպի արևելք են տեղակայված Աշեմարլը, Մըլմըլ Դերեսի և Բաղսեկսի դրեները: Արևոտքրում է գտնվում Օղրունի դուռը՝ Կարսի դրան մոտակայքում» (Էջ 73, 77):

25. Գրքի 79-րդ էջը սկսվում է բաժնի արտառոց վերնագրով «Քաղաքի վերածնունդն օսմանյան սուլթան Արդուլ Մեջիլի կառավարման տարիներին»: Ընդ որում, ինչպես պարզվում է սույն վերնագրի ներքո գետեղված շարադրանքից, հեղինակներն այսպես են վերնագրել սուկ Արդուլ Մեջիլ սուլթանի (1839-1861 թթ.)՝ Անիի նկատմամբ ունեցած, սակայն բնակ շիրագործած ինչ-ինչ ծրագրերի պատճառով:

26. Արքունի Եկեղեցին կառուցվել է ոչ քե 7-րդ, այլ 10-11-րդ դարերի սահմանագլխին (Էջ 83):

27. Առաքելոց Եկեղեցու մասին խոսվում է՝ անվերջ շեշտերով նրա կրած իր սելջուկյան ազդեցությունը, ընդ որում, առանց զանազանելու գավիրը Եկեղեցոց և, առավել տարօրինակ է, անհական պաշտամունքային ճարտարապետության այս գոհարը համարելով իշխանատուն. «Եկեղեցում (իշխանատանը) պեղումներ են կատարվել Ն. Մատի-

կողմից 1909 թ.: ...պարզ դարձավ, որ այն վերակառուցվել է, և իսկամական հետագա տարիներին մի քանի լրացուցիչ շինություններ են ավելացվել: Եկեղեցին ունի քառակուսի հորինվածք: Ներսում դրա հատակագիծը կարծես երեխուկի տերևի տեսք ունենա: Խաչի թերը միջնամասում ավելի են խորանում, իսկ դրանց վրա գմբեթն է, այն դեպքում, երբ թերի ծայրերին կիսագմբեթներ են: Յուրաքանչյուր անկյունում առկա է ավանդատուն: Ծինությունն ունի հաղորդակցող դրներ, որոնք բացվում են դեպի կից մատուններ կամ այլ հատվածներ: Այդ իսկ պատճառով է այս շինությունը նաև անվանվում իշխանատուն: Սելջուկյան ոճի երկրաշափական զարդանախշերը դրան եզրանակներում բարձր որակի և ճաշակի գրավական են: Գնդերի կողքերի շրաքարե առաստաղի քարե զարդանախշերը, պարագած ավարտով դրները և երկու կողմերի եռանկյունած որմնախորշերը հաստատում են այս զաղափարը, որ սելջուկյան մշակույթը և արվեստը մեծապես ազդեցույթուն են ունեցել հետագայում համարված շինությունների վրա» (Էջ 96):

28. Ներկայացնելով Անիի այն հուշարձանը, որը որոշ պայմանականությամբ համարվում է Ասրուշան, գրքի հեղինակները բվագրում են մ.թ.ա. 5-4 դդ.-ով և եզրահանգում, որ այն կարող էր կառուցված լինել պարսկների կողմից: Այնպիսի տպափորություն է ստեղծվում, որ հեղինակներն Անիի շինություններից ի գորու են հայկական համարելու միայն քրիստոնեական դպանանքի ակնիայտ դրոշը կրող հուշարձանները, իսկ նախաքրիստոնեականները՝ ոչ: Մինչեւ նշված դարերում Հայաստանը կառավարում էր Երվանդունիների հայկական արքայական հարստությունը, և հասկանալի է, որ նաև նշյալ ժամանակներում հայերն ունեին իրենց պաշտամունքային կառուցվերը, սակայն խնդրու առարկա գրքի հեղինակները, կարելի է ասել, հաճգել են ահա այսպիսի անհերեք հետևողական պատճառով:

29. Մայր տաճարի առնչությամբ հեղինակները նշել են. «Մայր տաճարը, որը սելջուկյան ժամանակահատվածում հայտնի է Ֆերիե մզկիթ անվանք, քաղաքի գլխավոր հոգևոր շինություններից է: Հիմնադրումը ֆինանսավորել է Գագիկի կինը՝ Կարուսիկ սրբավայր շինություններից է: Նմանատիպ ատրուշաններ հայտնաբերվել են նաև Իրանում և Աղրբեջանում» (Էջ 96-97):

29. Մայր տաճարի առնչությամբ հեղինակները նշել են. «Մայր տաճարը, որը սելջուկյան ժամանակահատվածում հայտնի է Ֆերիե մզկիթ անվանք, քաղաքի գլխավոր հոգևոր շինություններից է: Հիմնադրումը ֆինանսավորել է Գագիկի կինը՝ Կարուսիկ սրբավայրի շինությունը...» (Էջ 97): Մինչեւ իրականում այն ավարտվել է 1001 թ. ավարտել հոյակերտ Եկեղեցու շինարարությունը...» (Էջ 97): Մինչեւ իրականում այն ավարտվել է 1010 թ. միայն

վերսկսվել է դեռևս 989 թ. իհմնադրված, սակայն ընդհատված տաճարի շինարարությունը):

30. Բեխենց կամ Կուսանաց վանքի կառուցման վերաբերյալ հարկ չկար նշելու «Կարծիք կա, որ եկեղեցին կառուցվել է 13-րդ դարում Տիգրան Հռնենցի կողմից» (Էջ 114), քանի որ նրանից ոչ հեռու գտնվող Սրբագրի Գրիգոր Լուսավորիչ կամ Տիգրան Հռնենց անվամբ հայտնի Եկեղեցու՝ 1215 թ. շինարարական արձանագրության մեջ արդեն խև հիշված է Բեխենց վանքն իշխան Տիգրան Հռնենցի կողմից կառուցված լինելու մասին:

31. Սրբագրի Եկեղեցու մասին նշվել է. այստեղ «...1291 թ. իլխանները կառուցել են ժամատուն» (Էջ 128): Իրականում ոչ թե իլխանները և ոչ թե ժամատուն, այլ Շերամի որդի Մշիքարը նշյալ թվականին զանգակատուն է կառուցել: Բացի այս՝ 1131 թ. կործանված և 1193 թ. վերականգնված Եկեղեցու գմբեթի վերաշինումը թյուրիմացարար վերագրվել է 1342 թ., մինչդեռ նշյալ թվականին տեղի է ունեցել արդեն խև գոյություն ունեցող գմբեթի նորոգությունը, ընդ որում, բնավ ոչ Վասիլ ճարտարապետի ձեռքով (այս անունը վիմագրի սխալաշատ վերծանության արդյունք է):

32. Պայմանականորեն «Վրացական» կոչվող Եկեղեցու (ըստ ամենայմին, սա հայ քաղկեդոնական համայնքին պատկանող կառույց էր) առթիվ նշվել է, որ հարավային պատը փլվել է 1840 թ. (Էջ 128), սակայն 1900-1904 թթ. միջակայրում կատարված լուսանկարներում այն դեռևս կանգուն էր: Ընդ որում, կառույցի երկարակեցությունն ապահովելու նկատառումներով 1904 թ. Ն. Մատի գլխավորությամբ կատարվել էին մասնակի վերականգնման և

ամրակայման աշխատանքներ, ուստի Եկեղեցու հարավային որմը փլուզվել է շատ ավելի ուշ, ամենայն հավանականությամբ, այնպես, ինչպես Սրբագրի Եկեղեցու կեսը, այսինքն՝ այստեղ երեսապատի սրբատաշ քարերը ևս հափշտակվել էին, խև որմը, սուսկ կրաշաղախ կմախքի վրա չղիմանալով, փլուզվել եր:

33. Անդրադանալով Մանուչեի մզկիթին՝ հեղինակները շեշտել են. «Անատոլիայի խլամական ժամանակաշրջանի ամենանշանավոր և իին մզկիթներից մեկն է....: Կառուցվել է մոտ 1071 և 1072 թթ. ամիրա Արուլ Մանուչեի կողմից, որին սուլթան Ալփ-Արաքսան Անիի նվաճումից հետո կառավարիչ էր նշանակել: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ մզկիթը կառուցվել է այլ շինության իմքի վրա, խև մինարեն ավելացվել է ավելի ուշ ժամանակահատվածում» (Էջ 142): Այստեղ հարկ է նկատել, որ այս ամենահին մզկիթ կոչվածը պարզապես 13-րդ դարի առաջին տասնամյակներում կառուցված աշխարհիկ կառույց է, որին հետագայում ընդամենը մինարեն է կցվել, ուստի և այստեղ հնաշեն մզկիթ, որպես այդպիսին, գոյություն չունի, որ դեռ համարվեր Անատոլիայի ամենահիներից մեկը (այնպես, ինչպես ասեմբ Մայր տաճարն էլ միառժամանակ մզկիթի էր վերածվել, բայց շենքն ի սկզբանե մզկիթ չէր):

Մատուցված ամփոփում ենք խնդրո առարկա գրքի գրախոսությունը: Պետք է խոստովանենք, որ այն, հակառակ տեղ գտած բազմաթիվ անձշտությունների, անմեղ կամ միտումնավոր խեղաքյուրումների, այնուամենայնիվ, նախկին մի շարք հրատարակությունների համեմատ, շատ ավելի ճշմարտություններ է պարունակում:

## ՀՈՒԾԵՐ

Արքուր Թամրազյան

### Հիշողության պղպջակներ

Երկար տարիներ մտածում էի կիսվել իմ հիշողություններով մեր գյուղի պատմության որոշ էջերի, դեպքերի մասին, սակայն վստահ չէի, որ կարող եմ արժանի ձևով շարադրել զգացածս ու տեսածս: Բայց ահա մի դեպք ստիպեց ինձ, այնուամենայնիվ, փորձել:

Վերջերս պատահաբար իմացա, որ ավելի քան մեկ տարի առաջ՝ 2017 թ. սեպտեմբերին, Դոնի Ռոստովում վախճանվել է մեր համագյուղացի քժիշկ Իւֆան Օհանյանը: Այդպիսի մարդկանց սովորաբար անվանում են «մեծատառով մարդ»: Նա ռազմական վիրաբույժ էր, ոներ գնդապետի կոչում, երկար տարիներ աշխատել էր տարբեր երկրներում, որտեղ սովորական գորքերի հոսպիտալներ կային՝ ժուրգ-մեծիայում, Ռումինիայում և Գերմանիայում: Շառայության վերջին վայրը Դոնի Ռոստովն էր:

Գյուղում բոլորը նրան կոչում էին Դոկտոր Վանյա: Եթե արձակուրդի ժամանակ ընտանիքով զալիս էր գյուղ՝ ծննդմերին տեսության, բոլոր բնակիչներն այցելում էին նրան, հատկապես՝ իրենց իիվանդությունները բուժելու: Նա ընդունում էր բոլորին, մեկմեկ զննում, դեղեր նշանակում, խորհուրդներ տալիս, հասնում բոլորի ցավին ու դարդին, ամորում, քժկում: Նրա օգնությանն էին դիմում նաև հարևան հայարնակ Ղալակս և Ուշտալ (կնոջ ծննդավայրը) գյուղերի բնակիչները: Սիրում էր մարդկանց, սիրում էր ծառայել նրանց, բուժել ցավերին սպեղանի դնել: Դա իր պարտըն էր համարում:

Դոկտոր Վանյան զավակներին էր փոխանցել իր մարդասիրությունն ու մասնագիտությունը: Եթեր զավակներն էլ քժիշկներ էին, ինչպես նաև նրա երեք քուները: Այն՝ նա մարդկությանը տվել է քժիշկների երկու սերման: Ցավալին այն է, որ նրա մահվան մասին հայկական մեր երեք գյուղերի բնակիչների մեծ մասը տեղյալ չէր, և քաղման արարողությանը ոչ մեկը չի մասնակցել: Ծիշու է, 1988 թ.-ից գյուղերը հայաբափ են, բնակչությունը ցրված է աշխարհով մեկ, բայց դա, ըստ իս, անբավարար արդարացում է:

\*\*\*

Սեր գյուղը գտնվում էր Կովկասյան լեռնաշրջայի նախալեռնային գոտում՝ ներկայիս Ալբրեժանի Խսմայիլիի շրջանում՝ Ղալակա և Ուշտալ գյուղերի արանքում: Այն երեք կողմից շրջապատված է ձորակներով, իսկ հյուսիսային կողմից՝ վեր բարձրացող բլրալանջերով:

Պատմական անունն Ազայիշեն է: Ղարևան գյուղերը կոչում էին Նորշեն, իսկ պաշտոնական ա-



Տեսարան Ազայիշեն գյուղից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

նունը Սովորամիքնեան էր: Ամենահին շենքը դպրոցն էր՝ կառուցված 1907 թ., որտեղ սովորել են մեր պապերը, ծնողները, ինչպես նաև՝ մենք:

Սարալանջին գտնվող գյուղը բաժանվում էր երկու՝ Երե (Վերին) և Ներքե (ստորին) քաղերի: Մեր՝ Ներքե քաղի երեխանների հիմնական խաղատեղին ֆուտրովի դաշտն էր, որը գտնվում էր գյուղի ծայրին՝ գերեզմանոցի հետևում: Վաղ գարուն էր: Օդում զգացվում էր դալար խոտի և փորվող հողի արթեցնող բուրմուճքը:

Տղաներով վերադառնում էինք ֆուտրովի դաշտից, երբ դեմ հանդիման դուրս եկավ գյուղի՝ հենց առաջին տաճը ապրող Անզին տատին և դիմեց մեզ.

– Խոխսեք, օգում ուժ ծեղ հետ էքյուծ միջի անիմ:

– Անկին թի, միջին հի՞նչ ա-, հարցրինք մենք:

– Դե, Արքյունը էլ կափուչ, ես էլ մինակ խաղողնեան քաղը կարում չում պիհիմ: Վեր կյաք, քոմագ ինիք, մինտեղ պիհինք, տա կոչվում ա միջի:

Սենք, իհարկե, անմիջապես խոստացանք զալ և օգնել: Հաջորդ օրը 10-12 հոգով անցանք աշխատանքի: Մոտ 2 ժամվա ընթացքում ամբողջ հողամասը փորված էր: Սեր արածից գոհ՝ սկսեցինք հրաժեշտ տալ Անզին տատիկին: Նա կտրականապես հրաժարվեց մեզ բաց թողնել առանց կերակրելու: Անակնկալի եկանք, չինք պատրաստվում նեղություն տալ ծեր կնոշի: Անզին տատին մեզ բացատրեց, որ միջի-ն ոչ միայն միասին աշխատելու է, այլև միասին սեղան նստելու ու ուտել-խմելը: Ծարահատյալ համաձայնեցինք և քաշվելով, իրար իրմշտելով, իրար իետեղում բաքնվելով՝ բարձրացանք երկրորդ հարկ: Տունը մեծ էր, երկիարկանի: Առաջին հարկում ընդարձակ մասնաներ էին, իսկ երկրորդ հարկը բնակելի մասն էր: Ընդհանրապես ամեն տեղ զգացվում էր



Տեսարաններ Դալակա և Ուշտալ գյուղերից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

հնության շունչը: Մեզ առանձնապես զարմացրեց մեղվափերակների անսովոր ձևը: Դրանք կլոր-զլանաձև էին՝ հյուսված դալար շիվերից, դրսից ծեփով, կավահողով և կրով սպիտակեցված:

Եթե բարձրացանք երկրորդ հարկի ընդարձակ քացածամբը, տեսանք ճշու ուտելիքներով բարձված սեղանը: Կերակուրներից հիշողության մեջ մնացել են խաչած հավերը և բրնձով ու ճվածեղով վիլավը կամ, ինչպես գյուղում ասում էին, ճաշը: Մենք 6-8-րդ դասարանների երեխաներ էինք, ամաչում էինք օգտվել սեղանից: Անզին տատիկը բոլորին հորդրում էր ուտել և մեր ախորժակը քացելու համար մի քիչ օդի լցրեց: Զարմացած և վախսվորած հրաժարվում էինք օդուց, սակայն նա բացատրեց, որ դա էլ է մտնում միջին արարողության մեջ, և որպեսզի մեզ ոգերի, ասաց՝ ինքն էլ է մեզ հետ խմելու:

– Յա՛, Անկի՞ն քի, կնանի՞ քն էլ էն արադ խմում, – զարմացած ու ցնցված բացականչեցինք մենք:

Մենք իսկապես չէինք տեսել, որ գյուղում կանայք օդի խմելն, հազվագյուտ դեպքերում խմում էին 1-2 բաժակ տնական քաղցր զինի: Անզին տատիկն բացատրեց, որ եթե ամուսինը ողջ էր, հյուրերի համար իրեն խնդրում էր օդի քերել: Ինքն էլ իշնում էր մառան, որտեղ տակառիկներում օդի և զինի կային: Բարակ խողովակով քաշում էր օդին և լցնում սափորի կամ կուլայի մեջ և ամեն անգամ քաշելու ականա մի կում օդի էր կուլ տախիս: Այդպես սովորեց օդի խմել:

Եթե դրւու եկանք փողոց, մեզ համակել էր մի անասելի, ես կասեի՝ գորողության հասնող հպարտություն. չէ՞ որ օգնել էինք մի ծեր կնոջ՝ Անզին տատիկին՝ Արյուն պապի՝ Հարություն Օհանյանի կնոջը<sup>1</sup>:

Իմանալով Հարություն պապի հերոսական անցյալի մասին՝ միշտ հարգանքով էինք վերաբերվում նրան: Համեստ ու հպարտ մարդ էր, հպարտ իր հերսական անցյալով և մանավանդ՝ «դոկտոր Վանյա»-ի հայրը լինելու համար:



Եվ այսօր ես մեր ժողովրդի անունից գլուխ եմ խոնարհում այդ ընտանիքի բոլոր ննջեցյալների հիշատակի առաջ: Ասում են՝ մարդն ապրում է այնքան ժամանակ, ինչքան նրան հիշում են:

Ինչքան էլ ցրված լինենք, պետք է հիշենք մեր նախնիներին, նրանց գործերը: Թուրքերով շրջապատված գյուղերում նրանք ապրել են, արարել, քացել հայկական դպրոցներ, սերունդներ դաստիարակել:

\*\*\*

Գյուղի հիշարժան հուշարձաններից էր 1908 թ. կառուցված ջրամբարը, որը գտնվում էր ներքի ձորակում Ներքի ճյուր կոչվող վայրում: Վարպետները փակել էին քարանձավից բխող ավի առջկի մասը և խողովակով ջուրը հասցրել սրբատաշ քարերով կառուցված ջրամբար, որի ճակատին արձանագրված էր.

*Հիշատակ Սա/նվլի Թափաթեանց(ի), 1908 թ.:*

Սեր գյուղի վերջին քահանան էր Աղասի Թամրազյանը, որին ասում էին Ըռըքալանց դերը: Շատ համեստ ու կրված մարդ էր: Նրա մասին պատմում էին, որ շատ էր վախենում շներից, դրա համար էլ քահանայական հանդերձանքի գրպաններում համարյա միշտ քարեր էր պահում պաշտպանվելու համար: Եթե գյուղի չարածճի երեխաները քարկո-

2 Գյուղի հարուստներից էր: Ուներ հարյուրակների հասնող ոչխարի հոտեր: Ըստ որոշ տվյալների՝ տեղի ՀՅԴ կոսակցությամ անլամ էր և հենց նրանց առաջարկով էլ շրամքարք՝ որպես նվեր հայրենի գյուղին: Եթե 1918 թ. բորբական բանակը հայտնվում է մեր գյուղերում, նա բնակչության մի մասի հետ բողնում է գյուղը և տնից որոշ իրեն բարձերով եզերեր ծած սայլին՝ ընտանիով շարժվում դեպի Քարո: Ոչսարի հոտերը, ինարկե, մնամ են բորբերին: Շանապարհին եզերեր սատկում են, և նրանք ընտանիով մի կերպ հասնում են Քարո՝ համազուղացի բարեկամի տուն: Քաղաքում ապրելը դժվար էր. սով, համաձարակ, բանկություն, պարենանձերը չկար: Մի խում մարդկանց հետ Սամվելլ լաստանավով մեկնում է Աստրախան այնտեղից մերեք քերելու հոյսով: Խորչինը բողնում է նավահանգստի սրահում՝ իրենց խմբի անդամներից մեկի մոտ, գնում է քաղաք՝ ինչ-որ հարցեր լուծելու: Այդ պահին քաղաքում խովություն է սկսվում՝ կրակոցներ, փողոցային նարսեր, և բասանավոր շտապ հեռանում է ափից: Նրան ողենցողները վերաբանում են Քարո և ընտանիքին հայտնում լուրը. Սանվելլ ոշացել է նավից և մնացել Աստրախանում: Այդ օրվանից նրա մասին ոչ որ ոչինչ չի իմանում: Որոշ ժամանակ անց նրա ընտանիքը վերաբանում է գյուղ: Ինչպես ասում են՝ մարդը գնաց, զործ մնաց: Նա անհետ կորավ, իսկ կառուցած ջրամբար դարձել է մեր գյուղի այցելունը: Նրա սերունդներն այժմ ապրում են Կրամանողարի երկրանասում:

1 1918 թ. ամռանը, եթե բուրբերը մտնում են գյուղ, նրանց դեմ միակ կռվողը Հարություն Օհանյանն էր իր՝ Աղասիվերանի հետ: Նրանք թեկուց չկարողացան երկար դիմարել, բայց դա հնարավորություն տվեց անզեն բնակչությանը հեռանաւ գյուղից դրւու՝ մեծ թեղենու տակ: Միայն 1976 թ., եթե վախճանվեց Հարություն Օհանյանը, Աղասիվերան Օհանյանի սոկորներն ու տապանարը տեղափոխվեցին գերեզմանոց՝ որոր մոտ:



Ազայիշեն գյուղի դպրոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

ծում էին շներին, գյուղացիները նախատում էին. «Հոռքալանց դերը չն՞»:

Ինչպես բոլոր հայկական գյուղերում, մեզ մոտ ևս մարդիկ ունեին ազգ և ազգանուն, որոնք հաճախ չին նոյնանում: Երբեմն ազգն էր ավելի հին, ազգանունը նորացվել էր կամ ճյուղավորվել, երբեմն՝ հակառակը: Օրինակ, Թամրավայսները կոչվում էին Ըոռքալանց: Հնոց եկած գրույց է. երկու եղբայրներ էին՝ Թամրավայսը և Առաքելը, երկուսն էլ արժանավոր մարդիկ, և որպեսզի երկուսի անունն էլ մնար, ազգը կոչում են Ըոռքալանց, իսկ ազգանունը՝ Թամրավայսն: Նման պատմությունները կային բոլոր գերդաստաններում: Օհանյանները կոչվում էին Մերյունց, Դամիելյանները՝ Բաղրունց, Ավազյանների մի մասը՝ Չռահանց, մյուսը՝ Լյազգյունց, երրորդը՝ Ըկուփանց, իսկ չորրորդը՝ Քյորքանչուց, Մելքոնյանները՝ Մնջունց, Բաղրամարյանների մի մասը՝ Բդասանց, մյուս մասը՝ Աղունց, Այյանները՝ Երամունց, Մանուչարյանները՝ Ամունց, Զարարյանները՝ Վանես Պապունց, Հարուբյունյանների մի մասը՝ Լյազգյունց, մի մասը՝ Սվարանց, Շահնազարյանները՝ Հնձանց, Սարգսյանները՝ Ծգրաշանց: Կային նաև համընկումներ. Ծատորյաններին անվանում էին Ծոտրանց, Թավարյաններին՝ Թվարանց, Այվայյաններին՝ Իվազանց:

1918 թ. բոլորների հարձակման ժամանակ բնակչությունը հասցնում է փախչել մոտակա ձորերն ու անտառակները: Մի մասը քարճվում է Կատվեն ծակ կոչված քարանձափում, որ գտնվում էր շատ դժվարամատչելի մի ձորում: Թուրքերը գտնում են այդ քարանցը և փորձում ներս մտնել, սակայն անսպասելիորեն հրացանի կրակոց է լսվում քարանձափից, և սպանվում է ներս խցկվածներից մեկը: Կարծելով, թե քարանցում զինված հայեր կան, բոլորն ըռղնում, հեռանում են: Կրակողն Ամունց Կուրիքն էր՝ Մանուչարյան Գրիգորը, որի մոտ էր միակ հրացանը՝ մի քանի փամփուշտով: Քարանձափից ոչ հեռու՝ Ընշանուտ կոչվող վայրում (մեր գյուղում փշտերն եղևուն անվանում էին բոշանե), Աղասի քահանան մի ուրիշ խմբի հետ՝ մոտ 20-30 հոգի, փորձում է քարնվել խիստ եղևնիներով շրջապատված ձորակում: Թուրքերը նրանց գտնում են և անհաջողություններից կատաղած՝ սկսում են դաժան նախճիրը և սպանում բոլորին: Ոչ մեկին չեն խնայում: Պատահարար նկատում են, որ



Ներքեւ ճյուր աղբյուրը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1984 թ.)

մի ջահել հարս կենդանի է մնացել. մարմնով ծածկել էր 3-4 տարեկան մի աղջկա և սպանված ձևացել: Թուրքերը որոշում են չսպանել գեղեցկուիի հարսին և երեխայի հետ նրան հարևան Հաջաքամլի բուրքական գյուղ են տանում: Այնտեղ Գաղիք անունով մի բուրք ճանաչում է ջահել հարսին. իր հայ ընկերոջ՝ Մովսես Թամրավայնի կինն էր՝ Աստղիկը: Նրան հաջողվում է փրկել Աստղիկիմ<sup>3</sup> և փոքրիկ Լուսինեին բարցնելով իր տանը: Երբ ավազակները հեռանում են, Գաղիքը լուր է ուղարկում Մովսեսին: Վերջին կոտորածի օրը գյուղում չէր, աշխատում էր հարևան մողոկանների Խվանովկա գյուղում: Մովսեսը կնոցն ու աղջկան ողջ ստանալուց հետո գնում է կոտորածի վայր, հավաքում բոլոր դիակները, բերում և թաղում է գյուղի գերեզմանոցում:

\*\*\*

Գյուղի ներքում հետաքրքիր մի աղբյուր կար՝ Շրլաղը: Կազբորիչ ջուր ուներ, որով լվացվելիս մաշկն ազատվում էր տարեկ վերքերից ու պղուկներից: Աղբյուրը պատից ծորում էր երկարյա խողովակով և լցվում ավազանի մեջ: Ջրավազանը հսկա կաղնու բուն էր՝ 3-4 մետր երկարությամբ, փոփած գետնին, միջուկը հանված, ուներ մոտ կես մետր խորություն: Ամռան շող օրերին լողալու-զովանալու միակ վայրն էր մեզ՝ տղաներիս համար: Դպրոցական տարիներին անգամ ուսանավոր էի գրել.

Գյուղից դորի մեջ,

Կա մի աղբյուր սառնորակ,

Որ կառուցել են մեր նախինիները

Իրենց շնորհրով քարձրորակ:

Հարունակուրիցումը չեմ իշխում, բայց ասելիքն այն էր, որ երբ ջուրը քափառ է ջրավազանի մեջ, առաջանում են պղջակներ, որոնք ջրի մակերևույթով սահում են, հեռանում և կորչում: Այն ժամանակ ես դա համեմատում էի մատադ սերունդների հետ, որոնք մեծանում, զյուղից հեռանում ու էլ չեմ վերադառնում: Կա հիմա այդ պղջակների մեջ տեսնում են մեր գյուղի ողջ բնակչությանը, որ 1988 թ. նեկտեմբերի 6-ին ցրվեց աշխարհով մեկ և տարրալուծվեց մարդկության քառոսում: Շատերի գտնվելու վայրն այլևս չգիտենք:

<sup>3</sup> Հետազայտ դաշնում է 6 երեխաների մայր, բազմաթիվ բուների ու ծոռների տատիկ: Նրա սերունդներն այսօր ցրված են աշխարհի տարեկ վայրերում՝ Հայաստանում, Գերմանիայում, Ուստաստանում՝ Շեյշաբինսկում, Կրասնոյարի երկրամասում:



**Ալավերևան Օհանյանի տապանաքարը (լուս.` Ս. Կարապետյանի,  
1986 թ.)**

Ասում են՝ Երբ մարդը մահանում է, նրա հոգին թևում է դեպի նրա ծննդավայրը: Գոյց է այն կյանքում կգտնենք իրար, կիմենք նորից միասին մենք՝ հայ-կական հինավոր աշխարհի ազայիշնեցիներս...

ՄԵՐ ՍՈՆԻՐ ՀԱՆԵ՞՞ԴԻ Ա

1918 р., երբ քույրերը սկսում են մեր շրջանի 24 հայկական գյուղերի բնակչության կոտորածը, հայության մի մասը հուսահատ ճիգեր է քափում պաշտպանվելու, մյուս մասը թարճվում է ձորելում ու անտառներում, իսկ մի ստվար հասդած էլ զաղքում է Քաքու, այնտեղից էլ՝ Հյուսիսային Կովկաս: Նոյն քախտին է արժանանում նաև մեր երեք՝ Ղալակա, Ազայիշեն և Ուշտալ գյուղերի ժողովուրդը:

Վասդիկավկազ քաղաքում տեղահանվածների հետ մտերմանում է հայ մի երիտասարդ, որն Արևմտյան Հայաստանից էր: 1915 թ. նրա ընտանիքը զոհ էր դարձել Սևծ երեմճին, և մնած գերդաստանից միայն ինքն էր փրկվել: Ծակատագիրը նրան հասցրել էր Վասդիկավկազ: Այստեղ որոշ ժամանակ անց նա ամուսնանում է դալակացի մի աղջկա հետ, ապա Կովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո նոր ընտանիքի հետ տեղափոխվում է Ղայակա:

Գյուղում նրան քուրքը Խաչը էին կոչում: Խոսում  
էր արևատահայերենով, իսկ քանի որ մեր գյուղե-  
րում դժվար էին ընկալում այն, նրան սկսեցին կոշել  
քուրդ Խաչը կամ զյամա (Եկվոր) Խաչը: Ծննդա-  
վայր և զերդաստան կորցրած մարդը, իհարկե, նեղ-  
փում էր այդ մականունից, բայց նա պարտ ուներ  
իր կորցրածի հանդեպ. ողջ ուժերը լարելով՝ սկսեց  
ապրել ու արարել:

Խաչոն տուն սարքեց, զավակներ ու բռններ ունեցավ և տասնամյակներ անց մահկանացուն կնքեց՝ շրջապատված գերդաստանով, պարտը կատարած, ի հեճուկս բուրքի՝ կորցրած գերդաստանի տեղը նոր ստեղծելով։ Խաչոյի աղջիկը՝ Սիրանը, մեր գյուղի հարս էր։ Անուսնու հետ ուս ուսի տված՝ աշխատում էին։ Նոր տուն կառուցեցին, զավակներ ունեցան, մի խոսքով՝ ապրում էին բոլորի նման։

70 տարի անց մեր գյուղերի գլխին նորից ևս ամպեր կուտակվեցին. 1988 թ. փետրվարին՝ Սումգայիրյան դեպքերից հետո, մեր բնականն կյանքը խարարվեց: «Հետևանքը... 1988-ի դեկտեմբերի 6-ին հայկական երեք գյուղեր՝ Ղարական, Ազայիշեն և

Ուշտալը, տեղահանվեցին: Դեկտեմբերի 7-ի առավոտյան մեր խղճուկ քենոներով մեճք արդեն Հայատանում էինք՝ սահմանի վրա: Մի քանի ժամից Սպիտակի երկրաշարժի լորր ցնցեց աշխարհը, իսկ մեզ՝ նաև մեկ այլ լորր. սկսեցինք կոչվել փախստականներ:

Սի քանի օր անց մեր երեք գյուղերի բնակչության մեծամասնությունը հաստատվեց Վարդենիսի շրջանի ճախսկին Կոշարուլաղ (Յերևանի Շատրվածք) գյուղում։ Տեղացի հայերը մեզ լավ ընդունեցին, սկսեցին օգնել, բայց կային այնպիսիք, որոնք, Դարարաղյան բարբառը շիհասկանալով, մեր ճիստուկացի էությունը չընկալելով, սկսեցին մեզ անվանել «Չոր տփած հայեր»։ Դրանից շատ եհանգություն, իսկ Խաչոյի աղջիկ Սիրանը տարիներով հոգում կուտակած դառնությունը դուրս թափեց.

— Ծողովով կրի, իման եքք ձեզ ասում են փախստական կամ շուր տված, հասկան՝ մ եք՝ ի՞նչ էր զգում իմ հայրը, եքք բոլորդ նրան համարում էիր «օյալմա»:

Ժողվորդը լուս էր: Նա, իհարկե, դա շարությունից չասաց. պատճառը բոլորին հոգեվիճակն էր...

Սիրանը զի էր ճակատագրից, որ անվնաս տեղ ենք հասել, մի կերպ տեղափորվել, բայց նա երջանիկ կլիներ այն ժամանակ, եթե որդին բանակից տուն վերադառնար: Խսկ որդին Միշան, արդեն ծառայությունն ավարտել, բռնել էր տունարձի ճանապարհը: Երկու տարի տաճը չեր եղել: Ծառայության ավարտին դեռ ժամանակ կար, բայց դեկտեմբերի 8-ին հրամանատարը կանչում է ու ասում. «Հայատանում երկրաշարժ է, դու ազատվում ես, զնա՞, քո ժողովրդին մի բանով օգտակար ենիր»:

Սիշան արդեն մոտենում էր հայրենի գյուղին: Ճանապարհին որերորդ անգամ պատկերացնում էր, թե ինչպես է մտնելու տուն, գրկելու ծնողներին, քրոջն ու եղբորը: Բանակ ճանապարհելիս ամբողջ գյուղը հավաքվել էր նրանց տանը: Մեր սովորությամբ «ալրովոյ» էր: Հմա, երբ վերադառնա, ելի ծնողները ճոխ սեղան են բացելու, և ամբողջ գյուղը հավաքվելու է աքայուսանիք՝ «Վասրեւալի»:

Ահա և հայրենի գյուղը: Միշան իշխում է ավտոբուսից, բայց զարմանալի՝ բան... ոռու զինվորները փակել են ճանապարհը և չեն թողնում՝ մտնի գյուղ: Նա երկար-բարակ բացատրում է նրանց, որ ինքը բանակից տուն է Վերադարձել, ինչո՞ւ չի կարող իրենց գյուղ մտնել, իսկ զինվորները կարծ ու կտրուկ պատասխանում են.

— Жители села уехали. Никого нет. Село пустое.

Միշան ցնցված էր. հայրենի գյուղ վերադարձա-լու՝ երկու տարի փայփայած երազանքը հօդս է ցնդում: Հայրենական հարկից հեռու, հարազատներից կարոտից խեղդվող պրտով երկու տարի օրերը հաշվելով զամ ու կանգնես գյուղից շեմին... ու թե ասեմ՝ Սելո պատօն...

Խենքանակ կարելի է... Շուտով իրավիճակը պարզվում է, և Միշան ռուս զինվորի ուղեկցությամբ մտնում է դատարկված ու լքված գյուղ: Ամենուր բաց դարպասներ են, կրնկահան բաց դրներ: Առաջինը նրան դիմավորում է դարողը, որի պատերի

ներքո փոքրիկ Սիբայելը հայոց այրութեմը, հայոց լեզուն ու պատմությունն է սովորել:

Մտնում է հայրենի տան բակը: Ըստ՝ լրտերուն: Կիսարաց դռնից մտում է տուն: Թաղանձած էր, իսկ ինչ չեն հասցրել տանել, ցարուցրիվ թափված էր բակում: Հուգմունքից խեղպատ էր, մի տեսակ քարացել-ապշել էր անսպասելի տեսարանից... Սիտքը տեսնագին ելը էր էր փնտրում իրավիճակից, նախ փնտրել ծնողներին, բայց ինչպե՞ս, որտե՞ղ...

«Մեր տոնը շտե՞՞ն ա»,— այս հարցը շաղափի պես ծակում էր ուղեղը, իսկ երբեմնի շեն ու կյանքով լեցուն հայրենական տոնը՝ անմարդ ու բալանված, ասես հանդիմանում էր նրան՝ ո՞ւ էր, եղ զինվոր լիներ ո՞ւ էր պետք, որ չէր կարողանալու օգնության ձեռք մեկնել հարազատներից, տան ու գյուղիդ...

Հայրենի օջախի հետ հանդիպումը և հրաժեշտը կարծատ էին: Դեկտեմբերյան կարծ և ցուրտ օրը մքնում էր, բայց Սիշան իր պարտքն է համարում այցելի նաև զյուղի գերեզմանատուն: Շարժվում է դեպի Ագրի դայունց թումբը, որտեղից երևում էր դիմացի լանջին փոփած ամրող գերեզմանատունը: Փա՞ռ Աստծո, այն դեռ չէին պղեծ...

Հասնելով զյուղամեջ՝ ինքն էլ չիմանալով, թե ինչու, սկսում է ճանապարհին հանդիպած բոլոր դարպասները փակել: Հարևան զյուղում ապրող ծանոք լեզզին Սիշային տանում է Ուշտալի շուրջ զտնվող իր տուն, իսկ առավոտյան ավտորուսով ճանապարհում Բարու, որտեղից էլ նա զնացրով հասնում է Հայաստան: Շուտով զյալմա Խաչոյի փախստական բոռք հայտնվում է փախստական ծնողների և համազյուղացիների շրջապատում:

Կյանքը կամաց-կամաց մտնում էր հունի մեջ: Արդեն մի քանի շաբաթ է՝ Շատջրերում ենք. մարդիկ հարմարվում են Վարդենիսի ցրտաշունչ ձնուանը: Հունվար ամիսն է, ցուրտ, բայց արևոտ մի օր: Գյուղի կենտրոնում էի: Սաղցակալած ճանապարհով մի տարսի զգուշորեն կանգ առավ, և միջից դուրս եկավ ուղևորը՝ պայուսակը ծեռքին: Շվարած շուրջն է ճայում: Մեր հայացքները հանդիպեցին: Ճանաչեցինք իրաք: Հայրենի գյուղի իմ մանկության ընկեր Յուրիկն է: Փարարվեցինք. լաց, ծիծաղ, ուրախություն իրաք են խառնվել: Երկար ժամանակ չէին տեսել: Նա Ռուսաստանում էր ապրում և իհմա ծիծաղի ու արցումքների միջից առերսող հայացրով հարցնում է.

— Մեր տոնը շտե՞՞ն ա...

Հարցն ինձ ցնցեց:

— Դյո՞՞ւ ըմ եկալ, ճանան-պապան շտե՞՞ն ըն:

Ես նրան առաջնորդեցի իրենց տուն: Դեռ տղեկ էր, երբ երազում էր ֆուտրոյան դառնալ և 8-րդ դասարանն ավարտելուց հետո երազանքի հետևից զնաց Երևան, ընդունվեց ֆուտրոյի մարզադպրոց: Բայց մանկության երազանքն իրականություն չդարձավ... Սինչև տուն հասնելը հասցրեց պատմել. հեռակա սովորում է ինստիտուտում, աշխատում է և խաղում իրենց գործարանի ֆուտրոյի ակումբում:

Ծնողների ուրախությանը չափ չկար, և, ինչպես ընդունված էր մեր գյուղերում, իսկույն սեղան բա-

ցեցին: Քիչ անց, երբ ցանկացա հեռանալ, որ նրանք հանգիստ վայելեն իրենց ուրախությունը, Յուրան չըողեց: Երևի իմ ներկայությամբ իրեն ավելի վստահ զգալով ծնողներին ասաց, որ սիրում է մի աղջկա և ուզում է ամուսնանալ, բայց աղջկա ծնողները պատրաստվում են մեկնել ԱՄՆ: Երեւ ամուսնանան, ինքն էլ նրանց հետ կմեկնի Ամերիկա: Այս ամենը շոտասելովին նման վրա տվեց ու լրեց: Ծնողները շվարել էին. իրենք՝ փախստական, ո՞վ գիտի վաղը-մյուս օրը ի՞նչ է իրենց սպասվում, իսկ ավագ որդին եկել ու ասում է, որ ուզում է տեղափոխվել Ամերիկա:

Սի քանի օրից Յուրան գնաց Ռուսաստան: Զգիտեմ՝ ինչու նա չամուսնացավ այդ աղջկա հետ: Մնաց ամուրի: Տարիներ անց զրիվեց ավտովքարից: Շատ երիտասարդ էր: Մտածում եմ՝ գուցե այդպես չիներ, երեւ ժամանակին ամուսնանար և տեղափոխվեր Ամերիկա:

Անցան տարիներ: Բայց ամեն անգամ մանկության ընկերոց՝ Յուրիկին հիշելիս, չգիտեմ ինչու, դիմաց նրա՝ միշտ նույն աղերսող հայացքն է հառնում, որ կարծես մեր բոլոր գյուղացիների անոնց հարցնում է.

— Մեր տոնը շտե՞՞ն ա...

### Կարոտ

Մեր գյուղը՝ Ազայիշենը, ինչպես նախորդ հատվածում հիշատակեցինք, բաժանված էր երկու քաղամասի՝ Վերին (Երեւ) և Ներքին (Ներքե), իսկ նրա ամրող երկարությամբ ծավում էր գիսավոր փողոցը, որն ասես զյուղի ողնաշարը լիներ՝ իր վրա կրկելով տների մեծ մասը: Ժամանակին գիսավոր փողոցի մի կողմում կար 31 տուն, և գյուղացիները, իմանալով մարտ անսպա՝ խիստ փոփոխական եղանակը, այդ տներից ամեն մեկին մի օր էին հատկացնում, այսինքն՝ երեւ եղանակը լավ էր, որեմն այդ տան բնակչությունը լավն էն և հակասակը:

Ազայիշենը հարեւան Ղալակա և Ուշտալ գյուղերի հետ կազմում էր Ստ. Շահումյանի անունը կրող մի կողմանտեսություն, որը շրջանի առաջավորներից էր: Զքաղվում էինք իմնականում խաղողագործությամբ ու անասնապահությամբ, ցանում առավելապես ցորեն և գարի: Կողմանտեսության կազմում կար ևս մի բնակավայր՝ Ուշտալի շուրջ, որտեղ լիզզիներ էին ապրում: Այդ փոքրիկ գյուղում էին գտնվում կոլտնտեսության ֆերմաները, բոլոր աշխատողները լիզզիներ էին, իսկ դեկավարներն ու մասնագետները՝ հայեր: Հազարավոր ոչխարների հոտերը ծմեռում էին մեր գյուղերից 70-80 կմ հեռու՝ Մուտանի դաշտավայրում՝ Կարարուցաղ կոչվող վայրում, իսկ ամռանը հովիվները, որոնք բոլորն էլ լիզզիներ կամ փաղարներ (կիսաքոչվոր ցեղեր) էին, հոտը բարձրացնում էին Կովկասյան լեռների լանջերը:

Մեր գյուղի բնակչության սոցիալական վիճակը կախված էր կողմանտեսության առաջընթացից և տնտեսական ցուցանիշներից: Քանի որ կողմանտեսությունը շրջանի առաջավորներից էր համարվում, ապա 1960-ական թթ. կեսերից գյուղաբնակերի

սոցիալ-կենցաղային պայմանները սկսում են նկատելիորեն բարելավվել: Այսպես, 60-ականներից բոլորի տներում արդեն հեռուստացույց կար, թեպետ ընդամենք երկու ալիք էր հասանելի՝ աղքածաններն ու ուստերեն (դա էլ մեծ առաջընթաց էր գյուղի համար): Չանցած մի քանի տարի՝ գյուղացիների կենցաղ մուտք գործեցին սառնարանները, մարդիկ սկսեցին զնել նաև սեփական ավտոմեքենաներ, իհմնականում «Ժիզուլի» մակնիշի: Կոլտնտեսության միջոցներով 70-ական թթ. վերջին հայտնվեցին հեռախոսներ, իսկ 1980 թ. գյուղն ամրոցությամբ զազաֆիլացվեց:

Բնակչության համար, սակայն, ամենամեծ խնդիրներից մեկը ջրի հարցն էր: Գյուղի ներքևում կային աղբյուրներ՝ Ծրլաղը, Ներքե ճյուրը, որոնց ջուրը գյուղ էր հասնում կուլաներով, դոյլերով, էշերին բարձած փայտն կմերով կամ սայլերով տեղափոխվող տակառներով: Բայց դա էլ հարցի լուծում չէր: Աղբյուրների ջուրը պիտի վերև գյուղ հասներ:

Ներքե ճյուղ կոչվող տեղանքում կային երեք իհմնական աղբյուրներ և մի փոքրիկ ջրամբար, որը, ինչպես արդեն նշել ենք, կառուցել էր Սամվել Թավարյանը: Այն լցվում էր, ու ջուրը հոսում-թափվում էր ձորը:

1960-ական թթ. կոլտնտեսության միջոցներով այստեղ կառուցվեց երկու ջրամբար, իսկ երրորդ՝ ամենաբարձր մասում՝ գյուղի կենտրոնում գտնվող դպրոցի բակում: Ներքե ճյուղի աղբյուրների ամբողջ ջուրը կուտակվում էր այդ երկու ջրամբարում, իետո պոմպերով, մոտ 200 մ խողովակներով այն մղվում էր դեպի երրորդ ջրամբար: Այստեղի բոլորի բակերը ձգվող խողովակներով ջուրն ինքնահոս հասնում էր ժողովրդին: Բայց դա էլ հարցի լուծում չէր. աղբյուրների ջուրը չէր բավարարում բնակչությանը: Եվ արդեն 70-ականների կեսերին դարձալ կոլտնտեսության միջոցներով Կովկասյան լեռներից մոտ 40 կմ խողովակաշարով սարերի ջուրը հասավ երեք գյուղեր: Դա մեծ շինարարություն էր, իսկ կարևոր այն էր, որ այդ խողովակաշարն անցնում էր բոլորական տարբեր գյուղերի կողքով, բայց ոչ մեկն իրավունք չուներ օգտվելու դրանից: Իհարկե, գողությունը բուրքի տարերքն է, և պատահում էր, որ թաքնությունը էին, բայց գյուղում հատուկ նշանակված մարդիկ կային, որոնք միշտ հետևում և չեղորացնում էին նրանց ջանքերը:

Դարձալ կոլտնտեսության միջոցներով 70-ական թվականներին գյուղում կառուցվեց ակումբի մեծ շենքը, որի տանիքի ներքո գործում էին վարչության գրասենյակները, նոյնիսկ շտեմարան կար, և թեկուզ մեծ դահլիճ էլ կար, բայց այդպես էլ ոչ մի անգամ կինոֆիլմ չցուցադրվեց: Կառուցվեց էլեկտրական մեծ ալբանաց, որից օգտվում էին նաև հարևան գյուղերի բուրքերը: Ինչո՞ւ եմ անընդհատ շեշտում, որ այդ ամենը կոլեկտիվ տնտեսության միջոցներով է կյանքի կոչվել, որովհետև դրանք մեր ժողովրդի՝ մեր գյուղացիների փողերով են կառուցվել, այլ ոչ թե կառավարության: Եվ երիցս ցավալի է, որ բոլորը բողեցինք բուրքերին...

Թվում էր, թե հաջողություններն ու մարդկանց կենամակարդակի բարելավումն ակնառու են, բայց գյուղը դատարկվում էր, որովհետև երիտասարդությունը հեռանում էր: Առաջին հայացքից գյուղը զարգացել էր, կենցաղային պայմաններն ինչ-որ չափով համեմատելի էին դարձել քաղաքայինի հետ, ամեն ինչ կար՝ հաց, ջուր, գազ, հեռախոս, բայց գյուղում կյանքը մարտում էր...

Ամենամեծ հարվածը եղավ 1985 թվականին, երբ փակվեց գյուղի դպրոցը: Միայն մեր Ներքե բաղից 1978 թվականին այստեղ հաճախում էր ավելի քան 30 աշակերտ, իսկ 1988-ին՝ 10 տարի անց՝ միայն 3 երեխա, այն էլ մի ընտանիքից, այն էլ հարևան Ղալակա գյուղի ուսուական դպրոց: Տիստ ու վիճակագրություն...

Եթե նախնիները 1918 թ. կոտորածից հետո վերականգնեցին գյուղը, մեր ծնողներն աշխատեցին, արարեցին, ստեղծեցին լավ պայմաններ, մեր սերունդը շարունակեց նրանց գործը, ու վերջում ամեն ինչ բողեցինք բուրքերին: Ես չեմ փորձում որևէ մեկին մեղադեմ կամ արդարացնել, դրա իրավունքը չունեմ, սակայն չեմ հասկանում այն համագյուղացիներին, որոնք ասում են.

– Ի՞նչ ենք կորցրել, դեռ ավելի շուտ պիտի հեռանայինք և հանգիստ ու կուշտ ապրեինք...

Համոզված եմ, որ ինձ նման շատ-շատերը գիտեն, գիտակցում են՝ շատ բան ենք կորցրել՝ սառնորակ աղբյուրների ջրի համան ենք կորցրել, մեր դասասենյակների նստարաններն ու գրատախտակն ենք կորցրել, որի վրա հայերեն առաջին տառն ենք գրել, մեր պապերի ու մեր տնկած ծառերի մրգերի համան ենք կորցրել, մեր մանկական ու պատանեկան ընկերությունն ենք կորցրել, իրար քևու ու թիւնելու ունակությունն ենք կորցրել, մեր լեզուն ենք կորցրել, մեր պապերի ու հայերերի կառուցած տուն-օջախն ենք կորցրել, մեր նախնիների, ծնողների, երլայր-քույլերի ու զավակների շիրիմներն ենք կորցրել, վերջիվերջո ծննդավայրն ենք կորցրել և դարձել թափառական...

...Գյուղը բողեցնուուց տարիներ անց փորձում էի տուն վարձել Ռուսաստանի գյուղերից մեկում, իսկ տանտերերը վրա տալով համոզում էին ինձ գնել իրենց տունը: Ես հրաժարվում էի, բայց միտքս տենդազին փորձում էր գտնել ինձ հուզող հարցին պատասխանը՝ ովքե՞ր են այս բոլի դեմքով սևահեր մարդիկ... Նրանցից մեկը հարցրեց՝ ինչ ազգից եմ, ես պատասխաննեցի ու փոխադարձարար հետաքրքրվեցի՝ ովքեր են: Իմ հասակակից մի տղա ասաց.

– Մա օրեայ ու կրօս, յա - այցան:

Ես ցնցվեցի. նորից ու նորից գիտակցեցի՝ ի՞նչ եմ կորցրել և ո՞ւ մ երլայր դարձել... Այո՛, կորցրինք մեր հայրենի գյուղը, բայց այն մնաց մեր հիշողություններում, մեր երազներում: Այդ հուշերը հնարավոր չէ ջնջել: Դրանք մեր կյանքի, մեր ապրած կյանքի մի մասն են և շատ կարևոր մասը:

Երբ որևէ առիթով համագյուղացիներով հավաքում ենք, գրեթե ամբողջ գրույցը մեր անցյալի՝ գյուղի, հողի, մանկության տարիների մասին է:

\*\*\*

Մեր սերունդը շատ երջանիկ մանկություն է ունեցել: Մեր տունը գտնվում էր Ներքեւ քաղում: Միշտ միասին և շատ համերաշխ էինք քաղի երեխաներով: Մանկական խաղերը կազմակերպում էինք հանդ ու ձորում կամ էլ մեր քակերում: Ազատ կարող էինք հավաքվել մեկի տաճ բակում ու խաղալ ֆուտբոլ, կրիկ-կրիկ կամ պահմողից: Եթե պետք էր կրիկ-կրիկ խաղալու ժամանակ մի տեղ քաքնել, ապա այդ տաճ բակը, գոմը, հավանցը, բռնրատունը, նկուղը, տաճ սենյակները մեր տրամադրության տակ էին: Ոչ մի ծնող մեզ չէր քշում բակից, իսկ երբ ճաշի ժամ էր, ապա հացի էինք նստում հենց այդ տաճը: Մեր գյուղում ստորոտիքում չկար բանալի-կողաքեռվ դրու-դարպաս փակել, ու չի եղել մի դեպք, որ մեզնից որևէ մեկն որիշի տնից մի բան գողանար:

Գյուղի տների մեծ մասը երկհարկանի էր, և ամեն տաճ առաջին հարկի գրնեն մի մասը նկուղ-մանան էր, որտեղ գյուղացիները ծննդվա պաշարն էին պահում՝ մուրաքա, թրու, պանիր, պահածոներ, գինի, ոլի: Ամեն նկուղում այլուրի ամբար կար, որտեղ էլ պահում էին համարյա ամբողջ տարվա հացի ալյուրը: Բոլորի բակերում բռնիր կար. առաջվա բռնիրները փոսի մեջ էին, իսկ հետագայում սկսեցին սարքել գետնի երեխն (այդպես ավելի հարմար էր հաց բխելը): Թոնիր սարքոները հիմնականում տարեց կանայք էին: Դա մի շատ հետաքրքիր արարողություն էր. նախ բերվում էր հատուկ կավ, շաղախվում ջրով, ապա ստացված շաղախը ծածկում էին խնդրնու տերևներով և մի քանի շարաք սպասում, որ ցեխը հասունանա: Հետո լավ հունցում էին այդ հասունացած ցեխը և տախտակի վրա գլանի ձև տախիս՝ մոտ կես մետր երկարությամբ և 5-7 սմ տրամագծով: Ահա այդ գլանածն ցեխը շերտ առ շերտ իրաք վրա դմելով՝ կամաց-կամաց բարձրացնում էին բռնիր պատերը: Թոնիր սարքողը գտնվում էր բռնիր մեջ և ամեն մի շերտը դմելով՝ ձեռքի ափով խփում էր այդ գլաններին, և դրանք ընդունում էին ալիքածն մակերես, որ հաջորդ շերտն ամուր կաշի նախորդին, ապա կողդերը ներսից ու դրսից սվաղում էին այդ նույն ցեխով, որ շերտերի միջև ճաքերը չերևան: Թոնիր ստորին մասն ավելի լայն է լինում, իսկ վերինը՝ նեղ, որ տաքությունը մեջք մնա: Հետո զալիս էր բրծելու պահը: Ամբողջ բռնիրը մինչև բերանը լցվում էր արարով ու վառվում: Մեկ-երկու օր անց հանում էին մոխիրը, և բռնիրն արդեն պատրաստ էր:

Մեր տաճ վերջին բռնիրը Լիզա տասու էր սարքել: Երբ հաց էին բխում, ամբողջ քաղով մեկ տարածվում էր նոր բխած հացի ախտրժակ բուրմունքը: Մեր մայրերն ու տատիկներն այլուրը մաղելուց հետո փայտե հատուկ տաշտում հունցում էին խմորը և այն տաշտի պատերից քերելու համար օգտագործում երկարյա ժամանք: Դա մի ուղղանկյունի էր՝ մոտ 7 և 15 սմ կողմերով և 15 սմ կորով: Խոնոր հունցել-վերջացնելուց հետո անպայման այդ ժամանվ խմորի վրա 3 անգամ խաչ էին դնում: Թոնիր մեջ ցախը վառվել-վերջանալուց հետո հատուկ բահով

պողը (վառվող կրակ) հավաքվում էր բոնրի մեջտեղում: Գյուղում մենք բռնիրին բուրում էինք ասում, իսկ այդ կրակիսանիչ քահը կոչվում էր բուռուխառներու: Երբ հատուկ բարձ-տեփի վրա բացվում էր խմորի պյուղ (գունդը) և խփվում բռնիրի պատին, որպեսզի այն չընկնի, բռնրապատին կացնելու համար օգտագործում էին երկար կորով ծիանը, որի կորը վերջանում է հատուկ կեռիկով: Հենց արանով էլ արդեն բխված հացը ծակվում և հանվում էր բռնիրից:

Ծնանի այդ կեռիկը հիշեցնում էր մեր այրութենի Է տախի ներքելի մասը: Դպրոցում, երբ տառերը նոր-նոր էին ծննդելու համար և և տառերի տարբերությունն ընդգծելու համար Է տառը կոչում էին ծիանածն Է:

Պատահում էր, որ խմորը լավ չէր կաշում բռնիրի պատին, և հացը կոտ էր գնում, այսինքն՝ մի բարակ շերտ էր մնում բռնրապատին, իսկ մնացածն ընկնում էր հատակին, մոխրաքարախ լինում (դրան ասում էինք կոտամա): Մեզ երեխաներին համար ամենասպասված պահն էր դա, որովհետև արագ բխված այդ բարակ շերտը՝ քրիծը, բռնիրի հանում էին և տախի մեզ: Որպեսզի բերաններս չվառվեր, այն խկոյն մասերի բաժանելով՝ թրջում էինք ծիանն անընդհատ թրջելու համար բռնիրի մոտ դրած ջրով լի դույի մեջ ու մեծ բավականությամբ ուսում:

Հայրենի գյուղի բռնրում թխած հացի համը հետո այլևս ոչ մի տեղ չեմ զգացել...

\*\*\*

Ինչպես վերը նշել եմ, քահի տղաներով համախ էինք որևէ մեկի բակում փոստով խաղում: Ընդհանրապես զյուղի տների բակերը շատ մեծ էին, այնքան, որ բեռնատար մերենան կարող էր մտնել բակ, հանգիստ շրջադարձ անել ու դուրս գալ: Այդ օրը մեր խաղահրապարակը Ռուրիկենց բակն էր: Նրանց բակում մի սրբավայր կար, որը գյուղում հայտնի էր Ծոտրանց այոր անունով: Կիսակլոր մի շինություն էր՝ մոտ մեկ մետր բարձրությամբ: Վերսի մասն ուներ հարթ ծածկ (ընդհանուր լայնությունը՝ մոտ մեկուկես մետր): Մուտքը արևելյան կողմից էր: Կանայք զալիս էին այդտեղ տարբեր առիթներով՝ մոմ վառելու, մատաղ կամ այլ արարողություններ անելու: Իսկ մեզ՝ երեխաներին համար այն ստվրական մի շինություն էր, որի ներսում բարնվում էինք կամ ծածկին նստում, իսկ հաճախ էլ այնտեղից ցաւկում ներքը: Սի խոսքով՝ մեզ համար այն ոչ մի խորհրդավորություն էլ չուներ և մեր ստվրական խաղատեղերից մեկն էր:

Սի անգամ, երբ տարբած էինք խաղով, հանկարծ դարպասից ներս մտավ մի ծեր կին: Սի բանի քայլ անելուց հետո փոփեց գետնին և լացելով ու ճայլով սկսեց չորեցոր մոտենալ սրբավայրին: Անսպասելի տեսարանից քարացել էինք: Աղմուկի վրա տնից դուրս եկան և նրան ընդառաջ գնացին Ռուրիկի մայրն ու տատը: Այդ կինը՝ Մարգարիտ տատը, մեր քաղից էր (գյուղում նրան բոլորը Սիրբյարիդ էին ասում): Կցկոտը խոսքերից հասկացանք, որ ամուսնու մեղադրել է նրան գրանից փողով:

լու մեջ և խիստ ծեծել: Ամուսնու աշքում վարկաբեկված կինը եկել էր սրբավայրում երդվելու, որ ինքն անմեղ է: Կանայք փորձեցին նրան գետնից բարձրացնել, բայց նա շարունակեց չորեցոք առաջանալ: Ծանր պատկեր էր... Սպիտակադեղնավոն մազերը ցրված էին, դեմքի կապտուկներն ասես անարգանք էին նրա պատկառելի տարիքին, իսկ պատոված զգեստի տակից երևում էր կիսարաց կուրծքը: Հայացքում դաժան վճռականություն կար, ցասում ու զայրույթ՝ անարդարության դեմ: Մոտեցավ սրբավայրին, հայացքն իշեցրեց, իսկ երբ գոյսիր բարձրացրեց և ձեռքերը խաչեց կրծքին, զայրույթից աղավաղված նրա դեմքն ասես չքացել էր. մեր առջև տեսանք հեզ ու խաղաղ մի կին, որը վիրավոր ու արնածոր շորբերով աղոքք էր մրմնջում: Ես առաջին անգամ էի տեսնում աղոքում մարդու և մինչ օրս չեմ հանդիպել մեկին, որն այդքան ջերմեռանորեն, աղերսանքով ու հավատով լեցուն հայացքով դիմեր առ Աստված, ինչպես տարիներ առաջ խեղճ Մարգարիտ տատար...

Մեր գյուղում, ընդհանրապես, եկեղեցական տոներ չէինք նշում. եկեղեցին քանին են 1920-ական թվականներին: Նոյնիսկ ծեր կանայք չէին հիշում եկեղեցական տոների օրացույցը: Տարիներ անց հասկացա, որ այն ժամանակ գյուղում նշում էինք միայն Զատիկն ու դրան հաջորդող Մետեղոց, այն էլ՝ յուրովի: Զատիկի տոնը ստվորաբար նշում էր մայիսի 1-ին (խորհրդային տարիներին լայնորեն նշվող Աշխատավորների համերաշխության միջազգային օրը): Ինարկե, առանց Զատիկի անվան և էության մասին ամենաշնչին պատկերացում ունենալու պարզապես ձու էինք ներկում և տոնում:

Մայիսի 1-ը և հատկապես մայիսի 2-ը, այնուամենայնիվ, մեզ համար տարվա ամենազիստով տոներն էին, որին երկար ու հանգամանորեն պատրաստվում էինք մեծից փոքր: Քողոք երեխաների համար նոր հագուստ ու կոշիկ էին առնում և այն: Բարձր դասարանցիները պարտադիր «զակազնոյ» շալվար էին հագուստ, որի փողքերի ներքին մասի լայնությունը պիտի 40 սմ-ից պակաս չլիներ, և այդ շալվարը կոշվում էր հոլիդե: Մենք երեխաներով վերջին մեկ-երկու շարաբն անձամբ էինք հավաքում և ջոկելով պինդ կճեպով ձվերը՝ առանձնացնում էինք: Կճեպի ամլությունը ստուգում էինք ձվի սուր մասը մեր ատամներին թերևակի խփելով: Եթե ձայնը բարակ է, ուրեմն ամուր կճեպով է, այդպիսի ձուն կոշվում էր կոռ ծյու: Իսկ տոնի ժամանակ, երբ մեկն իր ձեռքի նախշամբ ձվով խփում էր մյուսի ձեռքում պահած ձվին, դա կոշվում էր կոռկանել տալ: Եվ այսպես, նոր շորեր ունենալով և կոռ ձվերի պաշար ստեղծելով՝ երեխաներս արդեն պատրաստ էինք ստոն:

Այլ էին մեր ծնողների հոգսերը, հատկապես՝ կանանց: Սկսում էր նախատոնական, այսպես կոչված, գարնանային մաքրությունը: Տնից հանվում էր անկողինը՝ բարձեր, վերմակներ, ներքնակներ: Արևի տակ փոելով՝ «արև էին տալիս»: Արևերես էին հանվում և փոշուց մաքրվում նաև գորգերը, կար-

պետները: Ամեն բակում երևում էին լվացքի պարաներից կախված նոր լվացած վարագույրները:

Պետք էր սենյակները մի լավ օդափոխել: Գյուղի տները հիմնականում երկհարկանի էին, ընդ որում, առաջին հարկի պատերը շարված էին քարով, իսկ 2-րդ հարկերը՝ հիմնականում կավե աղյուսից: Այյուի կավը հանվում էր գյուղի Նովոր կրչվող վայրից: Այն փորքիկ լիճ էր Երև քաղում, որի ջուրը հավաքվում էր ձնիալներից ու զարնան անձրևներից, իսկ ամռանը չորանում էր: Եվ հենց տեղում էլ կավին խառնվում էր հարդ ջուր, և սկսվում էր աղյուսի համար կավացելի պատրաստումը: Կավացելս 15-20 քառակուտի մետրի վրա փուլում էր հենց գետնին, և մի ձիավոր ձին քշում էր ցեխի միջով: Զիոն ուղերի տակ կավն ու հարդը տրորվում խառնվում էին վերածվելով միասեռ զանգվածի: Զիոն պոչը չցեխուտվելու համար այն ոլորտում և հանգուցում էին: Ապա պատրաստի շաղախը լցնում էին փայտյա հատուկ կաղապարների մեջ, մի քանի ժամից դրանք հանում էին: Պատրաստի աղյուսները մնում էին գետնին շարված: Կավե աղյուսով շարված պատերը հետո սվաղում էին կավացեխով, իսկ վերջում ժամանակակից ներկերի փոխարեն տան պատերը ներսից «ներկում էին»՝ լեպում էին հատուկ կապույտ կավով: Այդ կավը փորփում էր ձորակների խորքերից, որտեղ ջուր էր հոսում կամ հավաքվում: Փոսերը, որտեղից հանվում էր կավը, կոչվում էին վղածակ (այսինքն՝ հողանցք, մեր գյուղում հողին վեղ ենք ասում, իսկ կավին՝ շեղ վեղ՝ շիկահող): Կապույտ կավը կոչվում էր զյուկասար: Այն խառնվում էր ջրի հետ, և կանայք մի կտոր մորքի կամ փալաս էին ընկդմում այդ լուծույթի մեջ և «ներկում» սենյակի պատերը, որոնք չորանալուց հետո ստանում էին քաց կապույտ երանգ, իսկ գյուլասարի յուրահատուկ բարմ բույրը մի քանի օր պահպանվում էր տան ներսում:

Պատերը ներկելուն հաջորդում էր լուսամուտների ապակիների մաքրելը, որը նույնպես աշխատատար գործներաց էր, քանի որ գյուղի բոլոր տները, սենյակներից քացի, ունեն ապակեպատ երկար պատշաճմբներ: Մանկուց հիշում են, որ մեր մայրերն ապակիները լվանալուց հետո ատամնափոշին խառնում էին ջրի հետ և ստացված մածուկով պատշաճմբների ամենավերին ապակեշարքի վրա նախշեր էին անում՝ ալիքած կամ երկրաչափական պատկերներ:

Եթե տունն ամբողջությամբ փայլում էր մաքրությունից և շնչում գարնանային բարձությամբ, «արև տված» անկողինը, գորգերն ու կարպետները նորից գրալեցնում էին իրենց տեղը՝ ստեղծելով տաքուկ ու հարմարակն այն միջավայրը, որ յուրաքանչյուրի հուշերում մնացել է որպես մի քաղցր երազ՝ հայրենի տան անմռանակի պատկերով ու բույրով...

Ահա հերքը հանում էր քաղցրավեճիքի պատրաստմանը, որը մեր մայրերն այնպիսի սիրով ու եռանդու էին անում: Տննական տրամադրությունը քեածում էր տան ամեն մի անկյունում ու քակում:

Կաթնահունցը (կրնահունցը) և գարան (քյաքան) մայիսնելյան տոնների ամենատարածված թիվականներն են: Կանայք հաճախ էին հարևաններով հավաքվում և միասին թխում տոնական քաղցրավենիքը:

Գյուղի ամենասիրած ու սպասված տոնին հավաքվում էին հեռու-մոտիկ բարեկամները. տարրեր քաղաքներից գալիս էին հարազատները, քոյր ու եղբայրները: Բոլորի տներում հյուրեր կային, բոլորի տներում ուրախություն էր, տոնական տրամադրություն:

Տիա և բացվում է մայիսնելյան առավտուր՝ տոնական եռուգետով: Տանտերերը ճոխ սեղանների պատրաստություն են տեսնում, իսկ մեր՝ երեխաններին հոգար քիչ է՝ նոր շորեր հագել և, ինչքան հնարավոր է, նախշած ձվերով լիքը լցնել գրապանները և դուրս գալ գյուղամեջ: Սկսվում է մեզ համար ամենահետաքրքրիք՝ կոռուկանե տալը. մենք մրցում էինք իրար հետ՝ նախշած ձվերն իրար խփելով, ում ձուն կոտրվում էր, տախին էր հարորդին: Երբ վերջանում էր ձվերի պաշարը, հոգ չէր, գնում էինք շնորհավորելու քեռիների, հորեղայինների, հորաքույրերի ու մորաքույրերի տոնը: Նրանք, իհարկե, մեզ հյուրավիրում էին տարրեր քաղցրավենիքներով, և ամենակարևորը՝ մեր գրապանները նորից լցվում էին ներկած ձվերով:

Համարյա բոլոր բակերից խորովածի անուշ բույրն էր կանչում: Ճոխ սեղանները բացվում էին կեսօրին, և խնջույքները շարունակվում էին մինչև ուշ գիշեր: Հետո խմբերով մի տմից մյուսն էին շարժվում, հավաքվում հարևաններով, և քեֆ-ուրախությունը նոր բափ էր առնում: Զկար մի տուն, մի ընտանիք, որ անմասն մնար համընդհանուր տոնակատարությունից:

Բացվում էր մայիսի 2-ի առավտուր, որի առավել շուրջով էր նշանում, քան նախօրյակի տոնը: Ամբողջ գյուղը՝ մեծ ու փոքրով, պատրաստվում էր այցելել գերեզմանոց՝ հանգույցաների տոնը և շնորհավորելու: Առավտյան՝ ժաման 10-ին, ժողովուրդը սկսում էր շարժվել: Կանանց և երեխանների ձեռքին տարրեր ուտելիքներով լիքը պայուսակներ ու ծաղիկներ էին, իսկ տղամարդիկ, թեև երեխա խնջույքներց բարմացած, բայց մի քիչ տխուր ու ինքնամփոփ էին, որովհետև գնում էին խոնարիկելու հանգույաների շիրիմներին:

Գերեզմանոցը գտնվում էր գյուղի արևամտյան ծայրին՝ Ներքե քաղում՝ Խմբիաս տեղամասի՝ ղեպի հյուսիս նայող լանջին: Ցածում Ներքե քաղեր անվանք վայրը է: Գերեզմանոցը բաժանվում էր երկու մասի՝ հին և նոր: Հին մասի ամենահին տապանաքարը 1796 թվականից էր, իսկ նոր մասում ամենավերջին բաղրումը 1988 թ.-ին էր...

Մայիսի 2-ին բոլոր ննջեցյալների շիրիմները բաղկում էին ծաղիկների մեջ, իմբնականում մեր բակերի վարդերի ու դաշտային հոտավետ տարրեր ծաղիկների: Բոլորի գերեզմաններն այցելելուց և հարգանքի տուրք մատուցելուց հետո կանայք հենց բարձ կանաչ խոտերի վրա փռում էին սփոռությունը, և տներից քերած ուտելիքը շարվում էր «սեղանին»:

Ամբողջ գյուղը միասին նստում էր հացկերության: Քացվում էր հուշերի ու բաժականաների անվերջանալի քվացող շարանը: Մենք՝ երեխաններս, հեռանում էինք գերեզմանոցից: Մի մասը շարժվում էր դեպի ֆուտրովի դաշտ, մի որիշ տեղ բարձր դասարանցիները և քաղաքներից եկած ուսանողները վոլեյբոլ էին խաղում, իսկ մյուս մասն էլ իրեն զցում էր հանդերք:

\*\*\*

Ապրիլի վերջին և մայիսի սկզբներին մեր դաշտերը լցվում էին բնուրյան բարիքներով՝ պյուրի, ծմեփակ, խեժնոկ, պստուկոն, բրբջուկ և հազար ու մի ոտեղի բանձար: Մայիսի 2-ին մոտիկ դաշտերից հիմնականում քաղում և ուսում էինք խեժնոկով և բրբջուկով (վերջինս մեր գյուղերի տնամերձում չինք ցանում): Իսկ ծմեփակը գյուղից մի քիչ հեռու էր: Այն ամենից շատ քաղում էինք Զմանա-Խուրի հետևի ձորակից: Մեր քաղի տղաներով գյուղից իջնում էինք Ներքե քաղերի և Զղանուտի արանքի ճանապարհով ու Զմանա-Խուրի լանջը բարձրանալով՝ նորից իջնում մի ձորակ, որը գտնվում էր Զմանա-Խուրի և Սվանաց-Նեսու տափի միջև: Երբ արդեն պայուսակները լցվում էին, նստում էինք հանգստանալու և հպարտանալու մեր «հունձըռվ»: Ծնեփակը հիմնականում աճում է քոլատակերին, և քաղելու ժամանակ հաճախ հանդիպում էինք օձերի: Ընդհանրապես մեր դաշտերը լիքն էին օձերով ու լրտուներով: Օձերից տարածված էին գյուրգան, շահմարը, մոխրախօժը (մոխրազույն օձ), երմայրը, բոլորն էլ՝ բունավոր: Իսկ դեղնադարչնագույն լրտուները չինք խայթում: Մենք կարող էինք նրանց պոչից բռնել, մեր զլխավերներում ֆռուացնել և շպրտել: Օճ շատ էինք սպանում և հաճախ փռում ճանապարհին կամ արահետի վրա, որ ուրիշները հանդիպելիս վախենան: Դաշտերում, իհարկե, գգուշանում էինք օձերից և նույնիսկ, երբ հանդիպում էին մողեսներ, իրար զգուշացնում էինք մողեսը գնալու է, օճին ասի, թե մենք որտեղ ենք:

Ինչպես արդեն նշեցի, ծնեփակն աճում էր քոլատակերին: Այդ քոլերից էր նաև ցաքը: Ծաղկում էր վաղ գարնանը, և նրա դեղին ծաղիկների մեղրաբույրը տարածվում էր շուրջընողուրը: Յաքը մեզ համար նաև շինանյութ էր: 1970-80-ական թթ. գյուղում տնամերձ հողանասերը որոշ տեղերում շրջափակվում էին քարե պատերով, իսկ ավելի վաղ ամքող ցանկապատերը ցաքից էին: Քոլի բարձրաբույրը միջինը 1,5 մետր է: Տերևաբավկելուց հետո գյուղացիները ցաքատներով կտրում էին դրանք: Ամեն մի քոլը մի խորձ էր՝ մոտ 50-70 սմ տրամագծով: Խորձն անվանում էին բասմա: Կտրած ցաքը բեռնատարներով տեղափոխվում էր գյուղ: Նրա ամենակարևոր հատկությունը փշոտ լինելն է, որի պատճառով էլ ցաքը ցանկապատին ոչ մի անասուն չէր մոտենում, նույնիսկ մարդը մեծ դժվարությամբ կարող էր անցնել դրա միջով: Ցանկապատը շարժվում էր հետևյալ կերպ: Նախ ամքող երկարությամբ իրարից մեկ մետր հեռու տնկվում են սրածայր սյուներ, որոնց մենք պիհիր ենք ասում, որը

փշատերն եղենու (գյուղում կրչում էին բռչանե) բունքն է՝ մոտ 2-2,5 մ բարձրությամբ: Այն ինքնին սրածայր է, իսկ փայտն ուներ յուղայնություն, ինչն էլ երկարացնում է փայտանյութի փառելու ժամանակը: Այնուհետև սկսվում էր ցանկապատիշ շարելը: Այդ գործին ծվառում էր առնվազն երկու տղամարդ՝ անպայման զինվորականի կիրոց պինդ կոշկատակով երկարածիւ կոշիկներով (սապոններով): Մեկը բասնան պոկում էր ընդհանուր մասսայից և հազարում պիհիրին, իսկ մյուսը կոխվառում էր և լավ նստեցնում: Ու այդպես առնվազն 4-5 շաբթ բարձրությամբ: Այդ ցանկապատը կոշվում է շափառ, որը 1-2 տարում նստում էր և հարկ էր լինում վերին 1-2 շերտը բարձրացնել:

Սեր գյուղացիների մոտ շատ հարգի էր պյուրիժ: Այն որպես ուտելիք օգտագործվում էր և եփած վիճակում՝ սխառով ու բացախով, և որպես թթու: Գյուղամերձ հանդերում շատ թիջ էր, որա համար էլ մենք իմանականում մեծերի հետ մերենաներով գնում էինք մինչև կողտնտեսության և Վանք գյուղի դաշտերի սահմանում գտնվող բրալանջերը կամ հասնում 1918 թ. կոտորածից հետո անմարդաբնակ դարձած Բուլղականի գյուղի դաշտերը: Պյուրու հարուստ բրալանջ կար նաև մեր գյուղի հարավում թուրքական Կարայազ գյուղի ճանապարհին: Այնուհետո նոյնակես մերենայով էինք գնում: Երես բաղից ճանապարհ ընկնելով իջնում էինք ներքև, հասնում մինչև գյուղի դիմաց գտնվող ճիրին Դուզե բրաշտարը: Այնուհետև մերենան շարունակելով կտրումանցնում էր արտամիջյան ճանապարհը և դուրս գալիս պյուրիղ առատ վայրերը: Երբ պյուրին արճատից կտրում էինք դանակով, կտրված մասն իսկույն գունափոխվում էր՝ բաց կանաչից վերածվելով դարչնագոյնի: Պատճառը բույսի մեջ յոյի բարձր պարունակությունն էր: Այդպես էին նաև ծնեփակլը, խեժնուկը և պտուտկունը. կտրված ցողունից ցայտում էր կաբնագոյն հեղուկ և խվոյն փոխվում դարչնագոյնի՝ ներկելով նաև մեր ծերպերը:

Սայսի վերջերին դաշտերում հասնում էր անուշահամ և բուրավետ մորին, որն ամենաշատն աճում էր գերեզմանոցի հետևում՝ ֆուտրովի դաշտից մի թիջ ներքեւ: Սորի հավաքելու ժամանակ այնուեղ ուղը դնելով տեղ չէր լինում. հավաքում էինք դույերով կամ ծաղկի պես փնջեր էինք անում:

Գերեզմանոցից արևմուտք ընկած տարածությունը կոշվում էր Խոմհատ (ձգվում էր մոտ 1 կմ և վերջանում խորը հինձած ծյորով (ձորով): Այն բաց դաշտ էր առանց ծաղերի: Նրա հյուսիսային կողմի լանջն անտառածածկ էր, իսկ հարավայինը ձգվում էր մինչև մեկ այլ ձորակ, որի միջով անցնում էր բնական շատ նեղ մի պատճեց (երկարությունը՝ մոտ 20-30 մ): Վերևում Պերակ կածան կոշվող բարակ արահետն էր: Կածանին շիսասձ՝ աջ կողմի քոլերը ևս լիքն էին մորիով: Մինչև Պերակ կածան հասնելը՝ Խոմհատի հարավային լանջին, միայնակ մի ծառ կար, որի տակ, ինչպես արդեն հիշատակել ենք, բաղկած էր 1918 թ. թուրքերի դեմ մարտնչած և այդ ծառի տակ՝ հենց իր դիրքում զոհված Ալահվե-

րան Օհանյանը: Այդ մասին էր վկայում ուղղանկյունաձև, համեստ տապանաքարը:

Անոան սկզբներին մենք արդեն Ներքեւ բաղերում էինք: Ըլոր (սալոր) էինք ուստում: Հոգ չեր, որ դեռ կանաչ էր, կորիզը՝ դեռ սպիտակ ու ջրիկ, մի խոսքով՝ գերազույն հաճույքով ուստում էինք թթվաշ և խակ միրզը: Մեծերը հանդիմանում էին՝ օսում եք մախսծյա (ցողոյ)..., բայց լսողն ո՞վ էր: Լցում էինք գրպաններս ու ծոցներս և ուտելով ու իրար վրա շպրտելով՝ ձորից բարձրանում զյուղ: Կամ էլ բռան մեջ բաքցնում էինք մի քանի հատ և բռունցքը դիմացիներին պարզելով՝ հարցնում՝ ճոխա-կլման (զոյգ-կենտ): Պատասխանը ստանալուց հետո սկսում էինք հաշվել. ճիշտ գուշակելու դեպքում բռի պարունակությունն անցնում էր դիմացինի գրպանը և հակառակը:

Ընդհանրապես Ներքեւ բաղերը մրգերի ու հատապտղների շտեմարան էին: Ամոանն ու աշնանը մենք այնուեղ էինք: Դոյլերով մոշ էինք հավաքում կամ պարզապես գնում էինք մրգեր ուտելու: Կային նաև սումախ, բալ, հոն, բուզ, սալոր, խաղող: Հնուց ի վեր այլ ձորում այգիներ էին, որոնք պահպանվել էին մինչև 20-րդ դարի 30-ական թթ.: Իսկ երբ կոլտնտեսությունն ուժեղացավ, այգիներ տնկեցին գյուղի հյուսիսային մասում, իսկ Ներքեւ բաղերը բողեցին անտեղի այգիները թեպետ հետագա տարիներին այնտեղի այգիները ոչնչացան, ծածկվեցին թթերով ու մացաներով, բայց շատ մրգատու ծառեր մնացին, և մենք՝ երեխաներս, օգտվում էինք այդ բարիբներից:

Իսկ ոչ աշնանը հերթը հասնում էր վայրի նոներին (գյուղում ասաւմ էինք ջրը նոռ): Նորան բարձր թթերն աճում էին գյուղի հարավային մասի բոլոր ձորակներում ու բրալանջերին: Բայց ամենից համով նուար քաղում էինք Ծրլաղ աղբյուրի մերձակայքից: Այն վառ կարմիր գույն ուներ, իսկ հատիկները համարյա սև էին, շատ մուգ կարմիր: Ծրլաղ աղբյուրից դեպի ճիրին Դուզեն երկար բրաշդորակ կար, որի վրայով ձգվում էր գիգագաճն երկար մի արահետ: Դա Ծոռ կածանն էր: Նրա երկու կողմի ձորակները լիքն էին նոնենիներով: Մենք օրերով այնուեղ էինք, ուստում էինք արդեն ճարած, հասուն նոները, իսկ երբ կիսաքաղցը ու կիսաթթվաշ այդ պտուղներն ուտելուց հետո ծարավում էինք, վերցնում էինք նուար, մի բուշը կլոր կտրում, միջի հատիկները լրիվ թափում ու թագաննան ծաղկամասից բունելով՝ որպես բաժակ, խմում էինք Ծրլաղի աղբյուրի ձորակի անուշահամ ջուրը: Նուար տոպակներով բերում էինք տուն, բարձրացնում տանիքը ու շարում ձեղնահարկում: Զնոանն ամենալավ միջոցն էր գրիպի ու մրսածության դեմ: Շատ համով էր լինում, երբ նուար ճգմում էինք փիփերթի (փիյուրփիուտ) կամ խորովածի վրա: Հաճախ էլ ափով սեղմում էինք սեղանին, զլորում՝ մինչև կափկի և մի փոքրիկ անցք բացելով ծաղկամասում՝ խմում էինք նուան հյուրը... Երանի՝ այդ օրերին...

Զերս հիշողություններ են նաև կապված «քորը բավի տալու» երջանիկ օրերի հետ: Բոլոր բնակիչների բակերում կային բրենիներ: Դրանք գյուղի

յուրատեսակ այցեքարտն էին: Թթենիներն աճում էին ոչ թե այգում, այլ հենց տների մոտ, որոնց շվաքի տակ ամռանը սեղաններ էին դրվում: Մի տեսակ հանգստյան գոտի էր և ամառային սեղանատուն: Չատ տարածված ու հարզի էր սպիտակ բուքը, թեկող կային թթի սև և խատուտիկ (ծաղար) տեսակները: Հասած բուքը բափկում էր բավականին մեծ մակերես ունեցող կտորի (փալասի, կտավի) վրա, որին գյուղու «պալատկա» էինք ասում: Թաղի երեխաները տղա թե աղջիկ, արդեն գիտեիմք բուք բափ տալու օրացույցը: Ամեն օր մի քանի բակերում թուր էին բափ տախս, և մենք գնում էինք՝ «պալատկա» բռնելու: Դա հարևաններով իրար օգնելու, համերաշխորժյան և մի դպրոց էր: Վերջին բափից հետո հենց պալատկայի մեջտեղը հավաքում էին թուրը, բոլոր շրջանաձև նատում էինք և օգտվում համեն պտուղներից: Բայց ամենին համերը վաղ առավոտյան կերած թուրն էր՝ սառը և ցողը վրան: Ամենաքաղցր թրից մեր մայրերն ու տատիկները դրշար կամ բարմյազ էին եփում, որն անշափ օգտակար էր: Չատ հարզի էր թթի օղին, որ թորում էին մեր հայրերը և պապերը: Նրա աստիճանը պիտի լիներ անպայման 55-65, որ պարզ լիներ: Եվ այդ օղին հատուկ դեպքերում էր դրվում սեղանին: Հիմնականում օգտագործում էին խաղողի օղին: Խոկ խաղողի անարատ գինի, զգիտեմ ինչու, գյուղում քիչ էին գործածում: Նաև մուրաքա էին եփում, որը մենք լոշալ էինք ասում: Խաղողի դոշաբը նույնապես շատ տարածված էր:

\*\*\*

Ինչպես վերը նշել էի, տղաներով հաճախ էինք մեր խաղերը կազմակերպում տարրեր բակերում, որտեղից մեզ ոչ ոք չէր քշում: Ուրիշ էր մեր հարևան Յուրիկի պապը՝ Սաքի դային: Նա մեզ միշտ քշում էր իրենց բակից: Մենք էլ՝ 10-12 տարեկան երեխաները, հենց Յուրիկի գլխավորությամբ մտնում էինք բակ և սկսում պապի հոգու հետ խաղա՝ աղմկել, այգի մտնել, ծառ բարձրանալ, գոմի ախտոններում թարձնել, կապիկուրյուն անել: Սաքի դային մի լավ հայինում էր, մահակը շարտում մեր հետևից, անեծքներ բափում մեր գլխին: Վերջը բողնում-հեռանում էինք:

Օրերից մի օր իմացանք, որ Յուրիկի պապը մահացել է: Տղաներով հավաքված էինք: Հանկարծ Յուրիկի դասարանցի Սերժիկը վեց եղբայրներից ամենամեծը, ասաց.

– Յուրիկ՝ դեղոստ մեռա՝ ա, պա մադարիչ շը՞ս անում:

Սենք ապուշ կտրած իրար էինք նայում. մադարիչ բառն առաջին անգամ էինք լսում: Սերժիկը բացարեց, որ սպա հացկերույթից հետո Յուրիկը բոլորին համար կրերի համեր ուտելիքներ, խոկ մենք կոտենք, դա էլ կրանա մաղարիչ: Հաջորդ օրը՝ թաղման արարողությունից հետո, ժողովուրդը հավաքվեց Յուրիկենց բակում: Նստեցին մեռնահացի: Հացից հետո, երբ ժողովուրդը ցրվեց, Յուրիկը սպա սեղանից տարրեր ուտելիքներ լցրեց պայուսակների մեջ և բերեց: Հավաքվել էինք Սերժիկենց

դարպասի առաջ: Հենց գետնին խսկույն թերթեր փոեցինք, ուտելիքը շարեցինք և սկսեցինք մի լավ թեք անել: Հիշողության մեջ մինչև հինա մնացել է վինեգրետով լցված լիտրանց ապակե բանկան: Ի դեպ, այն մեր գյուղի հարանիքների և սգո սեղանների ամենանշանավոր աղցաններից էր: Մենք հերքով ձեռքներս մտցնում էինք բանկայի մեջ, բուրով հանում վինեգրետը և հաճույքով ուսում: Մեր քեփով այնքան էինք տարվել, որ չնկատեցինք, թե ինչպես հայտնվեց Սերժիկի հայրը:

– Ա՛ խոխեր, ետ հի՞նչ ըք անում:

Յուրիկը թե.

– Արշակ դայ, դեղոստ մեռա՝ ա, մադարիչ ըմ պերալ, օսում ընք:

Արշակ դային ձեռքը մեկնեց, չափառից մի ցաք պոկեց ու քայլ արեց դեպի մեզ.

– Ա՛ ես ձեր ծծած կաթնըմք...

Ծարունակությունը չլսեցինք. ամեն մեկս մի կողմի վրա պոկեցինք: Հերիս մտա մեր բակը ու մորս պատմեցի ողջ եղելությունը: Նա մի լավ ծիծաղեցուց հետո բացարեց, որ մադարիչն ուրախ առիթներով են անում, լավ լորի համար աչքալուսանք պետք է տալ, կարելի է աչքալուսանքի դիմաց որևէ բան խնդրել, օրինակ՝ քաղցրավենիք կամ փող: Գյուղում դրան ասում էին մշտլող ուզել: Դրանցից հետո, երբ տեսնում էինք, որ մեկի տղան բանակից կամ բարեկամները հետվից եկել ու փողոցով շարժվում էին դեպի նրանց տուն, վազելով շուտ հասնում էինք, աչքալուսանք տալիս և մշտլող ուզում: Հաճախ տալիս էին մի բուռ կոնֆետ կամ 1 ուորիլ, որով այդ տարիներին գյուղի խանութից կարելի էր շատ քաղցրավենիք գնել: Մեր ամենասիրածը խտացրած կարճ էր (արժեքը 55 կոպեկ), «լիմոննի» վաֆլին (25 կոպեկ), իսկ 20 կոպեկով էլ կարելի էր հին ակումբում որևէ կինոնկար դիտել:

Ներքե բայի վերևի մասում գյուղի կենտրոնում, կլոտնտեսության մի հին գոմ կար, որտեղ առաջ ձիեր էին պահում: Երբ 10-12 տարեկան երեխաներ էինք, այդ գոմը կիսախարիսուլ վիճակում դեռ կանգուն էր: Հետազայում քանիքնեցին: Կիսազետնափոր 10-15 մ երկարությամբ շինություն էր: Հետևի մասով տանիքը համարյա գետնի վրա էր, շատ հատվածներ՝ առանց կղմնինքի (գյուղի բուռ տների տանիքներն այդ ժամանակ կղմնինքածածկ էին, իսկ հետազայում սկսեցին գործածել շիֆեր): Մենք հաճախ էինք այդ անցքերից տանիք մտնում և խաղում: Այզկի մասում տանիքն ահազին բարձր էր գետնից և հենվում էր մի քանի գերաններից կազմված սյունաշարքի վրա: Գոմի առաջ մի փոքրիկ տափարակ կար, որտեղ անկանոն շարված էին մի քանի մեծ գերաններ: Այդտեղից սկսվում էր բավական թեք լամազը, որը ձգվում էր մի 100 մետրի չափ ու հասնում Ներքե ճյուր:

Մենք՝ 10-12 տարեկան տղաներս, խանութից առնում էինք խտացրած կարճ ու վաֆլին, վազում դեպի վերնշյալ գերանները: Գոմի առաջնամասում գտնվող սյուների վրա ցից մեխեր էին հանդիպում: Խտացրած կարի տուփը խփում էինք այդ մե-

խերին, ծակում ու հենց գերաններին նստած՝ խմում էինք համեղ բանձրուկ՝ հետև էլ ճաշակելով փլարուն վաֆլին: Բնական էր, որ այդքան քաղցր ոտելիքից հետո ծարավում էինք, բայց աղբյուրը հեռու չէր. 1-2 րոպե վազք լեռան լանջն ի վար, և մենք Ներքե ճյուրի պաղ աղբյուրների մոտ էինք: Ընդհանրապես շատ էինք սիրում այդ գերաններին նստել հատկապես ամռան լուսնյակ ու աստղաշատ զիշերներին: Հյուսակապ բնապատկեր էր բացվում. ներքևում տասնյակ կիլոմետրեր ճգվող դաշտերն ու բնակավայրերն աշք էին շոյում, և թվում էր՝ հորիզոնից անդին աշխարհը վերջանում է... Վաղ գարնանը մեզ ձգում-հմայում էր ներքեկի արտերի կանաչին խառնված վայրի կակաչների (պուժուժ էինք ասում) վառ կարմիրը, խև ամռանն այդ արտերն ավելի շատ նման էին ոսկեփայլ ծովին, որ քամուց ծփում էին խայտացող ալիքների պես: Արտերը հնձելուց հետո հարդի վառում էին, և զիշերը հրաշք տեսարան էր բացվում. կրակը տարածվում էր տարրեր ուղղություններով՝ ասես մարտահրավեր նետելով մինչև Քուր գետը փոփած զյուղերի վառվող աղոտ ճրագներին:

Լուսնյակ զիշերներին, այդ գերաններին նստած, երկար զրուցում էինք, երազում, ֆիլմեր (թեկուզ միասին էինք դիտել դրանք), տատիկներից լսած հեքիաքները պատմում, ընթերցած զբքերից պատմվածքները իշշում: Ասեմ, որ մեր տատիկների հեքիաքները, որոնք անշափ հետաքրքիր էին, հետու ես ոչ մի զրուց չեմ հանդիպել: Իմ կարծիքով՝ այդ հեքիաքներից շատերը հենց նրանք էին հորիզոնում: Թեպետ զրածանաչ էին, բայց որևէ զբքից չեմ կարող կարդացած լինել, քանի որ շատ դժվարությամբ էին զրուժ-կարդում: Հաճախ էին մեզ խնդրում, որ իրենց համար կարդանք բանակում ծառայող կամ հեռու քաղաքներում ապրող բոնների նամակները: Եվ մեր բարի տատիկների համար մենք կարդում էինք համարյա նոյն բառերով վկայող նամակները. «Նախքան նամակիս բուն իմաստին անցնելը՝ բոյլ տվեր... և այլն, և այլն»: Ի տարրերություն տատիկների՝ մեր պատերը քշախոս էին և շատ չէին կիսվում մեզ հետ: Երբ խնդրում էինք պատմել պատերազմից, ասում էին՝ կվախենաք, պատմել որսից՝ գլուխներն ազատում էին, կամ էլ մեզ ձեռ առնելու պես էին պատմում: Օրինակ՝ մի պասպի պատմում էր. «Մի օր զնացել էի անտառ՝ որսի: Հրացանը ուսս զցած զնում եմ, մեկ էլ մի արջ ելավ դեմս՝ զոգնոցը կապած, մեջք՝ լիքը տանձ ու ասաց՝ տանձը երկալ, Միսակ ախապեր: Ասացի՝ չե, շնորհակալ ըմ, ա՞ր քորիկ, սա՞ ն ինիս: Արջն իր ճամփան շարունակեց, ես՝ ինք: Սի քանի քայլ անելուց հետո թերվեցի և արջի թիկունքից կրակեցի: Տեսնեմ արջը զոգնոցը բաց թողեց, տանձը քափվեց գետնին, ինքը մի կերպ շրջվեց դեպի ինձ ու ընկնելով ասաց. «Վեզու կոտրե՛, Սիսա՞կ, քորեզնես (քորքներս) երիմ թողեցե՛ք»...

Ուրա խ, անհո՞գ, երջանի՞կ մանկություն...

\*\*\*

Տարիներ անց՝ 1985 թ., Սևծ հայրենականի 40-ամյակի կապակցությամբ դպրոցում կազմակերպեցի պատերազմի վետերանների հանդիպում աշակերտների հետ: Հավաքվել էին մեր դպրոցի վերջին 8-րդ դասարանի 6 աշակերտները և Ուշադիմության միջնակարգ դպրոցում սովորող 9-10-րդ դասարանների մեր զյուղացի աշակերտները: Ցավով պիտի նշեմ, որ երկու ամիս անց մեր դպրոցը փակվեց... Նախօրոք հանդիպել էի բոլոր վետերանների, ինչպես նաև մեր զյուղում շատ ու շատ հարգված Սանուշարյան Սարգիս պատուի հետ: Նա պատերազմի ժամանակ գերի էր ընկել, Ֆրանսիայի հյուսիսում փախել գերությունից, իսկ կարծ ժամանակ անց, երբ Ֆրանսիան ազատազրվել է անգլո-ամերիկյան զորքերի կողմից, պատերազմից հետո նա վերադարձել է զյուղու: Հատկանշական է, որ հետագա ամբողջ կյանքում նա անասնաբույժ է աշխատել և անգերազանցելի էր: Երբ հանդիպման սկզբում հետաքրքրվեցի նրա առողջությամբ, ասաց.

– Լա Մանշում ձեռ ու երես եմ լվացել, եկել սուն և ամրող կյանքս ծառայել ժողովրդիս: Շա՞տ լավ եմ:

Երկար ժամանակ վերիշշում էր պատերազմի տարիներին զլսով անցածը: Երբ պատմեց, որ ամերիկացիներն առաջարկել են մեկնել Ամերիկա, իսկ ինքը մերժել է, ես հարցիր:

– Ինչո՞ւ չգնացիք, չէ՞ որ փտանգ կար, որ սովետական մարմինները Զեզ կաքսորեին Սիրիի՝ գերի ընկնելու ու ամերիկացիների հետ շփվելու համար:

– Սորս խո՞ս սի տվել, որ ողջ-առողջ վերադառնալու եմ: Երազներում միշտ զյուղում էի: Ամերիկայում ճիրին Դուզեն և Թյունի պապունց կալ չի կա...

Սեկ ուրիշ վետերանի՝ Նապոլեոն Դանիելյանի հետ հանդիպեցի դաշտում: Այդ օրը մեր թաղի ոչխարժների հովհության նրա հերքն էր: Երկուսով նստել էինք ապրիլյան կանաչ խոտերի վրա: Նա, հայացքը զցած Շբալի ճորին, ընկել էր հուշերի գիրկը:

– Գիշերով անցել էինք թշնամու թիկունքը՝ հետախուզության, իսկ վերադարձին՝ վաղ առավոտյան, սկսվեց ճակատամարտը: Սենք հայտնվեցինք թշնամու կրակի տակ: Երբ մի քանի կրակաները պայքեց անմիջապես ոստիքին տակ, հասկացա, որ ինձ նկատել են, և վերջու եկել է: Այդ պահին հականալով, որ մահը մոտ է, «շենին չփրտակերը մենս ընգեն»...

Ճակատագիրը բարեհաճ գտնվեց նրա հանդեպ. նա էլ ողջ և առողջ վերադարձավ հայրենի զյուղ:

Հարգելի՝ համազյուղացիներ, իսկ նվաստ հնարավորություններով այս հուշերը շարադրեցի մի նպատակով, որ չմոռացվի մեր հինավորց զյուղը, որ միշտ հիշենք մեր հող-հայրենին, որ չմոռանանք «շենին չփրտակերը»...

## ԽԱԶԵՆ-ԴՈՐԲԱՏԼԻԻ ԴԱՍԹԱՐԱՆԻ ԱՐԱԲԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բաֆֆի Քորբոշյան

Դամբարանը գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերամի շրջկենտրոնից 11 կմ հյուսիս՝ Խաչեն-Դորբատլի<sup>1</sup> զյուղի հյուսիսարևմտյան եզրից 500 մ արևմուտք՝ Հիմնականում հիշատակվում է բնակավայրի, երբեմն էլ նաև այնտեղ ամփոփված հանգույցյալի անվամբ:

Դամբարանը յուրահատուկ է իր տեսակով: Չնանրամասնելով ճարտարապետական և գեղարվեստական առանձնահատկությունները՝ հարկ ենք համարում մեջբերել հուշարձանը բազմակողմանի ուսումնասիրած մասնագետների կարծիքները:

Ըստ ճարտարապետներ Մ. Ռուենիցի, Լ. Բրետանիցիու և Ա. Սալամզադեի «Մեծ հետաքրքրություն են ներկայացնում դամբարանի ճակատի պատկերները՝ եղնիկին խեղողող գիշատիչ, քևավոր արձվադարձ, ընձառյուծ, վազող եղջերուներ, այծյամներ և այլն...: Պատկերաքանդակները գունավորվել են մուգ կարմիր ներկանյութով և ողորկվել: Այս եղանակն Աղրբեջանում որևէ այլ տեղ չի հանդիպում...: Դամբարանի ճարտարապետական և հարդարանքի տարրերից շատերն ասոցիացվում են սահմանակից կամ հարևան երկրների ճարտարապետության մոտիվների հետ...: Օրինակ՝ հովանոցան ծածկը, մուտքի ճարտարապետական պարակալումը զարդաքանդակ վարդյակներով, ստալակտիտավոր լուծումները և հատկապես կենդանիների պատկերները, որոնք հազվագյուտ են Աղրբեջանի հուշարձանների հարդարանքում...: Դամբարանի ճարտարապետությունն ընդունակ է Անդրկովկասի մահմեդական և քրիստոնեական աշխարհների կապերի մասին պատկերացումը»<sup>2</sup>:




Դամբարանը հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

Լ. Բրետանիցիու և Բ. Վեյմարնի վկայությունների համաձայն՝ «...դամբարանի յուրահատուկ ճարտարապետությունն ու հարդարանքը զգալիորեն ընդունակ է պատկերացումները Սերձավոր Արևելքի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի մահմեդական և քրիստոնեական արվեստների փոխկապակցության մասին...: Ծքամուտքը... պարակալում է խոշոր, նրբուեն և վարպետորեն կերտած վարդյակների շղթան, որ հիշեցնում է Մելիք Աշարի դամբարանի և Եղվարդի եկեղեցի-տապանատան մուտքերի հարդարանքը: ...դամբարանի ճարտարապետության մեջ բազմաթիվ տարրեր վկայում են հարևան քրիստոնյա շրջանների ճարտարապետության հետ կապերի մասին՝ մուտքի հարդարանքը, ...կատարման ձևը, ստալակտիտավոր լուծումները: Հատուկ նշենք, որ Աղրբեջանի ճարտարապետական հուշարձանների հարդարանքում հազվադեպ են հանդիպում կենդանի արարածների

<sup>1</sup> Վկայվել է նաև Խաչեն-Դորբանողի՝ Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղրբեջանի բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 227: Մարզական Գ., Վիճակագիտական էսիդիմեր, «ՊԲՀ», 2008, № 2, էջ 199), Խաչեն-Դորբարը (Սույնոս Մ., Երեմանցի Լ., Սալամզադե Ա., Իстория Архитектуры Азербайджана, Москва, 1963, с. 155.

<sup>2</sup> Երեմանցի Լ., Վեյմար Բ., Օчерки истории и теории изобразительных искусств. Искусство Азербайджана IV-XVIII веков, Москва, 1976, с. 67), Խաչըն-Ջյուրբեյլի (Թֆենդի Ռ., Ազերբայջан Декоратив-Тәтбиги Сәнәтләри, Бакы, 1976, с. 45. Թֆենդի Ռ., Azərbaycan İncəsənəti, Bakı, 2007, s. 56), Խաչըն-Դերբենդ (Խելիլօվ Ա., Qarabağ Abidələri, 2009, s. 128. Գլիյեվ Տ., Qarabağda nəyim qaldı?, "Miras", 2011, № 1, s. 67. Հաչիլյավ Ջ., Vaxtilə Qarabağda mədəniyyət, elm və ədəbiyyat yüksək inkişaf dövrlü keçirib, "Xalq Cabəssi", 18 fevral, 2015, s. 13) և Խաչըն-Դերբենդի (Թիլիյեվ Ռ., Azərbaycan Toponimlərinin Ensiklopedik Lügəti, C. 2, Bakı, 2017, s. 332) տարրերներով:

<sup>2</sup> Սույնոս Մ., Երեմանցի Լ., Սալամզադե Ա., նշվ. աշխ., էջ 153, 156:



Դամբարանի ստալակտիտավոր լուծումները և ճակատները զարդարող մի քանի կենդանիների պատկերներ (լուս.՝ Ռ. Զորբոշյանի, 2011 թ.)

պատկերներ՝ ...եղմիկին խեղդող գիշատիչ, թևավոր արձվառյուծ, եղջերուներ, այծյամներ...»<sup>3</sup>:

Ըստ հուշարձանագետ Սամվել Կարապետյանի «...նրա որմերի մեջ բացված խորշերի շուրջ պատկերված ցլի, վագրի և կենդանակերպ այլ հարբարանդակների կատարման ոճն ու գեղարվեստական առանձնահատկությունները հար և նման են... Եղվարդում՝ Շահիկ վարդպետի (ճարտարապետի) կառուցած Սր. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատի հարբարանդակներին: Բացի պատկերաբանակներից՝ համանման են նաև այդ շինությունների զարդարանդակները և հատկապես ստալակտիտավոր լուծումները...: Առկա ընդհանրությունները, նաև կառուցման ժամանակաշրջանի համընկնումը... առիթ են տալիս կար-


ծելու, որ Խաչեն-Դորբանդիի դամբարանի ճարտարապետը նոյն ինքը՝ Շահիկ վարդպետն է...»<sup>4</sup>:

Դամբարանի վերաբերյալ հիմնական տեղեկությունները, սակայն, մեզ է փոխանցում հյուսիսային ճակատի մուտքից վեր փորագրված արաբերեն արձանագրությունը, որտեղ նշված են կառուցման թվականը, պատվիրատուի և ճարտարապետի անունները: Այս արձանագրությունը թարգմանաբար հրատարակվել է աղբբեջաններեն և ռուսերեն մի քանի աշխատություններում (Ե. Պախոնով, Մ. Մասսոն, Ա. Բոլդիրն, Ա. Սալամզադե, Լ. Կերիմով, Տ. Գյուղալյան, Ա. Ալեսքերզադ)<sup>5</sup>: Պետք է նշել, որ

<sup>4</sup> Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 227: Տես նաև նոյնի՝ Արցախի հայ ճարտարապետության մահմեդական հուշարձանները, Երևան, 2010, էջ 4-11:

<sup>5</sup> Ճարտարապետի անվան ընթերցումը հեղինակների մոտ տարրել է (Սույնով Մ., Բրետանուկի Լ., Սալամզադ Ա., նշվ. աշխ., էջ 155):

<sup>3</sup> Բրետանուկի Լ., Վեյմարն Ե., նշվ. աշխ., էջ 67, 69:



Խաչեն-Դորրատլիի դամբարանի մուտքի հարդարանքը (լուս.՝ Ս. Կառավարյանի, 2009 թ.) և կենդանիների պատկերաքանդակները (լուս.՝ Ժ. Ա. և Ը. Դորելիների, 2005 թ.)

Վերջիններս, որպես կանոն, միանման և ճիշտ են ընթերցել կառուցման թվականը, իսկ պատվիրատուի անունը՝ բնօրինակից և միմյանցից փոքր տարրերություններով (այսպես՝ Մուսա խոջայի որդի Կուրլու<sup>6</sup>, Մուսայի որդի Կատավա խոջա<sup>7</sup>), սա-

եղվարդի Սր. Աստվածածին Եկեղեցու երկրորդ հարկի մուտքի հարդարանքը և կենդանիների բարձրաքանդակները (լուս.՝ Ռ. Թորոշյանի, 2011 թ.)

կայմ ամբողջովին սխալ են ընթերցել ճարտարապետի անունը՝ Շահենազեր<sup>8</sup> կամ Շախենզի<sup>9</sup>:



Նոր մոտեցում է ձևափորում արձանագրության մեր ընթերցումը, որն էլ ճշտում է կառույցի ճարտարապետի ինքնությունը՝ հայազգի Շահիկ վարդ-

<sup>6</sup> Նոյն տեղում:

<sup>7</sup> **Бретаницкий Л.**, Зодчество Азербайджана XII-XV вв. и его место в архитектуре Переднего Востока, Москва, 1966, с. 195.

<sup>8</sup> **Усейнов М., Бретаницкий Л., Саламзаде А.**, նշվ. աշխ., էջ 155. Տե՛ս նաև **Әfəndi R.**, Azərbaycan İncəsənəti, s. 56.

<sup>9</sup> **Бретаницкий Л.**, նշվ. աշխ., էջ 195. Տե՛ս նաև **Бретаницкий Л., Веймарн Б.**, նշվ. աշխ., էջ 69:



Երևանի դամբարանի ստալակտիտավոր լուծումներով մուտքը (լուս.՝ Վ. Կարապետյանի, 2011 թ.), Եղվարդի Սր. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատը (լուս.՝ Վ. Կարապետյանի, 2006 թ.), Երևանի դամբարանից հայտնաբերված արաբատառ շքայուսները (լուս.՝ Ա. Քալմարյանի և Վ. Մելքոնյանի նշվ. աշխ.-ից) և Եղվարդի Սր. Աստվածածին եկեղեցու թմբուկի վերնամասում ագուցված համանձան արաբատառ շքայուսները (լուս.՝ Ռ. Քորրոշյանի, 2011 թ.)

պետ, և հաստատում նախապես մեջբերված մասնագետների կարծիքներու ու եզրահանգումները:

Վարդպետ Շահիկը նաև Երևանի Արովյան 3 հասցեում գտնվող մահմեդական դամբարանի և Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի Սր. Աստվածածին եկեղեցու ճարտարապետն է<sup>10</sup>: Որպես մշակութային փոխազդեցության ցայտուն դրսորում՝ Երևանի դամբարանի մուտքի վրա առկա է հայերեն և արաբերեն արձանագրությունները<sup>11</sup>, իսկ Եղվարդի ե-

10 Եղվարդի Սր. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1321 թ. (Մարզական Գ., նշվ. հոդվ., էջ 198):

11 Երևանի դամբարանի հայերեն արձանագրությունն է՝ ԶԿՀ (1319 թ.), Ծահ(ի)կ վ(ար)դ(պէտ) (Քաղաքաբարյան Ա., Ստրոն-յան Հ., Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Երևան, 2005, էջ 122; Տե՛ս նաև Նորահայտ դամբարան՝ Երևանի կենտրոնում, «Հայ արվեստ», 2002, № 1, էջ 23): Իսկ առաջին անգամ հրատարակվող արաբերեն արձանագրությունն է՝ Հայ/شی ابن غماوث /في ستة عشر و سبعمائة .


կեղեցու թմբուկի վերնամասում տեղադրվել են արաբատառ զնարակված բազմաթիվ սալիկներ (շրայլուսներ), որոնց նմանները հայտնաբերվել են նաև Երևանի դամբարանի պեղումների ժամանակ:

Խաչեն-Դորբատլիի դամբարանի արաբերեն եռատող արձանագրությունն է.

هذا (إ) العمارة للمرحوم قتلوا خواجه بن موشى المحتاج إلى رحمة الله تعالى في تاريخ عشرة ربى آخر سنة اربعية عشر سبعينية . / عمل (إ) لبناء شاهيك و ت.

Թարգմ. Այս կառույցը Մուշայի որդու՝ հանգույցալ Կուրլու Խավաջայինն է: Նա աստծոն ողորմության կարիքն ունի: Ժվին 10 Բարիդ Ալախեր 714 (24-07-1314): Ծենքի կառուցող՝ Ծահիկ վարդպետ:

Թարգմ. Ղմանավի որդի Քալ(?) Մուշա, թվին 720 (1320-1321 թթ.): Հավանական է, որ այս դամբարանը պատկանում է Կուրլու Խավաջայի հորը:



Խաչեն-Դորբատլիի դամբարանի արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.) և գրքանկարը (գրչ.՝ Ռ. Զորբոշյանի, 2010 թ.)

Ամփոփելով վերոշարադրյալլ՝ հարկ եմ համարում նշել, որ 1995 թ.-ից ի վեր աղբքեզանական քարոզամեքենան հաճախ անհիմ տեղեկություններ է հրապարակում այն մասին, թե հայերը կանխամտածված ավերում են Արցախի մահմեդական հուշարձանները՝ այդ շարքում նշելով նաև Խաչեն-Դորբատլիի դամբարանը<sup>12</sup>. Իրականում, սակայն, մահմեդական հուշարձանները ոչ միայն պահպանվում էին Արցախում, այլև հենց հայկական գիտական շրջանակներում ցարդ համարվում են ազգային ճարտարապետության անքակտելի մաս, քանի որ դրանք, ինչպես նաև Խաչեն-Դորբատլիի դամ-

բարանը, «...ստեղծվել են հազարամյակների մշակման ուղի անցած հայ ճարտարապետության շինարվեստով, սկզբունքներով, տրամաբանությամբ, գիտելիքների պաշարով, հմտություններով, գեղարվեստական ընկալումներով և հայ մարդու քրտինքով»<sup>13</sup>:

Երբ 21/11/2020 թ. ավարտվեց հայ ճարտարապետության յուրահատուկ գոհարներից մեկին՝ Խաչեն-Դորբատլիի դամբարանին նվիրված այս ուսումնասիրությունը, այն, ցավոք, արդեն մեկ օր առաջ գերեվարվել էր:

<sup>12</sup> Այդ մասին սեն [www.virtualkarabakh.az](http://www.virtualkarabakh.az)  
[www.armenianvandalism.az](http://www.armenianvandalism.az)  
[www.musabiqe.edu.az](http://www.musabiqe.edu.az)  
[www.aydinliga-dogru.com](http://www.aydinliga-dogru.com)  
[www.azertag.az](http://www.azertag.az)

<sup>13</sup> Կարսապետյան Ս., Արցախի հայ ճարտարապետության մահմեդական հուշարձանները, էջ 2:

## ՀԱՅԵՐԻ ԵԿԵՂԵՑԱՇԽՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՂԻՄԻՆԻՎՅՈՒՄ

Հեթում քին. Թարվերյան

Հայ համայնքների գործունեությունը միշտ էլ մեծ հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն հայ, այլև օտար պատմաբանների շրջանում: Պատմական հարուստ ժառանգությամբ է առանձնանում հատկապես Ռումինիայի հայ համայնքը<sup>1</sup>:

### 1. ՍՈՒՇԱՎԱԾ

Սեր նախորդ հողվածներում անդրադարձել ենք ռումինահայերի ծագմանը: Ինչպես հայտնի է, նրանք սերում են Անիից<sup>2</sup>: 1045 թ. Անիի կործանումից հետո քազմարիվ հայեր զարդում են Ղրիմ, Լեհաստան, այնուեղից էլ՝ մոլլովական հողեր՝ Սուչավա<sup>3</sup>: Դժվար է ասել, թե երբ են նրանք այնտեղ հաստատվել, քայլ ընդունված է այն փաստը, որ ոտք են դրել ԺԴ դարի սկզբին<sup>4</sup>:

Հայունի է, որ դեռևս 1388 թ. տեղի հայ համայնքը ենթարկվում էր Լվովի հայոց թեմին: 1401 թ. մոլլովական իշխան Ալեքսանդր Ա Բարեպաշտը Սուչավայում հաստատում է հայկական առանձին եպիսկոպոսական արքուն<sup>5</sup>:

Պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԺԵ դարից սկսած՝ մեծապես աճրապնդվում է հայերի դիրքը Սուչավայում, և նրանք սկսում են եկեղեցիներ կառուցել: Կարոյիկ եպիսկոպոս Բանիինիի վկայության համաձայն՝ 1646 թ. հայերն արդեն ունեին 4 եկեղեցի, որոնց եպիսկոպոսի նստավայրն էր քաղաքի մյուս ծայրին գտնվող վանքը<sup>6</sup>:

Ըստ ռումինական աղբյուրների՝ հայերը Սուչավայում բնակվում էին ոչ միայն քաղաքի ծայրամասերում, այլև կենտրոնական հատվածում<sup>7</sup>:

Այս մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում ռումին պատմաբան Հովհաննես Գուեմադեն:

Ըստ նրա՝ հայկական քաղամասը գտնվում է Հովհաննես Գուեմադեն 4 շուրջ:

<sup>1</sup> **Տօրամանն A.**, Կ իշխանությունում գործունեություն ունեցած հայության մասին: Հայության մասին պատմություն, 1980, № 4, էջ 208-222:

<sup>2</sup> **Թարվերյան Հ.**, Սուչավայի հայկական հրաշքը, «Էջմիածն», 2014, Դ, էջ 122:

<sup>3</sup> **Դանեստրիոն Տաճ.**, Արևելեան Հայր ի Պուրովինա, թարգ.՝ Գ. Գալենքարեանի, Վիեննա, 1891, էջ 5:

<sup>4</sup> **Թարվերյան Հ.**, Ռումինահայ զարգախնների դիրք ԺԶ-ԺԵ դարերում, «Էջմիածն», 2014, Թ, էջ 119:

<sup>5</sup> **Siruni H.**, Bisericile armene din Tările Române on Anuarul “Ani”, de cultură armeană, București, 1942-1943, p. 516. Տես նաև **Giurescu C.**, Târguri sau orașe si cetăți moldovene, București, 1967, p. 282-283.

<sup>6</sup> **Reli S.**, Din viata religioasă și bisericiească a Sucevei în sec. XVIII-XIX, Cernăuti, 1937, p. 19.

<sup>7</sup> **Giurescu C.**, նշվ. աշխ., էջ 285: Տես նաև **Թարվերյան Լ.**, Հայերը Մոլլովայում և Բուրզինայում, Թիֆլիս, 1911, էջ 163:

կայից հյուսիս-արևմուտք և ուներ հիմնականում միահարկ և ցածր տներ<sup>8</sup>:

Լ. Բարայանի տվյալների համաձայն՝ հայերը բնակվում էին հայկական փողոցում, ինչպես նաև Սր. Սիմեոն եկեղեցու և Զամկա վանքի հարևանությամբ<sup>9</sup>:

Հովհաննես Գուեմադեն նշում է, որ սուչավարնակ հայերը մեծահարուստներ էին: Հատկապես աշքի էին ընկնում վաճառականները, որոնք մեծ առևտուր էին անում շուկայի կենտրոնում<sup>10</sup>: Բացի առևտուրից՝ հայերը զբաղվում էին նաև անուշեղեն պատրաստելով և դրա վաճառքով: Քաղաքում նշանավոր հայ սեփականատերերից էին Պրոնի եղբայրները, Անդրեաս և Ջիստափոր Արտինովչները, ինչպես նաև Խաչերես Խաչին և Կարպիսը<sup>11</sup>:

ԺԵ դարում քաղաքի հայ բնակչությունը կազմում էր 3500 (700 տուն)<sup>12</sup>, 1608 թ.՝ 2000<sup>13</sup>, 1645 թ.՝ 3000<sup>14</sup>, 1830 թ.՝ 1000 (200 տուն)<sup>15</sup>, 1911 թ.՝ 215<sup>16</sup>, 1926 թ.՝ 100<sup>17</sup>, 2014 թ.՝ 62 շունչ:

Ինչ վերաբերում է Սուչավայի հայապատկան տների ճարտարապետությանը, ապա Լ. Բարայանը գրում է, որ դրանց մեծ մասը կառուցված է եղել մոլլովական ոճով, իսկ տան շորջն այնպիս էր պարապապատվում, որ հնարավորություն չէր տրվում անցորդներին նայել դեպի ներս<sup>18</sup>:

Ռումին նշանավոր պատմաբան Գ. Գոլիավը հայտնում է, որ Սուչավայի կենտրոնում շուկայի տեղում էր եղել Սր. Սարիամ Աստվածածին եկեղեցին, իսկ նրանց ոչ շատ հեռու Սր. Խաչը էր:

Շուկայի շինարարության ժամանակ հայտնաբերվել են նշված եկեղեցու հիմքերը և հայկական տապանաքարեր, որոնք, ցավոք, չեն պահպանվել:

Սր. Սարիամ Աստվածածին եկեղեցու կառուցման և ավերման մասին ոչ մի տեղեկություն հայտ-

<sup>8</sup> **Grămadă I.**, Din Bucovina de altădată, București, 1911, p 59.

<sup>9</sup> **Թարվերյան Լ.**, նշվ. աշխ., էջ 156-158:

<sup>10</sup> **Grămadă I.**, նշվ. աշխ., էջ 59.

<sup>11</sup> **Թարվերյան Լ.**, նշվ. աշխ., էջ 156-158:

<sup>12</sup> **Քջկեան Մ.**, Շամապարհորդություն ի Լեհաստան եւ յայլ կողման բնական ի հայկազան սերեղոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 191:

<sup>13</sup> **Սիմեոն Կարպի Լեհացոյն** Ռումենություն, տարեգրություն եւ յիշատակարան, աշխատ. **Ն. Ալիմեան**, Վիեննա, 1934, էջ 33:

<sup>14</sup> **Codex Bandinus**, Analele Academiei, p. 219.

<sup>15</sup> **Քջկեան Մ.**, նշվ. աշխ., էջ 191:

<sup>16</sup> **Թարվերյան Լ.**, նշվ. աշխ., էջ 149:

<sup>17</sup> **Grămadă I.**, նշվ. աշխ., էջ 59-60:

<sup>18</sup> **Թարվերյան Լ.**, նշվ. աշխ., էջ 164:

Աի չէ: Կարելի է միայն ենթադրել, որ այն կամ ավերվել է 1512 թվականից առաջ, երբ հիմնվել է Սր. Մարիամ Աստվածածին կուսանաց վանքը, կամ էլ 1551 թ. կործանվել հրանորային հարվածից, որը, ըստ Սինաս Թողարկությունի տեղեկության, կատարվել է Ստեփան կամ Ստեփան իշխանի հրամանով<sup>19</sup>:

Մեր ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ մինչև ԺԸ դարը Սուչավա քաղաքում գոյություն է ունեցել հայկական մեկ այլ եկեղեցի ևս՝ Սր. Երրորդությունը, որին կից եղել է գերեզմանոց: Հայտնի է նաև, որ եկեղեցու քարերով կառուցվել է Սր. Խաչ եկեղեցու գավիրը<sup>20</sup>: Ցավոք սրտի, նենք չկարողացանք որևէ այլ տեղեկություն գտնել Սր. Երրորդություն եկեղեցու հիմնադրման վերաբերյալ:

Ընդհանրապես Սուչավայում հայկական եկեղեցիների, վանքերի և հատկապես Սր. Երրորդություն և Սր. Նիկողայոս եկեղեցիների մասին հիշատակում է Սինաս Բժշկյանը<sup>21</sup>:

Վերոնշյալ եկեղեցիներից և վանքերից զատ՝ 1902 թ. քաղաքի հայկական գերեզմանոցի կենտրոնում կառուցվում է զմբեթավոր մատուռ (ճարտարապետն է Վ. Կիլկան)՝ որպես Պրունկուլիների ընտանեկան դամբարան: Այն Ռումինիայի՝ հայկական ճարտարապետության ոճով կառուցված եկեղեցական միակ շինությունն է:

Սատուխի ներսում ազգուցված մարմարյա և սալիկին առկա է հայերեն և գերմաներեն (վերջին տող՝ լատիներեն) շինարարական արձանագրություն:

*Diese Kapelle wurde als Ruhestätte ihrer Angehörigen Michael Bogdan Ritter von Prunkul, Warteres Garabeth Ritter von Prunkul und Sofie Walerian von Prunkul im Jahre des Herrn 1902 erbaut. Fecit ing. W. Klika.*

Թարգմ.: Այս մատուռը կառուցվել է որպես վերցին հանգրված սիրելի Սիրայել Բողդան կավալեր Ֆոն Պրունկուլի, Վարդերեն Կարապետ կավալեր Ֆոն Պրունկուլի և Սոֆի Վալերիան Ֆոն Պրունկուլի, մեր տիրոջ 1902-րդ տարում: Կառուցել է ճարտարապետ Վ. Կիլկան:

Ծանր սայիկի հայերեն արձանագրությունից պարզվում է, որ մատուռում ամփոփված են մինչև 1902 թ. վախճանված Պրունկուլ ընտանիքի ուր անդամները՝ Ասսուր, Կատրինե, Տոնիա, Սերինա, Շոմինիկ, Գարաբետ, Վալերիան, Սոֆի:

Սուչավայում հայերը կառուցել են նաև Զամկայի և Հաճկատարի վանքերը:

Զամկան, որը ԺԵ դարում եղել է տեղի հայոց հոգևոր առաջնորդական կենտրոնը, կոչվել է նաև Սր. Օգուստ, որի մասին լեի պատմաբան Լ. Շի-

<sup>19</sup> Siruni H., նշվ. աշխ., էջ 524. Տես նաև Ալիշան Դ., Կամենից. Տարեկարք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ հաւասարեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 42: Ալիշան Դ., Հինգ պանդուս տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 88:

<sup>20</sup> Goilav G., Bisericile armene de prin Târile Române, București, 1911, թ. 4. Տես նաև Siruni H., նշվ. աշխ., էջ 524:

<sup>21</sup> Բժշկյան Մ., նշվ. աշխ., էջ 191-192: Տես նաև Քարայիս Լ., նշվ. աշխ., էջ 174:



Պրունկուլների ընտանեկան մատուռ-դամբարանը

մանսքին գրում է. «Զամբան, անկասկած, հանդիսանում է Սուչավայի հայերի կառուցած ամենակարևոր հոգևոր յուշարձանը՝ գերազանցելով մնացեալ բոլորին ինչպէս իր մեծութեամբ, այնպէս էլ իր արուեստով: Գտնուելով Սուչավայի արևամտեան ծայրամասի՝ Արենի կողուած բարձրավանդակում՝ նա ստացաւ լեհական Զամք կամ յոգնակի՝ Զամքի անունը, որը լեհերեն նշանակում է բերդ, ամրութիւն կամ ամրոց»<sup>23</sup>:

Զամկան, որպէս թեմական առաջնորդանիստ կենտրոն, առաջին անգամ հիշատակվում է 1415 թ.: Նշված թվականին առաջնորդն էր Ավետիք նախկինությունը<sup>24</sup>:

Զամկայի վանքը, պարսպապատից բացի, բաղկացած է հիմնականում երեք կառուցածներից: Հենց այդ պատճառով էլ ավանդաբար հիշվում է, որ վանքը կառուցել են երեք եղբայրներ<sup>25</sup>:

<sup>23</sup> Գօլանձեան Ս., Ռումինահայութեան Անիմ՝ Սուչավայի հայ գաղութ, Երևան, 2000, էջ 87:

<sup>24</sup> Սիրունի Հ., Հայ եկեղեցին ուսմեն հողի վրա: Նիկոլա Յորգա, Սր. Էջմիածին, 1966, էջ 15: Տես նաև Բ. Պ. Hajdeu, Istoria tolerantei religioase on România, Bucureşti, 1868, p. 62-63.

<sup>25</sup> Ըստ ավանդության՝ Եղբայրներից Հակոբը կառուցել է Սր. Հակոբը մատուռը՝ Օգուստ՝ Սր. Օգուստի եկեղեցին, իսկ Գրիգորը՝ Սր. Գրիգոր Լուսափորչի մատուռը (Քարայիս Լ., Ռումինահայ գաղութը, Երևանիմ, 1979, էջ 63): Այսուղ



Զամկայի վանքը հարավ-արևմուտքից

Առաջին շինությունը զանգակատուն-աշտարակն է, որի ստորին մասից պատմական դարպասով բացվում է դեպի վանք տաճանող մուտքը: Աշտարակի երկրորդ հարկում Սր. Գրիգոր Լուսավորչի մատուռն է, իսկ նրա վերևում զանգակատունը:

Երկրորդը Սր. Օգունտ Եկեղեցին է՝ բաղկացած նախազավթից, զավթից և խորանից: Ունի երկու մուտք՝ բացված զավթի հյուսիսային և նախազավթի արևմտյան կողմից:

Երրորդը վանատուն առաջնորդարանն է, որի երկրորդ հարկում է գտնվում Սր. Աստվածածնին նվիրված մատուռը, իսկ նրա վերևում պաշտպանական մի կառույց է՝ ընդգրկված պարիսպների ընդհանուր համակարգում:

Վանքի պարիսպը, ինչպես գրում է ԺԷ դարի մատենագիր Գրիգոր Դարձնաղին, կառուցվել է նույն դարի քանական թվականներին<sup>26</sup> Մոլդովայի հայոց թեմի առաջնորդ Դազար Վրդ. Բարերդացու կողմից (պաշտոնավարել է 1624-1631 թթ.):

Վանքի պարիսպների արևելյան անկյունային մասում երևում են միաբանական կացարանների ավերակները, որոնք այժմ ել խնամքով պահպանվում են: Անհրաժեշտ է նշել, որ Զամկան նախորդ տասնամյակներին նորոգվել է ուսմինական իշխանությունների կողմից:

Սր. Օգունտ Եկեղեցու ներսի որմնանկարների թեմատիկան ընդգրկում է տերունական ողջ պատկերաշարը: Այն կատարման տեխնիկայով, ըստ ուսմինացի մասնագետների, բնորոշ է ԺԵ-ԺԷ դդ. ուսմինական արվեստին: Որմնանկարների շարքից, ցավոր, առանձին թեկողներ են պահպանվել, որոնք հիացնում են իրենց արտահայտչականությամբ:

<sup>26</sup> Ի աշխարհում այժմ Սր. Հակոբ անունով Եկեղեցի գոյություն չունի, իսկ Սր. Օգունտի Եկեղեցուն գտնվող տապանաքարի արձանագրությունները պարզվում են, որ հիմնաղիքը ոչ թե Օգունտն է, այլ Ակորչան:



Զամկայի վանքի զանգակատուն-աշտարակը և Սր. Օգունտ Եկեղեցին հյուսիս-արևմուտքից

Սր. Օգունտ Եկեղեցու ավագ խորանի առջև է գտնվում հիմնաղիքի գերեզմանը, որն ունի հետևյալ արձանագրությունը:


*Այս է տապան / Ակորչ(այ)ին, որ է որդին Ամիրային: Սա է շին/օն Ս(ուր)ը տաճարին, / համգեաւ հայոց Ռ թվին ԿԱ (1612) էր աւելին, օգս.-ի / ԺԵ (15)-ինը<sup>27</sup>:*

Սուչավայում հայկական նշանավոր Եկեղեցիներից է նաև Սր. Խաչը: Այստեղ պահպանվել է ուսմինահայ գաղութից մեզ հասած հնագույն՝ 1428 և



Դատվածներ Սր. Օգունտ Եկեղեցու որմնանկարներից

<sup>27</sup> Սիրումիք Հ., նշվ. աշխ., էջ 103:



Ար. Օգտենու Եկեղեցին կառուցողի՝ Ամիրայի որդու՝ Ակոբշայի տապանաքարը

1447 թթ. երկու տապանաքար, որոնց արձանագրություններն են.

ա Այս է տապան Էտիլապէյհմ, որ է որդի Սողոմոնին: Հանգեաւ թվին հազար ՆԻԸ (1428) ապրիլ ամսոյ ԺԴ-ին:

բ Այս է տապան Էտայի երիցու, թվ. ԶԻԶ (1447)<sup>28</sup>:

Եկեղեցին սկզբնապես փայտաշեն էր: Հիմնովին վերակառուցվում է 1521 թ.՝ Շոտեֆանիցա վոյեվոդայի օրոք Խաչիկ Հանգոյի կողմից<sup>29</sup> և դառնում քարաշեն:

Սր. Խաչի այսօր ևս հայկական գործող Եկեղեցի է: Գավթում են գտնվում մի շարք սրբապատկերներ, այդ թվում՝ Սր. Սարգսին (1828 թ.): Այստեղ են քերպել նաև քաղաքի Սր. Սիմեոն հայոց Եկեղեցու ավագ խորանի՝ 1811 թ. «Տիրամոր քագարում» սրբապատկերը, ինչպես նաև Բաքրու քաղաքի հայոց Եկեղեցու իկոնոստասի տերունական պատկերաշարը՝ փայտա ոսկեզօծ շրջանակներով:

Սր. Խաչի ևս ունի շքեղ իկոնոստաս՝ ստեղծված ԺԹ դարի առաջին կեսին:

Եկեղեցուն կից գտնվող թանգարանում կան ԺԹ-ԺԹ դարերի մի շարք սրբապատկերներ, ինչպես նաև արխիվային նյութեր:

Սուչափա քաղաքի հայկական երկրորդ Եկեղեցին Սր. Սիմեոնն է, որն անվանվում է նաև Կարմիր աշտարակ (Turnul Rosu)՝ զանգակատան կարմիր գույնի համար: Սրա մասին Մինաս Բժշկյանը գրում է. «Սուրբ Սիմեոն է քարաշեն և գեղեցիկ Եկեղեցի կառուցեալ ի ծայր թաղին հայոց»<sup>30</sup>:

Եկեղեցու կառուցման հստակ թվականը հայտնի չէ, սակայն, որպես վերակառուցման թվական նշվում է 1606 թ., որից եզրակացնում ենք, որ այս հիմնադրվել է դրանից առաջ<sup>31</sup>:

Հարկ է նշել, որ պահպանվում է Եկեղեցին վերակառուցող պարոն Տնիկի որդու՝ տեր Հովհաննեսի տապանաքարը.

Այս է տապան տէր Օհաննէսին ավաքերէց կանուանէին, որ է որդին աղ(ա)ր(սն) Տանիկին՝ Եկեղեցի շիմոնին, որ կանուանէ սուրբ Սիմեոն: Հանգեաւ թվին (1619)-ին, մարտի ամսոյն ԻՐ (22)-ին հետ գալստեանն Ծաղկազարդին:

28 Նշվ. աշխ., էջ 99:

29 Նշվ. աշխ., էջ 109:

30 Քժշկեան Մ., նշվ. աշխ., էջ 192:

31 Սիրումի Հ., նշվ. աշխ., էջ 111:

Եկեղեցուն կից գտնվում է նաև Սուչափայի հայոց հիմն գերեզմանոցը, որտեղ հնագույն տապանաքարերը պատկանում են ԺԹ դարին:

Սուչափայի ոչ միայն հայկական, այլև բոլոր Եկեղեցիներից ու վաճքերից ամենահռչակավորը, սակայն, Հաճկատարն է, որն անվանվել է Եվրոպայի մուրազասուու Սուրբ Կարապէտ<sup>32</sup>: Նրա հոչակը լավագույնս արտահայտվել է հենց նրան տրված հաճկատար բնորոշման մեջ<sup>33</sup>:

1512 թ. Սուչափայում հիմնված Սր. Աստվածածին վաճքին տրված Հաճկատար անվանումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ սա Ուումինիայում ժառանգորդն է ընկալվել Լվովի Սր. Աստվածածին հայոց վաճքի, որը ևս Հաճկատար է անվանվել:

Հարկ է նշել նաև, որ վաճքը ուումինական վավերագրերում հիշվում է նաև որպես Սիսուլի Արմենիակ՝ Հայոց վաճք: Խոկ Սր. Աստվածածին Եկեղեցու մուտքին ուումիներեն գրված է՝ «Hajigadar»:

Ինչպիս ասացինք, Սուչափան սկզբնապես հոգևոր մի հովության վիճակ էր Լվովի թեմի կազմում և հետո է դառնում առանձին թեմ, և նոյն Սուչափայում հաստատված հայերի մի զգալի մասը եկել էր հետո Ուկրաինայից ու Լեհաստանից՝ իրենց հետ բերելով Լվովի Հաճկատար անվանվող վաճքի հիշողությունը: Վաճական այս երկու հաստատություններն իրար կապող հոգևոր ընդհանրություն էր նաև այն, որ երկուսն էլ անեցիների շառավիղների կառուցած վաճքերն էին համարվում:

Սր. Հաճկատարի հիմնադրման մասին մեզ է հասել մի ավանդություն, որն ունի երկու տարրերակ: Ըստ առաջինի՝ Սր. Հաճկատարի վաճքի հիմնադրումը կապվում է Տոնավագ (ըստ ուումինական ավանդության՝ Դրզգան Դոնովակի) անունով մի եզնավաճառի հետ, որը եզները վաճառելու նպատակով Վիեննա տաճելու ճանապարհին գիշերում է այն բրին, որի վրա ներկայիս վաճքն է: Երազում նա տեսնում է մեղեղիներ երգող հրեշտակների ու հոգևոր զմայլման մեջ արքանալով՝ ուխտ է անում, որ եթե գործերը հաջող ընթանան, այդ տեղում մի վաճք կկառուցի<sup>34</sup>: Նա Վիեննայում բավականին հաջող վաճառում է անաստաները և համաձայն իր ուխտի՝ կառուցում է այս վաճքը<sup>35</sup>:

Ըստ երկրորդ տարրերակի՝ Տոնավագ մականունով եզնավաճառ երկու՝ Աստվածատուր (Բողդան) և Տրական եղբայրները, անցնելով այդ կողմե-

32 Մամիկոնեան Պ., Ուումինահայոց ներկայան եւ ապագան, Կալաց, 1895, էջ 26:

33 Ալիշան Ղ., Սիսուլն. Համագլուխին Հայկական Կիլիկիոյ եւ Լետն Սեծագրը, Վենեսուլի, 1885, էջ 253:

34 Խաչիկյան Լ., Հայերը հիմն Մոսկվայում եւ Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բաճեր Սատենադարանի», 1980, № 13, էջ 7-107:

35 Սիրումի Հ., նշվ. աշխ., էջ 107:



Ար. Խաչ Եկեղեցին հյուսիս-արևմուտքից

բով, գիշերում են այն տեղում, որտեղից երևում է Համբատարի եկեղեցու բլուրը: Նրանք երկուսն եւ նույն երազն են տեսնում՝ իրենց գործերի հաջողության համար մի եկեղեցի են կառուցել երևացող բլրին: Առավոտյան արքնանալով՝ եղբայրները տեսնում են, որ եկեղեցու հիմքերը զցվել են, և նույն տարում էլ կառուցում են վաճքը<sup>36</sup>:

Հաճկատարի հիմնադրման ավանդությունը ցոյց է տալիս, որ այն ոչ միայն ուխտակատար վաճք է, այլև ինքն իր հերթին կատարված ուստի՝ Տննավագ եղբայրների տված խոստման արդյունք:

Եկեղեցու գավթի ճակատին 1896 թ. ագուցված սալիկին արձանագրված է.

*Ըստ հին աւանդական գրեանց ապացուցմանց հիմնեալ եղի հրաշագործ սուրբ տաճարիս Տօնավագ անուամբ բարեպաշտէ մը, բուականիմ Քրիստոսի 1512-էն և նորոգեցաւ արդեամբ ազգային յիշատակաց լեալ բարեպաշտից 1896 թին<sup>37</sup>:*

Հայտնի է, որ Հաճկատարը որոշ ժամանակ եղել է կուսանաց անապատ (Զամկան՝ արանց մենաստան), որի բակում էլ գտնվում են մի քանի միանձնուիհների շիրիմները, որոնց մոտ ուխտագնացությունների օրերին մոմեր են վառվում, իսկ տապանաքարերը պատփում են մետաղադրամներով:

Ըստ ԺԷ դարավերջի լատիներեն մի վավերագրի՝ «Սուչավայի հարավային կողմք՝ քառորդ մղոն հեռու, կա հայ կուսանոց մը, ուր խաղաղության ժամանակ կապրին 40 կույսեր կամ այրիներ այս կուսաստանի եկամտով: Ամենքը կապրին ըստ հին սովորությանց՝ առանց պարտավորիչ կանոն կամ իրական ուխտ ունենալու բայց ամենայն ջերմեռանդությամբ և համեստությամբ»<sup>38</sup>:

Հաճկատարում այժմ էլ պահպանվում են ուխտափորների նվիրած Ժ-Ժ դր. որոշ սրբապատկերներ, որոնց արձանագրություններում վաճքը հիշվում է նաև Խաչկատար ձևով: Ուստի կարելի է ենթադրել, որ վաճքն անգամ Ժ դարում հայտնի է եղել նաև Խաչկատար անվամբ:

36 Գօղանձեան Ս., նշվ. աշխ., էջ 184:

37 Նշվ. աշխ., էջ 203:

38 Schmidt W., Suczawa's Historische Denkwürdigkeiten, Czernowitz, 1876, p. 192-193.



Ար. Միմեռն Եկեղեցին և զամգակատունը հարավ-արևմուտքից



Հաճկատարի վաճքը հյուսիս-արևմուտքից և Ար. Աստվածածին Եկեղեցին հարավ-արևելքից

Եկեղեցու գավթին ավելի ուշ է կառուցվել: Գավթից Եկեղեցու հին դրանով ներս մտնելով՝ թվում է, թե վիմափոր մի այր ես մտնում:

Ըստ հայկական Եկեղեցական ընդունված կանոնի՝ խորանի խաչկալի աջ և ձախ դրաներին Հայոց աշխարիի առաջին երկու լուսավորիչների՝ Ար. Թարդությունու և Ար. Բարդությունու առաքյալների պատկերներն են:

Խաչկալի կենտրոնում՝ երկու զիսավոր հիմնայսուներն իրար կապող կամարի առկա որմնանկարում, Տրդատ քազավորի մկրտության տեսարանն է: Այս կաթողիկ, ուղղափառ և հայկական ավանդությունների միախառնման արդյունք է, ուր պատկերված է հայոց Տրդատ արքան՝ միջնադարյան աս-



ԺԹ դարի սրբապատկեր Հաճկատարի վաճռում և միամնաւի հերի մեկի տապանաքարը

պետների ու խաչակիրների հանդերձամբով։ Նրա սաղավարտը պահել են ին հոռոմեացի լեզեններին հիշեցնող գինվորները։ Թագավորը պատկերված է արքայական ընտանիքի և հայոց ավագանու հետ միասին, իսկ քիչ հեռվում արքայական նժոյգներն են։

Կամարի աջ և ձախ կողմերում Զքիստոսի պատկերն է՝ փշե պսակով։ Այն թեև ուղղափառ աշխարհի եկեղեցական պատկերների մասն է, սակայն այս համատեքստում ստուգաբանվում է նաև ազգային շրջանակում կազմելով թեմատիկ մի երրորդություն Սր. Թաղենոս, Սր. Բարդուղիմենոս առաքյալների և Տրդատի մկրտության պատկերների հետ և ներկայացնում է հայոց աշխարհի լուսավորիչներին, Արքար թագավորի հավատքը և Տրդատի դարձը, այսինքն՝ Հայաստանում քրիստոնեության առաքելական քարոզությունից մինչև պետականությունը<sup>39</sup>։

Պետք է նշել նաև, որ ոչ միայն Հաճկատարը, այլև նշնիանրապես Սուչավայի հոգևոր մյուս կենտրոններն ունեն սրբապատկերների և եկեղեցական իրերի բավականին հարուստ հավաքածու, որոնց մեծ մասը կրում է պատմական արժեք ունեցող նվիրաւության արձանագրություններ։ Այս մասին Լ. Բարայանը գրում է. «Վանքն ունի բաւական հարրստություններ, որ նույիրել են նրան զանազան ժամանակներում ուխտաւոր հիւանդները»<sup>40</sup>։

Հաճկատարի նշանավոր իրերից է 1844 թ. Տարւում պատրաստված զանգը, որն այժմ մի տաղավարի ներքո կախված է վաճքի բակում<sup>41</sup>։ Հայտնի չէ, թե այս զանգն ինչպես է հայտնվել Հաճկատա-

39 Թարքերյան Հ., Սուչավայի հայկական իրաշքը, էջ 129-130:  
40 Քարայեան Լ., նշվ. աշխ., էջ 177:

41 Նշված տաղավարն իրականում նախապես եղել է շրիրի (արյուր) ծածկ, որի փառ էլ ավելի ուշ տեղադրվել է զանգը։ Դա է վկայում շրիրի շինարարական արձանագրությունը (Ռ. Ք.), որը հրատարակել է Թ. Թոդրամանյանը. «Յշտկ. է այս չէ/չնէ Գրիհանց կալիերապատի ֆրայ եկը պարօնութեանը և պարօնութեանը / պարօնութի Մայրեամին Ֆօն Միլրշի / 1793» (Տօրամանյան Ա., նշվ. հոդվ., էջ 211):

Հաճկատարի վաճքի հարավային դարպասը և Սր. Աստվածածին եկեղեցին հարավից

րում։ Ըստ Հ. Գալիխազյանի՝ Սր. Սիմեոն եկեղեցու շրջափակում «Գերեզման մը փորելու պահուն գտնուեր է զանգակ մը հետևեալ արձանագրութեամք»<sup>42</sup>.

Յիշատակ է կեղդարացի Սուարէլի որդի Սիմեոնի Սուրբ Դադեկու վաճաց. Թուականի Ո-ՄՂԳ՝ 1844 թ. մարտ ամսոյ 5-իմ<sup>43</sup>:

Ինչպես նախապես գրել ենք, Սր. Սիմեոն եկեղեցին հայտնի էր նշանավոր զանգակատնով, որն անվանվում էր Կարմիր աշտարակ։ Դրա շորջն էր տարածվում նաև Սուչավայի հայկական գերեզմանոցը։ Ուստի կարենի է ենթադրել, որ այս զանգը՝ որպես Սյունիաց աշխարհից բերված նվիրական մի մասունք, նախատեսված է եղել Սր. Սիմեոն եկեղեցու զանգակատն համար, որն էլ անհայտ պատճառներով թաքցրել են հոդի տակ, իսկ հայտնաբերելուց հետո տեղափոխել Հաճկատարի վաճքը։

Այսինուն՝ Հաճկատարը հրաշագրով է համարվել և ներկայումս էլ հայտնի է այդ հատկանիշով ոչ միայն հայերի, այլև ուսմինացիների և նշնիանրապես տեղաբնակ այլազգի քրիստոնյաների համար<sup>44</sup>։

## 2. ՅԱՇ

Հաջորդ բնակավայրը, որտեղ հայերը դարձյալ շինարարական իրենց հետքն են բռնել, Յաշ քաղաքն է։ Հոգևոր առաջին շինությունը 1395 թ. կառուցված Սր. Աստվածածին եկեղեցին է, որի որմե-

42 Գալիխազյան Հ., նշվ. աշխ., էջ 56։ Հարկ է նշել, որ Վերջինիս ընթերցմանը տարեթիվն է՝ «Ո-ՄՂԳ» (1244):

43 Հ. Թարվենյանը նախսրտ («Սուչավայի հայկական իրաշքը», էջ 130) և այս հոդվածում զանգը վերագրում է 1244 թ.: Սակայն արձանագրության մեջ նշում է հայոց Ո-ՄՂԳ քվականը, որը համապատասխանում է 1844-ին։ Քանի որ արձանագրությունը չենք տեսել, ապա հստակ չենք կարող ասել, թե տարեթիվը որն է ճիշտ (Խմբագրակազմ)։

44 Թարվենյան Հ., Սուչավայի հայկական իրաշքը, էջ 130։ Ի դեմ, պետք է նշել, որ Հաճկատարի մասին նմանատիպ մի հոդված է տպագրել Տարե վրդ. Հակոբյանը (Սուչավայի Ս. Հաճկատարի վաճքը, «Բանքեր Մատենադարանի», 2014, № 20, էջ 95-108):



Յանկատարի վաճքի 1844 թ. գամգը և ջրհորի՝ 1793 թ. շինարարական արձանագրությունը



Յաշ քաղաքի Սր. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևմուտքից

րին առկա են այդ մասին վկայող մի քանի արձանագրություններ.

ա Ողորմութեամբ Աստուծոյ հիմնարկեցաւ տաճար Սր. Աստուծածնայ ջամփր տէր Յակորին մ(ա)հ(տես)ի. Սարքարին և Գր... 1395<sup>45</sup>:

թ 1395. շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ հիմնարկեցաւ Եաշու Սուրբ Աստուծածնայ եկեղեցին ձեռամբ եկեղեցպան Խաչզօխմ և սիսեանցի տէր Յակորին, ջուղայեցի մահտեսի Մարգարին և մահտեսի Գրիգորին, թ. հայոց ՊՃԽՆԴ (1395) եւ այժմ վերանորոգեցաւ ի ձեռն բարեպաշտու իշխանաց և համայն ժողովրդոց աշխատանօր և ծախսիք ի բուականին փրկչին 1803-ին<sup>46</sup>:

Հաջորդ իշխատակությունը 1451 թ.-ից է, երբ Եկեղեցուն է պալիրվում 1351 թ. Կաֆայում գրված Ավետարանը<sup>47</sup>:

Սր. Աստվածածինը իշխում է նաև 1551 թ. իշխան Ծուեֆան Ռատեշի՝ հայ եկեղեցու դպանանքի դեմ սկսած հալածանքների ժամանակ: Հայ միջնադարյան տաղասաց Մինաս Թոխատեցին «Ուր ի վերայ Օլախաց Երկրի հայերուն» աշխատության մեջ իշխում է ավերված եկեղեցիների շարքում. «Եկեղեցի զինչ կայր հայի, Խորին, Սերաք, Եաշպագարի, Վասլով, Պոտշան, Ռոռումանի, ամեներեան իիմըն քակի»<sup>48</sup>:

Ավելի ուշ կառույցը հավանաբար նորոգվել է, քանի որ միջնադարյան մեկ այլ տաղասացի՝ Հակոբ Թոխատեցու՝ 1595 թ. գրված «Ուր ի վերայ Օլախաց Երկրին» աշխատության մեջ նշվել է՝ քաղաքում գործող հայոց եկեղեցին պղծվել է<sup>49</sup>:

1803 թ. Եկեղեցին իիմնովին վերանորոգվել է:

Հայտնի է նաև, որ Ս. Բժշկյանի այցելության ժամանակ՝ ԺԹ դարի սկզբներին, Յաշ քաղաքում,

<sup>45</sup> Սիրում Հ., նշվ. աշխ., էջ 81:

<sup>46</sup> Նշվ. աշխ., էջ 82:

<sup>47</sup> Նոյն տեղում:

<sup>48</sup> Ակիմեամ Ն., նշվ. աշխ., էջ 95:

<sup>49</sup> Ակիմեամ Ն., Մատենագրական հետազոտություններ, հ. Դ. Վիեննա, 1938, էջ 15:

բացի Սր. Աստվածածնից, հայերն ունեին ևս մեկ Եկեղեցի՝ Սր. Լուսավորիչ (Զիզմըրին փողոցում), որը, ըստ նրա, «...շինեալ կամ նորոգեալ է 190 ամօք առաջ»<sup>50</sup>: մոտ 1640-ական թթ.:

Ըստ Պ. Մամիկոնյանի՝ Սր. Լուսավորիչ Եկեղեցու ճակատին առկա շինարարական արձանագրության մեջ կառուցման թվական է նշվում 1616-ը<sup>51</sup>:

Համաձայն ուժինական աղյուրների՝ Յաշի Սր. Սավա Եկեղեցին ևս հայկական էր: Ն. Սուցուն նշում է, որ իշխաններն այս խելք են հայերից և վերածել ուղղափառ Եկեղեցու: Դրա փոխարեն հայերին տրվել է հողատարածք՝ նորը կառուցելու նպատակով<sup>52</sup>:

Նոյնը կրկնում է նաև Ն. Ա. Բոգդանը Յաշին նվիրված իր մենագրության մեջ: Ըստ նրա՝ քաղաքի բնակիչները չեն հանդուրժում, որ հայերը կենտրոնական մասում Եկեղեցի ունենան, և այդ պատճառով էլ նրանցից խորս են այց<sup>53</sup>:

### 3. ԲՈՏՈՇԱՆ

Հաջորդ քաղաքը, որտեղ առկա է եղել հայկական մեծ համայնք, Բոտոշանն է: Սր. Աստվածածին Եկեղեցին կառուցվել է 1350 թ., սակայն այդ մասին ԺԴ դարի աղյուրները լրում են: Վատահարար կարող ենք ասել, որ Արիստակես կարողիկոսի (1457-1460 թթ.) լվովցիներին ուղղված կոնդակում իշխատակված Բոտոշանի Եկեղեցին նոյն Սր. Աստվածածինն է<sup>54</sup>:

<sup>50</sup> Բժշկյան Ս., նշվ. աշխ., էջ 207: Քաղաքում հայկական երկու եկեղեցու գոյուրյունը վկայվում է նաև ԺԷ դարի Երկորրդ կեսին (Iorga N., Studii și documente cu privire la istoria Românilor, București, 1901, v. I-II, p. 430): Ըստ այլ տեղեկության՝ Սր. Լուսավորիչ Եկեղեցին 1827 թ. այրվում է և վերականգնվում միայն 1860-ին (Տորաման Ա., К изучению строительной деятельности армян в Румынии; Роман, Фокшаны, Яссы и др., «ՊԲՀ», 1981, № 3, с. 216):

<sup>51</sup> Սանիլինեամ Պ., նշվ. աշխ., էջ 118:

<sup>52</sup> Soutzo N., Notions statistiques, p. 212.

<sup>53</sup> Bogdan N., Orașul Iași, Iași, 1904, p. 212.

<sup>54</sup> Ալիշան Ղ., Կամնանցից..., էջ 225:

Այս նույն աղոթատեղին 1551 թ. զոհ է դառնում Ծոեֆան Ռառեշի հայկայկական մոլեգմությանը և ավերվում<sup>55</sup>: Հստակ չենք կարող ասել, թե այն երբ է վերականգնվել, սակայն 1669 թ. Լուիջի Սարիա Պիդուն նշում է, որ Բոտոշան քաղաքում գործում է հայկական գեղեցիկ մի եկեղեցից՝ Սր. Աստվածածին անվանմբ<sup>56</sup>:

Ներկայումս եկեղեցում հին արձանագրություններ գրեթե չեն պահպանվել: Ամենահինը (Եթե չհաշվենք 1797 թ.-ի զանգը) 1826 թ. նորոգման արձանագրությունն է, որը գետեղվել է տաճարի հարավային դրան ճակատին:

*Ս. Աստվածածին տաճարու իր երեք հարիւր ամօր առաջ շինեալ էր ամենակարողութեամբն Աստուծոյ. այժմ նորոգեաւ քացի յորմոց զմբէրայարկ կարողիկէին և զանգակատամբ, արդեօր Պօրօշանու աղաչայ իշխանապետաց և իշխանաց և համայն ժողովրդոց: Քազմաջան վերակացութեամբ Կոյլաւեան աղաչայ Ստեփանին. 1826 յունիսի 22<sup>57</sup>.*

Մեկ այլ արձանագրություն էլ առկա է տաճարի ճախակողմյան դրան վրա.

Նորոգեաւ *Ս. Աստուծածին եկեղեցի բարեցան հոգարաքու Պօրուշանի հայոց ժողովրդեան աղայ մահտեսի Յովիաննէս եկեղեցպանի, աղայ Յովիաննէս Մակմեցի, աղայ Լուսիկ Կոյլաւեանի և աղայ Կարապետ Պոլֆոսի և յեկեղեցպանութեան յերկրորդաց, եկեղեցպանութեան աղայի Ստեփան Պոլֆոսեանի և աղայի Անտոն Պոլֆոսեանի: Քանդակնալ ճեռամբ Պըրլեանց աղայ Գէրոգեան պարոն Յարութիւնի. Ո.Ս.Զ.Ե (1836)<sup>58</sup>:*

Բոտոշանում 1795 թ. կառուցվել է հայկական ևս մեկ եկեղեցի՝ Սր. Երրորդություն անվամբ: Այն նախատեսված է եղել հայանքի ցածր խավի համար, որպեսզի Սր. Աստվածածին եկեղեցին վերապահվի բացառապես ազնվական դասին: Զախակողմյան դրան վերևում ազուցվել է շինարարական արձանագրությունը.

*Հիմնարկեցաւ խաչապսակ սուրբ եկեղեցիս ի քաղաքն Բօրուշան յանուն ամենասուրբ Երրորդութեան արդեամբ մահտեսի Օգսենտի որդոյ Անտոնին Խէուլեանց ի ժամանակս հայրապետութեան Ամենայն Հայոց տեառն Շուկասու սրբազն կարողիկոսին. աշխատանօր և վերակացութեամբ տէր Սելլոնին Դրէշու Պուծադէնց Ռունանցի և յիշատակ լինի եօրն նախնեացմ սուրբ եկեղեցիս. 1795 սեպտեմբերի 1<sup>59</sup>:*

#### 4. ՖՈԿՉԱՆ

Բոտոշանից հետո հայկական հետքերը մեզ քերում են Ֆոկչան: Քաղաքի հայկական առաջին ե-


55 Ալիմնամ Ն., Հիմն պանդուխտ տաղասացներ, էջ 95:

56 Iorga N., նշվ. աշխ., էջ 430:

57 Սիրունին Հ., նշվ. աշխ., էջ 75:

58 Նույն տեղում:

59 Նույն տեղում:



Բոտոշանի Սր. Աստվածածին եկեղեցին

կեղեցին Սր. Գևորգն է, որի կառուցման հատակ թվականը հայտնի չէ: Համաձայն տեղի ավանդության՝ այն հիմնվել է 1710-1715 թթ. Բուլղարիայից Ֆոկչան<sup>60</sup> տեղափոխված մահտեսի Գևորգի կողմից<sup>61</sup> ԺՇ դարի առաջին կեսին:

Սա է հաստատում նաև Մունտենիո Միխայիլ Ռաքովից իշխանի՝ 1743 թ. փետրվարի 16-ի հրովարտակը (Բուխարեստում հայ եկեղեցի կառուցելու արտոնություն է տալիս), որտեղ հիշվում է, որ հայերը Ֆոկչան քաղաքում արդեն ունեն եկեղեցի<sup>62</sup>:

Բացի Սր. Գևորգից՝ տեղի հայերը կառուցել են մեկ այլ եկեղեցի ևս՝ Սր. Աստվածածին անվամբ: Պահպանված միակ արձանագրության մնաց նշում է.

Տաճարս աստուծածին փառաց շինեցաւ արդեամբ աստուծասէր հաւատացեալ բարեապաշտ ժողովրդեան Ֆօրշանու լուսատրշեան հայոց յանուն վերափոխման Սրբոյ Աստուծածին, որոյ ուխտներ հաւատացեալս ջերմեռանդ սրտի երկրպագութեամբ հանդերձ միարան սիրով: Յամի Տեառն 1780: Յիշատակ է զայս մարմարիոնս աստուծասէր Ֆէրատեան մահտեսի Սրբահամի, 1850 թուից<sup>63</sup>:

1780 թվականը հավանաբար եկեղեցու վերաշինության տարին է, և այն պետք է կառուցված լիներ ավելի շուտ, քանի որ այս եկեղեցուն էր պատկանում ներկայումս Երևանի պատմության քանգարանում պահվող 1757 թ. մի վարագույր<sup>64</sup>, իսկ բակում է գտնվում 1778 թ. մի տապանաքար<sup>65</sup>:

Որպես հավելում նշենք, որ Ֆոկչանի հայոց գերեզմանատանն է գտնվում նաև Սր. Հարություն

60 Տօրամայ Ա., նշվ. հորդ, «ՊՈՂ», 1981, № 3, էջ 211-223:

61 Սամիլկոնտան Պ., նշվ. աշխ., էջ 153-155:

62 Սիրունին Հ., նշվ. աշխ., էջ 66:

63 Նշվ. աշխ., էջ 67:

64 Վարագույրի արձանագրությունն է. «Ի դրուն Ս. Աստուծածինն, թվին Ո.Ս.Զ. յիշատակ է վարագույրս Ապուրելի Աստուծի որդի մահտեսի Իլիաշի և որդույն և ծնողացն և կողակցու Ծաղիկին» (նույն տեղում):

65 Նույն տեղում:



Ֆոկշամի Սր. Աստվածածին Եկեղեցին և Սր. Դարություն մատուռը



Տրգո-Օկնայի Սր. Աստվածածին Եկեղեցին

մատուռը: Այն կառուցել են 1891 թ. Հարություն և Կարապետ Պոպովիչյան եղբայրները:

### 5. ՏՐԳՈ-ՕԿՆԱՅԻ ՍՐՋԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՈՒՐ

Հայերն իրենց եկեղեցաշինությամբ հետք են քուել նաև Տրգո-Օկնայում: Ցավոք, տեղի հայ համայնքի կազմավորման և առաջին եկեղեցու հիմնադրման մասին ստորև տվյալները չունենք:

Ս. Բժշկյանի շրջագայության ժամանակ՝ 1808 թ., Տրգո-Օկնայում բնակվում էր 60 հայ ընտանիք: Նրանք ունեին Սր. Աստվածածին անվանք փայտաշեն եկեղեցի<sup>66</sup>:

Ներկայիս եկեղեցին քարաշեն է և կառուցվել է 1825 թ., որի շինարարական արձանագրությունն է.

Կառուցաւ տաճարս փառացը ընեղին յանուն վերափոխման Սուրբ Աստվածածնին, արդեամբը և ծախիւր լուսաւորչական ժողովրդեան հայոց Հոգին. քաղաքին: Խոկ վեմս այս հաւագ դրան է յիշատակ Սարտիրոս Գրիգորեան յամի 1825<sup>67</sup>:

### 6. ԲԱՌՋՈՒ

Մեր ուսումնասիրության հաջորդ հանգրվանը թաքրու քաղաքն է: Այստեղ հայերը հաստատվել են դեռևս միջնադարում, սակայն եկեղեցի կառուցել են միայն ժմ՛ դարի կեսերին: Արտոնագիրը ստացվել է 1848 թ.: Այդ մասին է Միխայիլ Ստորօս իշխանի՝ 1848 թ. նոյեմբերի 29-ի հրովարտակը<sup>68</sup>: Հայտնի է, որ ավելի ուշ մեկ այլ հրովարտակով էլ արտոնվում է եկեղեցին կոչել Հրեշտակապետաց:

Ըստ շինարարական արձանագրությունների՝ եկեղեցու հիմնարկերը կատարվել են 1848 թ. և ամբողջացել 1850-ին.

ա Հիմնեցաւ սուրբ տաճարս ի կարողիկոսութեան Ամենայն Հայոց Էջմիածնի Տեառն Ներսէսի Սրբազն Հայրապետի, ի պատրիարքութեան

Կոստանդնուպոլսյ տեառն Մատքեռսի արքեպիսկոպոսի, ի քուին Հայոց Ո-ՄՂԼ<sup>69</sup>:

բ Կառուցաւ Պարովու սուրբ եկեղեցիս յանուն Սուրբ Հրեշտակապետաց Միքայելի և Գարեգինի, արդեամբ բազում քրիստոնեայ ազգաց բարեպաշտից, հոգատարութեամբ Մտեփան Մատքեռսի Շահնեան, Միքայել Բարս(ե)ղի Մարեան, Ցակոր Մերատեան և Դափիր Աստվածատրեան, որոց ամենեցուն տէր վարձս բարեաց բնկալցի: Ցամի տեառն 1850<sup>70</sup>:

### 7. Ո-ՌՈՍՍՆ

Սյուս քաղաքը Ո-Ռոսսն է, որի հիմնադրման գործուն հայերը մեծ ավանդ են ներդրել: Հայկական եկեղեցու կառուցման հստակ բվականը հայտնի չէ, սակայն այն ևս հիշվում է 1551 թ. Շտեֆան Ռատեշ իշխանի կողմից հիմնահատակ ավերված հոգևոր կառույցների շարքում<sup>71</sup>:

Ըստ ավանդության՝ նշված դեպքից հետո Ո-Ռոսսի հայերը փայտաշեն մի եկեղեցի են գնում ուղղափառ ուսուներից, խոկ ավելի ուշ՝ 1609 թ., կառուցուն քարաշեն եկեղեցին: Շինարարական արձանագրությունն ազգութան է եղել կառույցի արևմտյան պատին.

Ծնորիօր և ողորմութեամբ կամօքն Աստուծոյ և ընդուռիեամբ ամենակալին Աստուծոյ և փառածնեցելոյն ի մասն և այս անքարի ժամանակս ընտրեաց Աստուծ մարդասէր քարի անկիւն պր. Ակորշայ, զոր շինեաց զտաճարս այս յանուն Սուրբ Աստվածածին յիշատակի իր հոգուն և իր կնոջն և իր ծնողացն և պր. Վարդանին և Տօվլարին և իր որդունց՝ պր. Վարդանին և Սագո..., Իղային և պր. Տօմիկին և իր դատերացն՝ Մելուշին և Տօվլարին, ի քվին Ո-ԾԸ (1609) սեկտեմբերը: Տեր Խաչատուր<sup>72</sup>:

66 Քժշկեան Մ., նշվ. աշխ., էջ 209:

67 Սիրումին Հ., նշվ. աշխ., էջ 67:

68 Նշվ. աշխ., էջ 68-69:

69 Նշվ. աշխ., էջ 69:

70 Նոյեն տեղում:

71 Ակիմնեան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 95:

72 Սիրումին Հ., նշվ. աշխ., էջ 69:

Հարկ է նշել նաև, որ հայոց Սք. Աստվածածին եկեղեցու ներկայիս շենքը կառուցվել է 1864 թ.:

### 8. ԳԱԼԱՑ

Ուումինիայում հին հայկական համայնք ունեցող հաջորդ քաղաքը Գալացն է, որի եկեղեցու մասին առաջին տեղեկությունը հաղորդում է կարողիկ միսիոներ Լուիջի Մարիա Պիուն 1669 թ. առանց որևէ մանրամասնություն տալու: Նա միայն նշում է, որ դա այն եկեղեցիներից էր, որտեղ հովում էր տեր Սահակ Եպիսկոպոս<sup>73</sup>: Դրանից հետո Գալացի եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է:

Ավանդության համաձայն՝ եկեղեցին նախապես եղել է վաճառուն և ունեցել վաճականների համար նախատեսված քազմաքիվ խցեր, որոնք գտնվում էին ներկայիս եկեղեցու տեղում: Վաճառունը բերդի նման շրջապատված է եղել պարապով և ունեցել գետնափոր մի քանի հատվածներ, որոնք էլ քաժանված են եղել որոշ մասերի: Վերջիններիս ավերակները մինչև ԺԹ դարի սկիզբը դեռևս պահպանվում էին, որից հետո հրո ճարակ են դառնուժ<sup>74</sup>: Մ. Բժշկյանը 1808 թ. նշում է, որ Գալաց քաղաքում բնակվում էր 30 հայ ընտանիք, որոնք «ունին եկեղեցի հանուն Ս. Աստվածածնին»<sup>75</sup>:

Վերոնշյալ կրթեկից հետո՝ 1821 թ., եկեղեցին վերակառուցվում է (թեև փայտաշեն) և վերաօծվում նույն՝ Սք. Աստվածածին անվամբ: Վերջինս, սակայն, երկար չի գոյատևում, և 1858 թ. կառուցվում է ներկայիս Սք. Աստվածածին քարաշեն եկեղեցին:

### 9. ԱՋՔԵՐՄԱՆ

Մեր ուսումնասիրության հաջորդ վայրն Աքքերման քաղաքն է, որը ներկայում գտնվում է Ուկրաինայի Համբակենության տարածքում, սակայն ժամանակին պատկանում էր Մոլորվայի հայոց քեմին: Քաղաքում հայ համայնքը կազմավորվել է դեռևս ԺԴ դարում: Դա է վկայում Ալեսոն Ալիշանը՝ 1364, 1410 և 1457 թթ. կոնդակներում հիշատակված Մանքրման քաղաքը նույնացնելով Աքքերմանի հետ<sup>76</sup>:

Վերոնշյալ մասին կարևոր տեղեկություն է հաղորդում ճանապարհորդ Ջիլբերտ դը Լաննոյը Աշելլով, որ 1421 թ. քաղաքում որոշակի թիվ էին կազմում հայերը<sup>77</sup>, իսկ Նիկոլայ Յորգան ենթադրաբար հայտնում է, որ երր բուրքերը 1484 թ. նվաճում են Աքքերման քաղաքը, հայերն այստեղ ավելի մեծ թիվ էին կազմում, քան Սուչավայում, Սիրետում, Հոստինում, Չաշում, Ռումանիում և Վասլունում<sup>78</sup>:

<sup>73</sup> Iorga N., նշվ. աշխ., էջ 430:

<sup>74</sup> Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 71:

<sup>75</sup> Բժշկյան Մ., նշվ. աշխ., էջ 209:

<sup>76</sup> Ալիշան Դ., Կամենից..., էջ 4, 217, 221, 225: Ըստ որոշ հեղինակների՝ համապատասխանում է Կիև քաղաքին:

<sup>77</sup> Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 78:

<sup>78</sup> Iorga N., Armenii și România: O paralelă istorică, 1913, București, tî, p. 64.



Ոռմանի Սք. Աստվածածին եկեղեցին

ԺԵ դարում Աքքերմանը Եպիսկոպոսանիստ էր: 1460 թ. տեր Նիկոլոս Եպիսկոպոսն ընդօրինակել է իր նշանափոր Շաշողը, որի հիշատակարանում նշված են նաև Հակոբ և Ստեփանոս վարդապետների և Հակոբ քահանայի անունները<sup>79</sup>:

Ինչ վերաբերում է քաղաքի հայկական եկեղեցու կառուցման թվականին, ապա որևէ հստակ տեղեկություն չունենք, սակայն կարծում ենք, որ Աքքերմանը եղել է այն բնակավայրերից, որտեղ հայերը եկեղեցի են ունեցել դեռևս ԺԴ դարում:

Հայկական եկեղեցու գոյությունը, սակայն, առաջին անգամ փաստում է կարողիկ միսիոներ Լուիջի Մարիա Պիուն 1669 թ., որը, ըստ նրա, ենթակա էր Վալաքիայի տեր Սահակ Եպիսկոպոսին<sup>80</sup>:

ԺԹ դարասկզբի այցելու Մ. Բժշկյանը եկեղեցու մասին գրում է. «150 տունը, որք ունին հին եկեղեցի քարաշեն, բայց կիսով չափ քաղեալ ի գետնի, որ և յիշատակին երեք տաճարը ի յիշատակարանին»<sup>81</sup>: Վերջիններս ոչ թե առանձին տաճարներ էին, այլ հավանաբար եկեղեցու երեք խորաններն էին<sup>82</sup>:

### 10. ԿՈՍՏԱՆՅԱՑ

Մեր ուսումնասիրության հաջորդ հանգրվանը ծովափնյա Կոստանցա քաղաքն է, որտեղ հայերն առաջին աղոքատեղին կառուցել են ԺԸ դարի կեսերին: Ունեցել են նաև մատուռ, որը կանգուն է եղել մինչև 1760 թ.<sup>83</sup>:

Հայտնի է, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, որպես այցելու հովիվ, 1878 թ. Կոստանցա է ուղարկում Գեորգ վարդապետ Ուրուցյանին, որտեղ բնակվում էր ընդամենը 35 հայ ընտանիք: Ալգրնական շրջանում եկեղեցական արարողությունները կատարվում էին փոքր սենյակում, որից հետո եկեղեցու և դպրոցի համար ծովեզերքի մոտ գնվում է մի

<sup>79</sup> Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 79:

<sup>80</sup> Iorga N., նշվ. աշխ., էջ 430:

<sup>81</sup> Բժշկյան Մ., նշվ. աշխ., էջ 217:

<sup>82</sup> Avakian Gr., Inscriptiile armenești din Cetatea Alba, București, 1923, p. 193.

<sup>83</sup> Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 127:

հողակտոր, իսկ 1879 թ. իմք է դրվում դպրոցի և եկեղեցու շինարարությանը, որն ավարտվում է 1880 թ.: Սր. Աստվածածին անվանված այս եկեղեցին իր ճարակ է դառնում 1940 թ.: Դրանից հետո եկեղեցական բոլոր արարությունները կատարվում են դպրոցում<sup>84</sup>:

## 11. ԲԱԲԱԴԱՂ

Ուումինիայի Բարադաղի հայ համայնքը համարվում է ամենահներից մեկը: Շատ դժվար է ասել, թե երբ են հայերն այստեղ եկեղեցի կառուցել, սակայն վստահարար կարող ենք նշել, որ ԺԷ դարի սկզբին այն արդին գործում էր:

ԺԶ դարում ստեղծված մի Տաղարանի հետագա հիշատակարաններից մեկը գրվել է Բարադաղում. «Զայս կիրըս գիրեցի Պապայտաղի որ ուռուսըն լեհ ավերեց, թվ. Ո-ՂԸ (1649 թ.)»<sup>85</sup>:

Մինաս Բժշկյանի տեղեկությունների համաձայն՝ Գրիգորուապոլսի Սր. Կատարինե եկեղեցում պահպում էր 1675 թ. Կ. Պոլսում գրված ձեռագիր մի Հայումապուրք, որը, ըստ հիշատակարանի, ի սկզբանե նվիրվել է Բարադաղի Վարագա Սր. Խաչ եկեղեցուն<sup>86</sup>: Նրա այցելության ժամանակ՝ 1808 թ., քաղաքում բնակվում էր 40 տուն հայ, որոնք ունեին քարաշեն եկեղեցի՝ Վարագա Սր. Խաչ անվանը<sup>87</sup>:

Հայունի է, որ շինությունն այրվել է 1823 թ., իսկ 1829 թ. վերակառուցվել Սուլթան Մահմուդի հրովարտակով: Ավելի ուշ՝ 1891 թ., եկեղեցին նորից է այրվել և վերականգնվել 1896 թ.:

## 12. ՏՈՒԼՋԱՅ, ՍՈՒԼԻՆԻԱ, ԲԱԶԱՐՁՔ

Ուումինիայում կան բազմաթիվ քաղաքներ ևս, որոնք հայաբնակ են դարձել ԺԹ դարում: Դրանցից են Տուլջայը, Սուլինիան և Բազարձքը:

Տուլջայի համայնքը կազմավորվել է ԺԹ դ. սկզբին Բարադաղից եկած հայ ընտանիքների կողմից: 1835 թ. տեղի հայերը կառուցում են Սր. Գրիգոր Լուսավորչի անվանք փոքր մի մասուն, իսկ 1882 թ. խարիսխած մասունի տեղում՝ նոր եկեղեցի, որն ավարտվում է 1885 թ.:

Սուլինիայի հայ համայնքը հիմնվել է ԺԹ դարի կետերին, երբ Դանուր գետի նավահանգստում աշխատելու նպատակով այստեղ է հաստատվում քենակիր հայերի մի մեծ քաղմություն: 1887 թ. կառուցվում է եկեղեցի:

Բազարձքի հայերն առաջին աղոթատեղին սկսել են կառուցել 1827 թ. և ավարտել 1830 թ.: Եկեղեցու օծումը կատարվել է տեր Մարտիրոս Վարդապետի ձեռամբ և անվանվել Սր. Հովհաննես: 1854 թ. շինությունն այրվում է, ապա վերանորոգվում 1858

<sup>84</sup> Նշվ. աշխ., էջ 128:

<sup>85</sup> Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, կազմ. Տաշեան Յ., Վիեննա, 1895, էջ 970:

<sup>86</sup> Բժշկյան Սր., նշվ. աշխ., էջ 212:

<sup>87</sup> Նշվ. աշխ., էջ 209:

թ.: 1876 թ. վերստին այրվում է, իսկ 1886 թ.՝ դարձյալ նորոգվում:

13. Քաղաքներ, որոնց եկեղեցիները չեն պահպանվել

Վերջում հարկ ենք համարում անդրադառնալ նաև Ռումինիայի այն քաղաքներին, որտեղ ժամանակին հայերն ունեցել են եկեղեցիներ, որոնք, սակայն, մեզ չեն հասել:

Դրանցից առաջինը Վասլույ քաղաքն է, որտեղ հայերը հաստատվել են դեռևս ԺԵ դարում: Հայտնի է, որ ԺԶ դարասկզբին գոյություն ունեցող եկեղեցին ավերվել է 1551 թ. Շտեֆան Ռատեշի կողմից<sup>88</sup>: Այն ավելի ուշ վերականգնվում է, քանի որ Միմեն Լեհացին իր ուղեղորդության մեջ նշում է՝ 1608 թ. «Կար անդ եկեղեցի մի փայտէ, քահանայ մի և քան տուն հայի»<sup>89</sup>:

Հաջորդը Միմեն քաղաքն է, որտեղ հայերն առաջին անգամ հիշվում են 1371 թ., երբ Ուրբանոս պապը փորձում էր եպիսկոպոս նշանակել<sup>90</sup>, իսկ հայկական կայացած համայնքի մասին հիշատակությունները ԺԵ դարից են<sup>91</sup>: 1551 թ. եկեղեցին նույնպես հիմնահատակ ավերվում է Շտեֆան Ռատեշի հրահանգով<sup>92</sup>: Ավելի ուշ այն վերականգնվում է, քանի 1647 թ. տեր Անտոն Եպիսկոպոս Սերեգոյնեցու եկեղեցու համար քահանա է ձեռնադրել 1655 թ.<sup>93</sup>: 1669 թ. կարողի միսիոններ Լուիջի Մարիա Պիդուն 1669 թ. վկայում է քաղաքում հայկական եկեղեցու գոյությունը, իսկ 1808 թ. Ս. Բժշկյանն էլ տեղում փաստում է, որ այն այլևս գոյություն չունի<sup>94</sup>:

Հոտին քաղաքում ևս եղել է հայկական եկեղեցի, որը, ըստ ուումինացի պատմաբանների, գոյություն է ունեցել դեռևս 1480 թ.: Ավերվել է 1551 թ. Շտեֆան Ռատեշ իշխանի հրամանով<sup>95</sup>, սակայն ավելի ուշ վերակառուցվել է: Դա է վկայում այն, որ տեր Անտոն Եպիսկոպոս Սերեգոյնեցն այս եկեղեցու համար ևս քահանա է ձեռնադրել 1655 թ.<sup>96</sup>: 1669 թ. կարողի միսիոններ Լուիջի Մարիա Պիդուն ևս հաստատում է հայոց եկեղեցու գոյությունը: Ս. Բժշկյանն վկայությամբ 1808 թ. այն դեռևս կանգում էր. «20 տունք, որք ունին եկեղեցի յանուն Սուրբ Աստվածածնին»<sup>97</sup>:

<sup>88</sup> Ալիմեան Ն., Հինգ պանդիխտ տաղասացներ, էջ 95:

<sup>89</sup> Միմեն քայլ Լեհացյալ Ռումենորդին, տարեգործին և յիշատակարան, Վիեննա, 1936, էջ 5:

<sup>90</sup> Hurmuzaki E., Documente privitoare la istoria românilor, v. XI, էջ 115.

<sup>91</sup> Ալիշան Ղ., Կամենից..., էջ 9, 221, 225:

<sup>92</sup> Ալիմեան Ն., Հինգ պանդիխտ տաղասացներ, էջ 95:

<sup>93</sup> Տաշեան Յ., նշվ. աշխ., էջ 775:

<sup>94</sup> Iorga N., նշվ. աշխ., էջ 430:

<sup>95</sup> Ալիմեան Ն., Հինգ պանդիխտ տաղասացներ, էջ 95:

<sup>96</sup> Տաշեան Յ., նշվ. աշխ., էջ 776:

<sup>97</sup> Բժշկյան Սր., նշվ. աշխ., էջ 188:

Նշյալ թվականին հայերը եկեղեցի ունեին նաև Թեկուչիում. «Յառաջազոյն հայք բազում էին աստ, այժմ գտանին 200 անձինք և ունին եկեղեցի»<sup>98</sup>:

Հայկական եկեղեցի է եղել նաև Հերցայում: Տեղի ուղղափառ Սր. Գևորգ եկեղեցում պահպանվում է մի արձանագրություն, ըստ որի՝ հայերն աղոթատեղին լքել են 1812-1814 թթ., իսկ նրա տեղում ուղղափառներն իրենցն են կառուցել:

14. Հայկական ճարտարապետության ազդեցությունը ուսմինական հոգևոր կառույցների վրա

Հայերի եկեղեցաշինարարական ճարտարապետական հանճարն իր հետքն է բողել նաև ուսմինական պատմական հուշարձանների վրա: Ճարտարապետական առանձնահատկություններով և հատկապես քանդակների այդքան հարստությամբ, օրինակ, Կուրտեա դե Արծեշ և Դեալու վաճրերն արտաքինից ակնառու նմանություններ ունեն Հայաստանի ճարտարապետական զարդարվեստի հետ: Անշուշտ, շատ դժվար է գուշակել, քեզ եր է հայկական արվեստը ներքափանցել Ռումինիա, բայց կարող ենք ասել, որ սկսած ԺԵ դարից՝ Մոլովայի և Վալաքիայի եկեղեցիների զարդարվեստի որոշ տարրերի ծագումը պետք է փնտրել Հայաստանում: 1512-1517 թթ. կառույցած ուսմինական ուղղափառ եկեղեցու ամենանշանավոր կառույցներից մեկը՝ Կուրտեա դե Արծեշը, իր ոճով, հարուստ զարդարանդակներով և գեղեցկությամբ յուրօհնակ է ամբողջ Արևելյան Եվրոպայում: Ռումին նշանավոր պատմարան Բ. Համբետոն, իիմք ընդունելով վաճրի արտաքին տեսքը, եզրակացնում է, որ այն հայկական ծագում ունի, և պնդում, որ դրա շինարարները Վան քաղաքից են եղել:

Թ. Թորամանյանի հավաստմամբ եկեղեցական ճարտարապետության մեջ ուրույն տեղ գրավող Կուրտեա դե Արծեշը շատ տպավորիչ է հատկապես իր քանդակներով<sup>99</sup>:



Կուրտեա դե Արծեշ վանքը

Պարաճահյուս գոտիները բաղկացած են բազմազան նրբագեղ զարդարվերից՝ վարդյակներից, եռատերև, աղեղնաձև, հյուսկեն, երկրաչափական և բուսական զարդերից և բարձրաքանդակներից: Այս ամենի հետ մեկտեղ պետք է ընդգծել, որ ամեն զարդարանդակ բավական համաչափ է:

Բացառիկ զարգացում է ասպել քարի քանդակագործությունը գոտիների, դրների, պատուհանների, ինչպես նաև սանդուղքների բազրիքների, սյուների վրա, որոնք մասնավոր վարպետությամբ զարդարված և զարմանալի բազմազանությամբ մուտք են գործել ուսմինական ճարտարապետության մեջ:

Մեր կարծիքով հայկական ճարտարապետության և արվեստի տարրերը հայ վարպետների միջոցով են մուտք գործել ուսմինական արվեստի ճյուղերի մեջ: Ռումինական մշակույթն ազդեցություն է կրել հայկական արվեստից ԺԵ-ԺԵ դարերում հատկապես առևտրականների միջոցով, քանի որ Մոլովան առևտրական մեծ կապեր է ունեցել Ղրիմի և մասնավորապես տեղի հայերի հետ, ովքեր մեծաքանակ ապրանք էին ներմուծում Մոլովական երկրամաս և դրան գուգահեռ՝ իրենց հետ քերում նաև հայկական մշակույթը:

98 Քժշկեան Մ., նշվ. աշխ., էջ 208:

99 Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, մաս Ա, Երևան, 1942, էջ 76-77:

## ՎԻՍՎԱՐԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Սամվել Կարապետյան

### ՄԻ ՆՈՐ ԷՇ ԼՈՌՎԱ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Ախրալայից ոչ հեռու՝ Նեղոց և Բենդիկ գյուղերի միջակայքում՝ Ափրոյի գոմեր կոչվող գյուղատեղիի տարածքում՝ մի բլրի գագաթին, պահպանվել է միջնադարյան գերեզմանոց՝ մեկ ամբողջական և մի քանի կոտրատված խաչքարերով։ Երկատված մեկ այլ խաչքար էլ գտնվում է նոյն բլրի ստորոտում՝ հին կածանի եղրին։ Այն ի սկզբանե ակնհայտորեն նույնական է գագաթին, սակայն հետագայում գլորվել է ցած։ Այս խաչքարը թե՛ իր դիմային մասում և թե՛ թիկունքին ունի բավականաշահ հետաքրքիր արձանագրություն, որը և ներկայացնում էմ ստորև։

Ա(սոտուա)ծածինս թժշկէ տկարաց, պահ/ապան անլայ[թ]անաց եւ բարեխսաւ / մեղաւորաց։ / S(t)ր ա(սոտուա)ծ / ողորմեայ / Դամէլի։ // Ի թվի(ն) ԶԲՀ (1273), կամաւն ա(սոտուծոյ) / եւ ողորմութ(եամ)ր Ս(որ)ր Նշանին Հ/աղբատա, եւ՝ Դամէլ, եւ Տիրա-



Ափրոյի գոմեր գյուղատեղիի գերեզմանոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)

նու/ն կ(ա)նգմեցաք զիսաչս եւ զմատ/ուս եւ զմեցաք զէզիս Խ (40) դահ/էկան Քածնի որդեցն, հերենիր (ի)մ տ/անս ս(որ)ր էկեղեցոյս, [ով որ] հ/անել ջանա ի մեծաց կամ ի փորունց՝ ՅԺԸ (318)-իցն նզոված է, Ուղար(յ)ի եւ Կա(յ)ենի մեղացն տէր է, / ամէն։



1273 թ. խաչքարը և գրչանկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2018 թ.)



### ՄԻ ՓՇՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

2011 թ. օգոստոսի 11-ն է։ Խիզանի ձորերում անցնող ճամփորդության հերթական օրը եղբափակում ենք շրջապատի նկատմամբ բարձր ու մեկուսի դիրքում գտնվող Վերին Պախուր (այժմ՝ Արջալը) գյուղում։ Ընդամենը 8 քուրդ ընտանիքից բաղկացած մի փոքր գյուղ էր, որը բուրքական բանակի կողմից 1991 թ. հրդեհվելու պատճառով նոր-նոր վերստին բնակելի էր դարձել։ Մեր նկատմամբ գյու-

դացիները բարյացակամ են և մատնացույց են անում կցակառույցների մեջ բաքնված դեռևս գոյրթում ունեցող Սր. Գևորգ եկեղեցին և իրենց դպրոցը, որը կառուցվել էր հայոց գերեզմանոցի տարածքում։ Ցոյց են տալիս նաև գյուղական այս ու այն շինության որմում որպես շինանյութ գործածված խաչքարեր, բեկորներ։ Վերջապես կանգ ենք առնում եկեղեցու անկյունաքարերից մեկին նշարվող արձանագրության մոտ։ Փորձում ենք ընթերցել։ Քրոյերը հետաքրքրությամբ խոնվել են



Վերին Պախուր գյուղի Եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)




Վերին Պախուր գյուղը և նրան հարակից Ծովակ տեղամասի համայնապատկերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)

մեր շորջը և շատ են ուզում իմանալ, թե ի՞նչ է զբած: Կարդում ենք՝ «Յիշեցէք զՕվանէսի Քս., որ Ծովակ զնեց, ոխվ արար Երուսաղմ., դռ...շ... կարա եղիր վրա» և թարգմանաբար փոխանցում, որ Հովհաննես անունով մեկը զնել է Ծովակ տեղամասը և նվիրել Երուսաղեմի հայոց վաճքին: Քրդերն իրար երես են նայում և անմիջապես ցույց են տալիս



Վերին Պախուր գյուղի Ծովակ տեղամասը Երուսաղեմին նվիրած Նովիամմեսի հիշատակագիրը և գրչամկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2011, 2018 թթ.)

գյուղամերձ կանաչապատ տարածքը՝ ասելով, որ Չովակը (ոե իրենք Ծ արտասանել չեն կարողանում) ահա այդ մասն է... Երջանիկ, որ կորուսյալ Հայրենիքի հայանուն մեկ մանրատեղանուն էլ մոռացության ծովից ափ հանեցինք, շնորհակալությամբ իրամեշտ ենք տալիս գյուղացիներին և հեռանում...»



## ՏՈՂՄԱԽԱՉԵՐ

Քանդակված յուրաքանչյուր խաչ, անկախ նրանից, կից հիշատակագիր ունի, թե ոչ, և միայն մեկ անձի հիշատակին է քանդակվել, դա հանրահայտ է, բայց որ գոյություն ունեին գերդաստանային, տոհմային կամ պարզապես ընտանեկան



Վասպուրականի Շատախ գավառի Ծուղ գյուղի տոհմախաչերը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2006, 2009 թթ.)

պատկանելության խաչեր, որոնցում հորիզոնական յուրաքանչյուր մեկ թեր մեկ անձի համար էր, այդպիսիք մինչև հիմա հանդիպել ենք միայն Վասպուրականում: Ստորև ներկայացնում են այդօրինակ խաչաքանդակների մի փունջ Շատախ գավառի Ծուղ գյուղից:



**ՆԱԽՆԻՆԵՐԸ ԳՐԵԼ ԵՆ, ՈՐ ԸՆԹԵՐՅԵՆ Ք  
ՈՒ ՀԻՇԵՆՔ**

Ահավասիկ հեռավոր Սպարկերտ գավառի Խարխոց գյուղի Եկեղեցու՝ 1681 թ. շինարարական երբեկցեալ չընթերցված արձանագրությունը.

Ծին(ե)ց(ա)ւ / տ(ա)ճ(ա)րս ձ(ե)ռ(ա)մք պ(ա)րոն Խա/նմահմէղին, ի հայկազեան մնձ / քուակ(ա)նին քս(ա)ն եւ երկու յորելիանին եռ եւ տ(ա)սմեակ / յարեալ (1681) ի նմին եղեւ շինումն այս տաճարին Լուսաւ(ո)րիչ / եւ ս(ուր)ք Գերոց եւ Քրիստ(ա)վոր անուն կոչին, ձեռամք պ(ա)րոն ըրէս Սիրդին եւ կող(ա)կցոյն իր Խ(ա)ն(ա)ղին, եւ իր որդինցն ամենայնին՝ Յ(ո)վ(հա)ն(նէ)սին, Գ(ա)րբ(ին)ին, / Զ(ի)-



ր(ա)քին, Խ(ա)չ(ա)տ(ո)ւրին, Ն(ա)հ(ա)պ(ե)տին, Ս(ա)ս(ո)ւ(ո)ւղին, Ծ(ա)հ(ա)զ(ա)րին, Սիրզի ծնօղ(ա)ցն եւ եղբ(ա)րցն՝ Ամիրին, / Խնդ(ու)նին եւ տաճարներն ամ(ե)ն(ա)յին, ամէն եւ սիրելեաց մնէլը Ո-(ե)հ(ա)նին, եւ Վ(ա)րդին, / Գրիզ(ո)րին եւ ծն(ո)ղ(ա)ցն՝ Խ(ա)չ(ա)տ(ո)ւրին, Ս(ա)րզ(ա)ր(ի)տին, Բ(ու)դ(ա)ղին, Գ(ա)րբ(ին)ին, ..., Վ(ա)րդին, / տ(է)ր Գրիզ(ո)րին, տ(է)ր Ստեփի(ա)ն(ո)սին, տ(է)ր Աւ(ե)տ(ի)սին, տ(է)ր Սիր(ա)յ(է)լին, տ(է)ր Մ(ա)րտին, տ(է)ր Կ(ա)ր(ա)պ(ե)տին եւ / զինչ ի յայս Եկեղեցիս պ(ա)տ(ա)ր(ա)զ մ(ա)տչի Սիրզին եւ իր ծնօղ(ա)ցն, մ(ա)սն հանէ, ամէն: / ԶՎ(ա)րդ(ա)ն զժողս յ(ի)շ(եցէք) ի Ք(րիստո):



# ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՍԵԿ ԷԶ ԵՎՈ ԼՈՒԱՎՈՐՎԵՑ

2018 թվականի ապրիլի 7-ին Նախրա Հայրապետյանի առաջնորդությամբ մեզ բախտ վիճակվեց լինելու Սեղրու շրջանի հին ու լրյալ բնակչափայրերից մեկում՝ Թու գյուղատեղիում։ Զեզ եմ ներկայացնում զյուղատեղիի եկեղեցու՝ ցարդ անտեսնացած շինարարական արձանագրությունը, որն աչքի է ընկնում հարուստ տեղեկությամբ։

Ընթրօք եւ զօրու(թեամ)ք ամենակալին ա(ս-տուծոյ) եւ՝ | ամենանու(ա)սս ծառայ Ք(րիստոս)ի մահունիս Սարութաս, որ եւ ի գեղջէն Տաշունու,

շինեցի զս(ուր)ք եկ(ե)ղ(ե)ց(հ)ս ի հալալ արդեանց  
իմոց / յիշ(ա)տ(ա)կ հոգոյ իմոց եւ ծնօղաց իմոց եւ  
հոգեւոր որդոյն իմոց՝ խօճա Հ(այ)ր(ա)պ(ե)տ(ի)ն, /  
ի հ(ա)յր(ա)պ(եսով)լք(ան) Էջմիածնա զՆահա-  
պես կար(ն)դ(իկոս)ի, վկալու լք(ամբ՞) յեպի(ս)կ(պ-  
պո)սուրե(ան) Սինեաց նահանգիս մերոյ / տ(ե-  
առ)ն Յովիանեսի եւ տ(եառ)ն Զաքարիայի վ(ա)ր-  
դ(ա)պ(ե)տ(ա)ցն եւ զվերակացու սորին, որ շինե-  
ցաւ / զմելապարտ տաքեւացի տ(է)ր Սիմէնն եւ  
զԾատոն(ի)րն, որ է եղբայր՝ Արտում եւ Զաքոնն, /  
յիշեց(է)ք ի Ք(րիստո)ս ա(ստուա)ծ, ամէն: Գրեցաւ  
ի Ռ-ՃԽԱԲ (1693) թվական(ին), արարող սորա-  
տ(ա)շտ(ու)նցի զս(է)ր Սիքայէ:



Սեղոր շրջամի Թու գյուղատեղիի Եկեղեցու շինարարական արձանագրությունը (լուս. և գք.՝ Ա. Կարապետյանի, 2018 թ.)

**ՀԱՍԱԽԻ ԽՈԼՔԵՏԱՆԻ (ԽՈԼՔՏՈՒՆ)  
ԿԱՍՈՒՌՁՀ**

Թե ինչպես մեզ հաջողվեց պարզել կամրջի կառուցման ժամանակը.

Հայաստանի ազգային դիվանի վավերագրերից մեկում կա այսպիսի մի տեղեկություն. «Տղասպար գիւղի մելիք Մուրադը, որ շինել է եկեղեցին և խուրատան կամուրջին մասնակից է եղել, երբ եկեղեցին շինել աւարտել են՝ օծման ճաշին ննջեցեալների յիշատակին (այդ օրը օրինել է տուկ և իր խաչքարը)...»<sup>1</sup>:

Ուրեմն սրանից արդեն իմանում ենք, որ կամրջի շինարարությանը մասնակցել է նաև Տղասպար (Դե-



դասպար) գյուղի մելիք Մուրադը, սակայն ե՞րբ էր դա տեղի ունեցել, դեռևս մնում էր անհայտության մեջ:

Երբ 2006 թ. այցելեցինք Տղասպար գյուղ, տակնուվրա արված գերեզմանոցում տեղահան, բայց դեռևս պահպանված խաչքարերի թվում, մեծ հուրախություն մեզ, զտնվեց մելիք Մուրադի հիշատակին 1729 թ. կանգնեցված խաչքարը: Սրանով հասկանալի դարձավ, որ Խուրեստանի կամուրջը կառուցվել է մինչև 1729 թ. (ամենավաղը՝ գուցե 1690-ականներին):

*Մելիք Մուրադ, / յ(ի)շեցէք ք(րիստո)ւ: / Թով(ին) ՌՃՇՀ (1729):*




<sup>1</sup> ՀԱՊ, ֆ. 428, գ. 4, գ. 105, թ. 59-60: Հիշվում է նաև. «Տղասպարի մելիքը շինել է մի մեծ եկեղեցի գիւղի մեջ մի 150-200 տարի առաջ և Խուրեստան կամուրջը» (ՀԱՊ, ֆ. 428, գ. 4, գ. 113, թ. 14):

Ծառախ գավառի Սագ գյուղի մոտ գտնվող Խուրեստանի կամուրջը, Տղասպար գյուղի գերեզմանոցում գտնվող մելիք Մուրադի խաչքարը և գրչամկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2006 թ.)

**ՊԱՀՊԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱ-  
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԲԱՂԵԾԻ  
(ԲԻԹԼԻՍ) ՆԱՀԱՆԳԻ ՀԱՍՏԱՆՈՒՆ  
ԳԱՎԱՌՈՒՄ**

ա) Խնձորզին գյուղի Սք. Սահակ եկ., 1273 թ.  
Ի Զի՞ր (1273) շինարական մասին վարչությունը և պահպանը կատարությունը կատարությունը կատարությունը:



Խնձորզին գյուղի Սք. Սահակ եկեղեցին, շինարարական արձանագրությունը և գրչանկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2006 թ.)

բ) Ջրհոր գյուղի Սք. Աստվածածին (Սք. Գևորգ) եկեղեցի, 1440 թ.

Ի Պ հա(յ)ոց թ(ի)ի(ն) ԶԹ (1440) / անցեալ ամի տա-  
ճարս իրաշալի իրմնարկեցաւ մախ(?) յերկրի, / ի  
փառս անճառ եւ անճնի երրորդութեան) յամենայնի,  
սա բարէխսաս / կար յերկրի, փասն ազզի քրիստոնէ /  
ես առաել սրբանու Յոհաննէս քահանա(յ)ի եւ զաւա-  
լին եւ եղբա(յ)րիս՝ Սլրտիչ քա(հ)ամա(յ)ի՝ շինողի  
ս(որ)ք տաճարի եւ ծնողացն ամենա ... յայսմ ամի ս/...  
արոռ դնի կաթող/... տ(է)ք Կիրակոս քահա/[ն]ա... ճ...  
քա... Մարտիրոսի եւ ...ա... [Ար]դումն[ի] / յ(ա)մենն[ա-  
զար] ...ստ ...զե... / այս ...ը թվ(ին) ....:



գ) Բարշեն գյուղի Սք. Ստեփանոս եկ., 1566 թ.

Կաման ա(ստոծոյ) վերստին նոր(ն)գ(ե)ցաւ տա-  
ճ(ա)րս / այս ծեռամբ Եղիայ վ(ա)րդ(ա)պ(ե)տիմ / յի-  
շատակ հոգոյ իմ(ն)յ եւ / ամենայն ժողովրդեանն / ի  
թվ(ին) Ռ-ԺԵ (1566 թ.) ի... զ...նս....:



Ջրհոր գյուղի Սք. Աստվածածին եկեղեցին, շինարարական արձանագրությունը և գրչանկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)



Բարեխն գյուղի Սբ. Ստեփանոս եկեղեցին, շինարարական արձանագրությունը և գրչամկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2008, 2019 թթ.)

**ՊԱՀՊԱՆՎԱԾ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱ-  
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԲԱՇԵԾԻ  
(ԲԻԹԼԻՍ) ՆԱՀԱՆԳԻ ԽԼԱԹ ԳԱՎԱՌՈՒՄ**

ա) Սովորդ գյուղի Սբ. Աստվածածին, 1414 թ.


Իշխանանութեան / Ուստիփին շիշակի անեցայ Ս(ուր)ք  
Ա(ստու)ծան յիշակի ի թվին հայից ի ՊԿԳ (1414), /  
Թորոս աշխալուատր յիշ(էցէք) ի Ք(րիստո)ս:

բ) Սեծք գյուղի Սբ. Ստեփանոս եկ., 1663 թ.


Այս եկեղեցիս յիշայիշ(ան)տակ է Կարմուռուն  
Բաղ(ան)ասար ի ժամանակն Արալ խանին, / ի թվին  
ՈՇԺՔ (1663)-ին:

գ) Կուշտիան գյուղի Սբ. Նիկողայոս Հայրա-  
պետ եկեղեցի, 1862/63 թթ.

... յիշատ(ա)կ է կառ(ա)լուակ նորաշէն Ս(ուր)ք /  
Նիկողոս Հայ(ա)լր(ա)պետ օգնական եւ պահ(ա)-  
պան եղիցի, / մաղղ(ա)սի Սահ(ա)կին, Նազարին,  
Զաքարին, Վարդանին, Սելյոնին, Հօվեին, թվին  
ուրա (1862-63 թթ.):



Սովորդ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին, շինարարական արձանագրությունը և գրչամկարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2007, 2019 թթ.)



Սեծք գյուղի Սբ. Ստեփանոս և Կուշտիան գյուղի Սբ. Նիկողայոս եկեղեցիների շինարարական արձանագրությունները և գրչամկարները (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2007, 2019 թթ.)

## ԱՏՈՒՅՔ ԹՎԱԳՐՎԱԾ ԱՄԵՆԱՀԻՆ ԽԱԶՔԱՐԸ՝ 866 թ.


Սամվել Կարապետյան

Գիտական աշխարհին հայտնի թվագրված խաչքարերից հնագույնը վերաբերում է 876 թ., որի մասին առաջին անգամ հրապարակել ենք 1986 թ.<sup>1</sup>:

Արարատի շրջանի Հորթում գյուղատեղիի կիսավեր եկեղեցու մոտ գտնվող և բացառիկ արժեք ունեցող այդ խաչքարին իր հնությամբ զերազանցեց Արցախի Հանրապետության Սարտակերտի

շրջանի Վարդուհաս գյուղի Եղցու կտորե մատուցի գերեզմանոցում մեր կողմից հայտնաբերված մեկ այլ խաչքար: Այն Հորթում գյուղատեղի՝ մեզ հայտնի ամենահին խաչքարից հին է 10 տարով և ունի յորտողանի հետևյալ արձանագրությունը:

*Թիւմ ՅԺԵ (866) էր, / եւ՝ Սարգիս, / կա(ս)գմեցի  
զիս/աչս, որք էրկրպագէթ, յաղաւըս / յիշեցէր:*



<sup>1</sup> Կարապետյան Ս., Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Արարատ» (շրջանային թերթ), 1986, № 151, 20 դեկտեմբերի, էջ 3: Տես նաև նոյնի՝ Ամենահին թվագրությամբ նորահայտ խաչքարը, «Էջմիածն», 1987, Ե-Զ, էջ 80-81:

866 թ. խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, գրչ.՝ Ռ. Քորթոշյանի)

## ՀԱՆՈՒՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՍԸՐ ՖԻԼԻՊԸ

Բաֆֆի Քորթոշյան

2007 թ. Տարսոնի պատմության թանգարանում ցուցադրվում էր հայկական արվեստում եղակի մի տապանաքար: Այն հայտնաբերվել է քաղաքի Ուլու ջամի մզկիթի արևմտյան կողմում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ<sup>1</sup>:

1579 թ.<sup>2</sup> կառուցված մզկիթը վեր է խոյացել Սր. Պետրոս և Սր. Սոփյա եկեղեցիների<sup>3</sup> տեղում, իսկ նրանց երբեմնի գոյության քարենեն վերջին վկան այս հուշարձանն է:

Ուղղանկյունաձև տապանաքարը (չափ.՝ 170 x 46 x 40 սմ)<sup>4</sup>, որը կերտվել է սրբ Ֆիլիպի հիշատակին, ունի հայերեն ընդարձակ և բովանդակալից արձանագրություն.

Սա է տապան սիր Ֆիլիպին եւ պարծանաց ճիատորին, որքի ի փառաց խաչին, խոցաւ ի մէջ պատերազմին, հանգեաւ հայոց մեծաց ի թվին ի ՀՃ եւ ի Ա (1352)-ին, ամիս յուլիս Բ (2)-ին, ողորմեսցի Ք(րիստո)ս սմին, ամէն:

Հրատ. *Rapti I.*, Աշվ. հոդվ., էջ 76:

Տարբերցում. **Ուսապիի** մոտ «ի ՀՃ եւ ի Ա-ին»-ի փոխարեն՝ «ի ՀՃ եւ ի սմին»:

Ո՞վ է ծիավոր սրբ Ֆիլիպը և ո՞ր ժամանակաշրջանում է ապրել: Այդ մասին հստակ տեղեկու-

<sup>1</sup> **Rapti I.**, Note sur une pierre tumulaire découverte à Tarse. L'épitaphe arménienne de sire Philippe, mort en 1351, «Cahiers Archeologiques», № 54, 2011-2012, p. 75. Ըստ Ռապտիի՝ տապանաքարը հայտնաբերվել է 2009 թ., սակայն այնոք է նշել, որ 2007 թ.՝ մեր այցելության ժամանակ, այն արդեն գտնվում էր թանգարանում:

<sup>2</sup> Նոյն տեղում: Ըստ Ռապտիի՝ շինարարության ժամանակ տարածքի դրս են եկեղեց մարդկանց բազմաթիվ ուլորմեր, ուրներ հուշում են, որ տեղում եղել է գերեզմանոց կամ եկեղեցու գավիր, որտեղ ամփոփվել են կարևոր անձինք:

<sup>3</sup> Եկեղեցիները կառուցվել են Կիլիկիայի հայկական քաղաքության ժամանակաշրջանում: Այսուհետ 1198 թ. քաղաքությունը մինչև Տարսոնի ամկոմը 1360 թ. (**Rapti I.**, Աշվ. հոդվ., էջ 81): Ըստ բուրքական աղյուրների՝ վերոնշյալ մզկիթը կառուցվել է 788 թ.՝ մահմետական խալիֆ Հարուն ալ Ռաշիդի ժամանակաշրջանում, իսկ Տարսոնի նվաճումից հետո՝ 962 թ., բյուզանդացիներն այն վերածել են եկեղեցու: Ավելի ոչ 1360 թ., եթե մամլուքները նվաճել են քաղաքը, այն նորից դարձել է մզկիթ: 1362-1363 թթ. կցվել է մինարեն: Հիմնովին վերակառուցվել է 1579 թ. («Yeni Şafak», 03 Temmuz, 2016):

<sup>4</sup> **Rapti I.**, Աշվ. հոդվ., էջ 75:



Սըր Ֆիլիպի տապանաքարը Տարսոնի պատմության թանգարանում (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2007 թ.)

թյուններ չունենք, սակայն սրբ կոչումը վստահաբար ցոյց է տալիս նրա ազնվական լինելը: Ըստ Ա. Սուրբասյանի՝ «Կիլիկիայում բոլոր դասերը, այդ թվում նաև ազնվականությունը, տրոհվում էին խավերի կամ կարգերի: Բարձրագույն կարգի ֆեռդալների թվին դասվում էին թագավորը, Ի կարգի բարոնները կամ «քարոնների քարոնները», այսինքն՝ մեծ իշխանները, II կարգի բարոնները կամ իշխանները: Ստորին կարգի ֆեռդալների խմբի մեջ մտնում էին «ձիավորները» կամ առաջին դասի ապետները ...»<sup>5</sup>:

Եվ ուրեմն սրբ (քարոն) Ֆիլիպը, որպես հեծելազորի անդամ, եղել է Կիլիկիայի հայկական թագավորության ստորին կարգի ֆեռդալներից, որոնցից էր կազմված պետության բանակի հիմքը՝ հեծելազորը. «Հեծելազորը պահպանելով բուն Հայաստանի «Հայոց հեծյալի» այրուձիու ավանդույթներն ու սովորույթները, նրա կազմում ծառայողները կոչվում էին ձիավորներ և շատ կողմերով նման էին ասպետներին: Հայոց հեծելազորը բաղկացած էր ազատներից, մանր հողատերերից և այլ ազնվականներից...»<sup>6</sup>:


Պետության ձիավորների դասի վերաբերյալ ապելի հստակ տեղեկություններ է փոխանցում Դ. Ալիշանը: Ըստ նրա՝ դրանք Կիլիկիայի ամենանշանավոր և հարուստ խավից էին. «Նշանաւորք քան զամենայն դասս մարդկան ի հարստութեան Սիսուանեայց, և հաղորդք քաղաքական և յաւէս զինուորական պատույ, այլ և մասնակիցը եկեղեցականին, էին Զիաւորք, ոչ սոսկ հեծեալք, այլ աւատական հրահանգօր կարգեալ ասպետք, ըստ իին հայկական կամ պարսկի կոչման, այլ յայս ժամանակի Զիաւորք առձայնեալք, որպես առ արևմտեայն՝ նոյնպէս և մերքս առ յոյժ կարևորք և անհրաժեշտ համարեալք՝ ի պահպանութիւն և ի պարծան պետութեան, որպես զի հարկ էր ամենայն պայազատաց թագաւորաց և պարոնայց՝ Զիաւորս լինել, և ընդունել ի պայմանեալ հասակի տիոց՝ մեծաւ հանդիսի՝ զաստիճանն զայն, յիւրաքանչիւր վեհից, որոց՝ լիձ ձիաւոր կոչէին»<sup>7</sup>:

Ֆիլիպն ապրել և մարտնչել է այն ժամանակաշրջանում, երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը գոյապայքար էր մղում ընդդեմ մահմեդական պետական կազմավորումների: Հայտնի է, որ «Կոստանդին Դ-ի (1345-1363) իշխանության ժամանակ Կիլիկիայի միջազգային դրույթունը խիստ վատացավ: Եզիապոսի մամլուքների և թուրքմենների չդադարող հարձակումները մշտական սպառնալիք էին ստեղծում Կիլիկիայի հայկական

<sup>5</sup> Սորիհասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 116:

<sup>6</sup> Հայ ժողովով պատմություն (այսուհետ՝ ՀԺՊ), հ. 3, Երևան, 1976, էջ 753:

<sup>7</sup> Ալիշան Դ., Սիսուան. Համագրության Հայկական Կիլիկիոյ եւ Լեռն Մեծագործ, Վեմենիկ, 1885, էջ 486:





Սբր Զիլիակի պատկերի գումավորումն ըստ առկա տեղեկությունների



ԺԴ Դարի մամրանկարներ

թագավորության բուն իսկ գոյությանը»<sup>8</sup>: Ամենայն հավանականությամբ էլ Վերոնչյալ հարձակումների ժամանակ՝ Տարսոն քաղաքը պաշտպանելիս, նա հերոսարար զրիվել է: Այդ տարիների իրավիճակի մասին կարդում ենք. «Օգտվելով Կիլիկյան Հայաստանի ծանր իրավիճակից՝ 1346 թ. մամրությունները և բուրքմենները համատեղ ուժերով հարձակվեցին նրա վրա: Հայերը մեծ դժվարությամբ ետ մղեցին թշնամիներին և ազատազրեցին Կապան քերդը: 1347 թ. խոշոր բանակով Կ. Հ. Անդրխումեց Եղիպատոսի սուլթանությունը: Հայերը զորքերը Լիպարիտի գլխավորությամբ կարողացան ջախջախել թշնամու առաջապահ զնիքները, իսկ աշնանը Կիպրոսի նավատորմի օգնությամբ ազատազրեցին Այսուը: Եղիպատոսի սուլթանը Հալեպի ամիրայի ու Իկո-

<sup>8</sup> ՀԺՊ, հ. 3, էջ 777:

նիայի թուրքմենների գինակցությամբ վերսկսեց պատերազմը Կ. Հ-ի դեմ: Եզիփոսուր գրավեց Այասը, թուրքմենները՝ Պապեռոն թերդը, Հալեպի ամիրան՝ արևելյան շրջանները: Օգտվելով 1348-49 թթ. Եզիփոսում ծավալված գահակալական կոխվներից՝ Կոստանդին Դ.-ն Հռոդոսի Ս. Հովհաննեսի օրդենի ասպետների օգնությամբ ջախչախտեց Հալեպի ամիրայի ասպատակից զորամասը: Մահմեդական ամիրայությունների հարձակումները պարբերաբար կրկնվեցին նաև 1350-ական թթ.: 1355 թ. հայերին հաջողվեց ես մղել Տարսոն և Արանա քաղաքների վրա կատարված եզիփոտական հարձակումը: Սակայն 1360 թ. մամլուքները նվաճեցին Դաշտային Կիլիկիան՝ Տարսոն և Աղանա քաղաքներով»<sup>9</sup>:

Եզակի արժեք է տապանաքարի վրա փորագրված սրբ Ֆիլիպի պատկերը, որը հնարավոր եղավ գունավորել ըստ Կիլիկիայի հեծյալ զինվորնե-

րի մասին գրականության մեջ առկա տվյալների և ձեռագրերի մանրանկարների: Ահա դրանցից մի քանիսը:

«Նշան Զիատրացս էր խաչ կարմիր՝ զպատկեր Սրբոյն Վլասայ ի մէջ ունելլով. զգեստ՝ ասուեայ սպիտակ: Զպատկերս երկոցուն և դասուց անուանեալ հայ ծիատրացս՝ ընծայէ ոմն յասպետագիր հերինակաց, որ և մեծ խնամով ասէ հետախուզեալ և ճշգրտագոյն զձևսն աւանդեալ, որպիսի է աշխարհիկ կամ զինուտրական Զիատրն ի հանդիպակայ պատկերիդ: Այլ որ կապուտագոյն ասէ զիանդերձսն, և զիսաշն ոսկեղեն առ հայկական առիւծու»<sup>10</sup>, «Կիլիկիայի հեծյալ զինվորները հանդերձավորվում էին խաչակիրների նման: Նրանք զիսին կրում էին սաղավարտ, հազնում զրահ, խոկ զրահի վրայից՝ բրոյա պատմուճան առջևից խաչի նշանով»<sup>11</sup>, «Կրել են կապույտ համազգեստ, ուկե խաչի և հայկական այրուծին նշաններով»<sup>12</sup>:

<sup>9</sup> Հայկական սովետական համրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 412:




<sup>10</sup> Ալշան Ա., նշվ. աշխ., էջ 487:


<sup>11</sup> ՀԺԹ, հ. 3, էջ 754:

<sup>12</sup> Հարույրունյան Գ., Մեր հայրանակները, հ. Գ, Երևան, 2011, էջ 314:

# ԱՐԵԱԿԻ ՄԱՆՐԱՏԵՂԱՆՈՒՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ՝ ԾՈՒՐՔ ՅՈ ՏԱՐՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՀՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՐԳԱՍԻՔ ԱՅՍ ԲԱՇԱՌԻԿ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՀՐԱՏԱՐԱԿԻ 2021 թ.





CALOUSTE GULBENKIAN  
FOUNDATION

ՏԻԱԳԻՐԻ ՀՅԱԼ  
ՅՈՒՆԻՎԵՐՍԻ  
ԳԱԼՈՒՄ  
ԿԱՌՈՒՏԱԿԵԱՆ  
ՅԻՒՆԻՎԵՐՏԻ

ԱՐԱՐԱՏԻ ԱՐԱԿՈՎԻԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՅՈՒՆԻՎԵՐՏԻ  
ՀՀ ԿԳԿ  
ՆԱԽԱՐԱՐԻ ԹԵԶՈՒՆ

ISSN 1829-2003



9 771829 200001